

1933

hwykprkG

Ch.

208.1
U-19

1933

1384-62

ՍԱՂՄԱՍ

Դ Ա Ի Թ Ի

Կարառ չի հասկրցող եղբայրներուն հա-
մար զգուշութեամբ Երբայեցերէ-
նէն պարզ աշխարհաբառի
թարգմանվեցաւ :

Երեւոյտ + եղ, երեւ - բե - բեւ 2004

Ի ՉՄԻԻՌՆԻԸ

Ի Տարածել Կրօնիկեմոս Կաթիլիմի :



ՆՕԼՆԵՐԻ ԹՎԻԹԻԻՆ

Ահա ըստ բառը Երբայեցոց Սաղմոսին մե-
 ջը շատ անգամ կրպատասչի, ու անոր հա-
 մար մենք ալ մեր թարգմանութեանը մէջ
 այնպէս դրինք. թարգմանիչները աս բա-
 սին ստոյգ նշանակութիւնը չի կրնացին
 գիտնալ, թէպէտ երգեցողները աս բառը
 առանց տարակուսի իրենց երգերուն հա-
 մար կրգործածէին. այսինքն, կամ իրենց
 ձայնը կտրելու համար, կամ բարձրացու-
 նելու համար, և կամ ձայներնին իջեցու-
 նելու համար: Այս և կան ուրիշ բառեր
 ալ որ Սաղմոսներուն գլուխներուն վրայ
 կրտեսնանք. ինչպէս, "ՆՆՆՆ", "ՆՆՆՆ",
 և այլն, որ հաւանական կարծեօք
 երաժրչութեան գործիքներուն ոմանց
 անուններն են:

ՍԵՂՍՐԱՍ . Ը :

Երանի՛ ան մարգուն՝ որ ամբարիշտնե-
րուն խորհուրդը չերթար, ու մեղա-
ւորներուն ճամբուն մէջ չի կենար, ու
ծաղը բնողներուն նստած տեղը չի նստիր .

2 Հապա անոր կամքը Ըստուծոյ օրէն-
քին մէջն է . ու գիշեր ցորեկ անոր օրէնքին
վրայ կրմաածէ .

3 Եւ պիտի ըլլայ անիկա ջուրերուն
գնացքները տնկրված ծառի մը պէս, որ
ժամանակին իր պտուղը կուտայ . ու ա-
նոր տերեր չի պիտի թափի, և ինչ բան
որ ընէ պիտի յաջողվի :

4 Ըստանկ չեն ամբարիշտները . հապա
մղեղին պէս, որ կը ցրվէ հովը :

5 Ըսոր համար ամբարիշտները դատաս-
տանին կայնելու չեն . ու ոչ մեղաւորները
արդարներուն ժողովքին մէջ :

6 Ա՛սան զի Տէրը կը ճանչնայ արդար-
ներուն ճամբան . բայց ամբարիշտներուն
ճամբան պիտի կորսըվի :

ՍԱԳՄՈՍ Ի :

1 Անշուհ չեթանոսները խռովութիւն կընեն, ու ժողովուրդները պարսպ բան կըմտմբտան .

2 Երկրի թագաւորները ինքրզինքնին կըհաստատեն, ու իշխանները իրարու հետ խորհուրդ կընեն Տէրօջը դէմ, և անոր () ծեալին դէմ,

3 Ի՞նչ էլ՛ Վոտրենք անոնց կապերը . ու մեզմէ ձգենք անոնց լուծը :

4 Երկինքը բնակողը անոնց վրայ պիտի ծիծաղի . Տէրը պիտի ծաղը ընէ անոնք :

5 Ի՞նչ ժամանակը պիտի խօսի անոնց իր բարկութիւնովը, և իր սրամտութիւնովը պիտի սասանեցունէ անոնք . — ոչորէ չէ՛ :

6 Ես օծեցի թագաւորս իմ սուրբ լեռանս Աիօնին վրայ :

7 Ըրամանը պիտի պատմեմ . Տէրը ինծի ըսաւ՝ 'Վաւն իմ՝ Արդիս ես . ես քեզ այսօր ծնայ .

8 Խնդրէ ինծմէ՛, ու չեթանոսները քեզի ժառանգութիւն պիտի տամ, ու երկրին ծայրերը քեզի ստացուածք .

9 Պիտի հովուես անոնք երկաթէ գաւազանով, բրուտի ամանի պէս պիտի փշրես անոնք :

10 Ի՞պա հիմայ՝ թագաւորներ, միտվնիդ առէ՛ք . երկրի՛ դատաւորներ, խրատվեցէ՛ք :

11 Ա՛յ ախտով ձե՛ծ ծառայեցէք Տէրոջը , ու
 դողալով մե՛ծարեցէք :

12 Արդի՛ն համբուրեցէ՛ք՝ որ չի բարկա-
 նայ ու ճամբուն մէջ չի կորսւալիք , եր-
 բոր անոր բարկութիւնը քիչ մը բորբոքի .
 երանի՛ անոնց ամէնուն որ անոր կը յուսան :

ՍԱՂՄՈՍ Գ :

Սաղմոս Գ-ւեր , իր Աբիսուղոս սրբոյն
 իրեւելն իսրայէլ ժամանակը :

Ո՛վ Տէր , իմ թշնամիներս որչափ շատ-
 ցան . շատերը կան որ իմ վրաս կեղևն :

2 Հատերը կրսն իմ անձինս համար ,
 թէ Ասոր փրկութիւն չի կայ Աստուծակն :

Սէւայ :

3 Ի՛սայց՝ ո՛վ Տէր , դուն ես իմ վա-
 հանս . իմ փառքս , և իմ գլուխս բարձրա-
 ցունողը :

4 Ի՛մ ձայնովս Տէրոջը կանչեցի , ու իր
 սուրբ լեռնէն ինձի պատասխանեց : Սէ-
 վայ :

5 Ես պահկեցայ ու քրնացայ . արթնցայ ,
 վասն զի Տէրը իս պաշտպանեց :

6 Ես չի պիտի վախնամ բիւրաւոր ժո-
 ղովուրդներէն , որ շորս կողմս իս պատե-
 ցին :

7 Ելի՛ր Տէր , փրկէ՛ իս՝ ո՛վ իմ Աստ-

ուածս, վասն զի դուն զարկիր ամէն իմ
 թշնամիներուս թուշք: մեղաւորներուն
 ակռաները փշրեցիր:

8 Փրկութիւնը Տէրոջն է. քու օրհնու-
 թիւնդ քու ժողովուրդիդ վրայ ըլլայ:
 Ահլայ:

ԱՇԴՄՈՍ Գ:

Վեհաոր երգեցողին՝ Ալեհօ՛րէ վրայ Սողոմոն
 Դաւիթ:

Վանչելու ատենս ինծի պատասխան տուր
 ո՛վ Աստուած արդարութեանս, նեղու-
 թենէս իս ընդարձակեցիր. ողորմէ ինծի,
 ու լէ իմ աղօթքիս:

2 Արդոց որդիներ, մինչև երբ իմ
 փառքս ամօթի իւրաքանչէր, ու փուճ
 բան կրտսիւք, եւ ստութիւն կրվնտուք:
 Ահլայ:

3 Դայց գիտցէք որ Տէրը իր սուրբը
 ընտրեց իրեն համար. Տէրը պիտի լէ իրեն
 կանչելու ատենս:

4 Սասանեցէք ու մեղք մի՛ գործէք. խօ-
 սեցէք սրտերնուդ հետ անկողիններնուդ
 վրայ, ու լսեցէք: Ահլայ:

5 Արդարութեան զօհերը մատուցէք,
 ու Տէրոջը յուսացէք:

6 Ատները կրտսն թէ՛ Ա՛յլ պիտի ցու-

ցրնէ մեզի բարութիւն . ով Տէր , քու երեսիդ լոյսը մեր վրայ ծագէ :

7 Աւրախութիւն տըւիր իմ սրտիս , անոնց ցորեններուն ու գինիներուն առատութեան ժամանակէն էվէլ :

8 Խաղաղութիւնով պիտի պառկիմ ուքնանամ . վասն զի դուն միայն՝ ով Տէր , անպահապարտութիւնով իս կրքնակեցունես :

ՍՆՂՍՈՍ • Ե :

Վե՛րաւոր երգեցողէն՝ Եհիւօրէն Վարդան Վարդէն :

Ո՛վ Տէր , ականջ դիր իմ խօսքերուս . միտքդ առ իմ աղաղակս :

2 Ս'իտք դիր իմ կանչելու ձայնիս , ով իմ թագաւորս ու Մատուածս . վասն զի ես քեզի կաղաչեմ :

3 Ո՛վ Տէր , անտրվանց պիտի լսես իմ ձայնս . անտրվանց պատրաստ պիտի ըլլամ քեզի ու սպասեմ :

4 Ս'ասն զի դուն անօրէնութիւն ուղող Մատուած չես . չարք քու քովդ չի պիտի բնակի :

5 Հպարտները քու աչվ ըներուդ առջին չի պիտի կենան . բոլոր անօրէնութիւն գործողները կատես :

6 Սուտ խօսողները կը կորսընցունես .

Տէրը մարդասպան ու նենգաւոր մարդը կատէ :

7 **Սակայն** ես քու ողորմութեանդ շատութիւնովը պիտի մտնամ քու տունդ . վախովդ երկիրպագութիւն պիտի ընեմ քու սուրբ տաճարիդ :

8 **Ո՛վ Տէր**, քու արդարութիւնովդ ինծի առաջնորդ եղիր թշնամիներուս համար . քու ճամբագ շիտկէ իմ առջիս :

9 **Ս** ասն զի անոնց բերնին մէջ ճշմարտութիւն չի կայ . անոնց սիրտերը չար են . բաց գերեզման է անոնց կոկորդը . իրենց լեզուովը նենգաւոր եղան :

10 **Ո՛վ Աստուած**, յանցաւոր հանէ անոնք . իրենց խորհուրդներովը թող իյնան . իրենց մեծ ամբարշտութիւններուն համար հալածէ անոնք . վասն զի քեզի դէմ ապստամբեցան :

11 **Իայց** ամէն քեզի յուսացողները ուրախ թող ըլլան . յաւիտեան թող ցնծան , ինչու որ դուն անոնք կրպաշտպանես . և քու անունդ սիրողները քեզմով թող զբւարձանան :

12 **Ս** ասն զի դուն պիտի օրհնես արդարը՝ ո՛վ Տէր . բարի կամեցողութիւնով որպէս թէ վահանով մը՝ անոր չորս կողմը պիտի պատես :

ՄԵԳՆՈՒԹՅՈՒՆ . Գ :

Գլխաւոր երգեցողին՝ Նիկոլայի շնորհակալութիւնով :
 Նիկոլայի շնորհակալութիւնով :

Ո՛վ Տէր, քու սրգողելովդ իս մի՛ շախեր,
 ու բարկութիւնովդ իս մի՛ խրատեր :

2 **Ո՛վ Տէր**, ողորմէ ինձի՛ վասն զի տկար
 եմ ես . բժշկէ իս՝ ո՛վ Տէր, վասն զի սասա-
 նեցան սկորներս :

3 **Ի՛մ անձս** խիտ սարսափեցաւ . և
 դուն՝ ո՛վ Տէր, մինչև ե՞րբ :

4 **Գարձիր՝ ո՛վ Տէր**, փրկէ իմ անձս .
 ազատէ զիս քու ողորմութեանդ համար :

5 **Վասն զի մահուան մէջը քեզ յիշա-**
 տակել չի կայ . գերեզմանին մէջ ո՛վ քեզի
 շնորհակալութիւն պիտի ընէ :

6 **Նոգնեցայ ես հառաչանք ընելով** . ա-
 մէն գիշեր առատութեամբ լուացի իմ ան-
 կողինս . արցունքներովս թրջեցի իմ մա-
 հիձս :

7 **Տրամութիւնով աչքս մաշեցաւ** . հին-
 ցաւ ամէն թշնամիներուս համար :

8 **Ետ կեցէք ինձմէ ամենքդ**, որ անօրէ-
 նութիւն կրգործէք . վասն զի իմ լալուս
 ձայնը Տէրը լսեց :

9 **Ի՛մ աղօթքս Տէրը լսեց** . Տէրը ընդու-
 նեց իմ խնդրուածքս :

10 Թող ամչնան ու խիստ դարհուրին իմ ամէն թշնամիներս . ետ դառնան ու շուտով թող ամչնան :

ԱՇԴՄՈՍ Է :

Եւրոպայի Գոթերը . որ երգէց Տէրոջը Ինչ-նչամէնէան Քոչմէն Խօսքն Համար :

Ով իմ Տէր Մատուածս , քեզի կը յուսամ , փրկէ իս իմ ամէն հալածողներէս , և ապրեցուր իս :

2 Չըլլայ որ առիւծի պէս փառասելով պատուէ իմ անձս , և աղատող մը չըլլայ :

3 Ով իմ Տէր Մատուածս , թէ որ աս բանը ըրի նէ , կամ թէ իմ ձեռքերս անօրէնութիւն կայ նէ ,

4 Իարեկամիս թէ որ շարութիւն ըրի նէ , ու իմ առանց պատճառի թշնամիս աշխարհապահեցի նէ ,

5 Թշնամին թող հալածէ իմ անձս և հասնի անոր . ու երկրի վրայ կոհկուտէ իմ կեանքս , ու իմ փառքս հողի վրայ բնակեցունէ : Սէլայ :

6 Ելիր ո՛վ Տէր , քու բարկութիւնովդ թշնամիներուս կատաղութիւններուն դէմ բարձր եղի . ու արթնցիր ինծի համար . հրաման ըրէ դատաստանի :

7 Եւ ժողովուրդներուն ժողովը չորս

կողմից պիտի պատեն . անոնց համար գէպի
բարձրը դարձիր ։

8 Տէրը պիտի դատէ ժողովուրդները .
նով Տէր , իմ արդարութեանս ու իմ ան-
մեղութեանս նայելով իմ դատաստանս տես ։

9 Սեղաւորներուն չարութիւնը թող
հատնի , բայց դուն հաստատէ արդարը .
վասն զի դուն՝ նով արդար Մատուած , կը
քննես սիրտերը ու երիկամունքները ։

10 Իմ պաշտպանութիւնս Մատուածմէ է ,
ան որ կապրեցունէ սրտով շիտակ եղող-
ները ։

11 Մատուած արդար դատաւոր է . ու
Մատուած Բղարիւն ամէն օր բարկա-
ցած է ։

12 Թէ որ ան չի դառնայ նէ , իր
սուրը պիտի սրէ , աղեղը լարեր է ու պատ-
րաստեր է ։

13 Աւ մահու գործիքները անոր համար
պատրաստեր է . իր կրակոտ նետերը շի-
ներ է ։

14 Մահ անօրէնութեան տղաբերքի
ցաւը բռնեց ան , ու յղացաւ չարութիւնը
և ծնաւ սուտը ։

15 Զոր փորեց ու բացաւ , և ան շինած
փոսին մէջը ինքը պիտի իյնայ ։

16 Իր չարութիւնը գէպի իր գլուխը
պիտի դառնայ , ու իր բռնութիւնը իր գա-
գաթին վրայ պիտի իջնայ ։

17 Եւ որ հակաւ պիտի ըլլամ Տէրօջը իր արդարութեանը համար, ու սաղմոս պիտի երգեմ՝ բարձրեալ Տէրօջը անունին :

ԱՐԱՄՈՍ . Ը :

Վեհա՛նք երգեցողէն կեկեկեկե Վեհ , Առաջ
 Իսս Ղաւ-լէ :

Ո՛վ Տէր՝ մեր Տէրը , ինչպէս փառաւոր է քու անունդ բոլոր երկրի վրայ , որ քու փառքդ երկինքներուն վրայ դրիր :

2 Անկանց ու կաթնկեր տղայոց բերնէն գոլութիւնդ կատարեցիր քու թըշնամիներուդ համար , որ թշնամին և վրէժ-խընդիր ըլլողները լուցունես :

3 Երբոր տեսնամ երկինքդ՝ քու մատներուդ գործքը , լուսինը և աստղերը , որ դուն ստեղծեցիր :

4 Մարդը ինչ է որ դուն կրճիշես անիկա . կամ թէ մարդու որդին , որ դուն անոր տես կերթաս :

5 Քիչ մը պղտիկ ըրիր անիկա հրեշտակներէն . փառքով ու պատիւով պսակեցիր անիկա .

6 Չեռքով շինած բաներուդ վերակացու դրիր անիկա . ամէն բանը անոր ոտքին տակը դրիր .

7 Աշխարհները ու արջառները բոլորը . նաև վայրի անասունները .

8 Երկինքի թռչունները , ու ծովուն ձուկերը՝ որոնք կը պարտաին ծովուն ճամբաներուն մէջը :

9 Այլ Տէր՝ մեր Տէրը , ինչպէս փառաւոր է քու անունդ բոլոր երկրի վրայ :

ՍՄՂ ՄՈՍ . Թ . :

Գլխաւոր էրգեցողն Մարտիրոսն Վերջ
Սուրբ Գաւթի :

Շնորհակալ պիտի ըլլամ Տէրոջը բոլոր սրտովս . քու ամէն սքանչելիքներդ պիտի պատմեմ :

2 Աւրախ պիտի ըլլամ ու ցնծամ քեզմով . սաղմոս պիտի երգեմ քու անունիդ՝ ու խորհրդեմ :

3 Թշնամիներս ետ դառնալու ատենին՝ քու երեսէդ պիտի խնան ու կորսրվին :

4 Ասան զի դատաստանս և իրաւունքս դուն տեսար . աթոռին վրայ կընստիս արդարութեան դատաւոր :

5 Հեթանոսները շախեցիր . ամբարիշտը կորսընցուցիր . անոնց աննունները աւրեցիր յաւիտեանս յաւիտենից :

6 Թշնամիին աւերմունքները բոլորովին կատարեցան յաւիտեանս . քաղաքները աւրեցիր . անոնց յիշատակը իրենց հետ կորսրվեցաւ :

7 Բայց Տէրը յաւիտեան կըմնայ . պատ-
րաստեց իր աթոռը դատաստանին համար :

8 Աւ ինքը պիտի դատէ աշխարհը ար-
դարութիւնով . ժողովուրդներուն դա-
տաստան պիտի ընէ ուղղութիւնով :

9 Տնանկին ալ ապաւէն պիտի ըլլայ Տէ-
րը . ապաւէն նեղութեան ժամանակները :

10 Եւ անոնք որ քու անունդ գիտեն
քեզի պիտի յուսան . վասն զի չի թողուցիր
զանոնք՝ ո՛վ Տէր , որ քեզ կը փնտրուն :

11 Սաղմոս երգեցէք Տէրօջը որ Աիօնը
կը բնակի . ժողովուրդներուն պատմեցէք
անոր ըրածները :

12 Ասան զի արեան վրէժխնդիրը յի-
շեց անոնք . չի մոռցաւ ողորմելիներուն ա-
ղաղակը :

13 Ո՛վ Տէր , ողորմէ ինձի , տես իմ
թշնամիներուս Գոմձ նեղութիւնը , ո՛վ
իմ մահուան դռներէն վերցունողս :

14 Անանկ որ քու ամէն գովութիւն-
ներդ պատմեմ Աիօնի աղջկանը դռնե-
րուն մէջը . պիտի ցնծամ քու փրկութիւ-
նովդ :

15 Հեթանոսները իրենց շինած փոսին
մէջը ընկղմեցան . իրենց դաղտուկ լարած
որոգայթին մէջը իրենց ոտքը բռնված է :

16 Տէրը ճանչցրված է , Խնչո՛ւ որ դա-
տաստան ըրաւ , մեղաւորը իր ձեռքին
գործքերովը որոգայթը կիյնայ : Հի՛մ-
յօն . Սէլայ :

17 Մեղաւորները դժոխքը պիտի դառնան , եւ ամէն ազգերը՝ որ Աստուած կը մոռնան :

18 Տայց աղքատը չի պիտի մոռցըվի մինչև վերջը . տնանկներուն յոյսը բնաւ չի պիտի կորսըվի :

19 Ելիր Տէր , որ չի զօրանայ մարդը . հեթանոսները թող դատովին քու առջիդ :

20 Ո՛վ Տէր , անոնք վախոցուր . հեթանոսները թող ճանչնան որ իրենք մարդ են : Սէւայ :

ՍԵՂՄՈՍ Ժ :

Ո՛վ Տէր , ինչո՞ւ հեռուն կը կենաս . նեղութեան ժամանակները անտես կըլլաս :

2 Ամբարիշտը ամբարտաւանութիւնով աղքատը սաստիկ կը հալածէ . իրենց մըտմը տացած նարքներուն մէջը թող բռնըվին :

3 Ասան զի մեղաւորը իր անձին ցանկութիւնովը կը պարծենայ . ու Տէրը փուճ համարող զրկողութիւն ընողը կը դովէ :

4 Ամբարիշտը իր երեսի բարկութեանը համար Աստուած չի փնտրուեր . բոլորովին իր մտքին մէջը Աստուած չի կայ :

5 Ամէն ժամանակ անոր ճամբաները պինտ են . քուկին դատաստաններդ անոր առջևէն բարձրված են . իր ամէն թշնամիներուն վրայ կը փչէ :

6 Իր սրտին մէջ ըսաւ , թէ՛ Չի պիտի սասանիմ . վասն զի ազգէ մինչև ազգ նեղութեան մէջ չի պիտի ըլլամ :

7 Ընոր բերանը անէծքով ու նենգութիւններով ու հարստահարութիւնով լեցուն է . անիրաւութիւն ու զրպարտութիւն անոր լեզուին տակն են :

8 Գնդերուն դարանին տեղերը կրնասի . գաղտուկ տեղերը անմեղը կապաննէ . անոր աչքերը անանկներուն գաղտուկ կը նային :

9 Գաղտուկ տեղեր դարանակալ կըլլայ՝ ինչպէս առիւծը իր բնակարանին մէջը . դարան կը գործէ աղքատը յափշտակելու համար . աղքատը կը յափշտակէ իր որդայթը ձգելով անիկա :

10 Աւ սխմըված կըրպակի , և տնանկները անոր ճանկերուն ներքեը կիյնան :

11 Իր սրտին մէջը ըսաւ , թէ՛ Մտուած մոռցեր է . իր երեսը ծածկեց որ բնաւ չի տեսնայ :

12 Ելիր ո՛վ Տէր Մտուած , ձեռքդ վեր վերցուր . մի՛ մոռնար անանկները :

13 Ինչո՞ւ համար ամբարիշտը կանարգէ զՄտուած . իր սրտին մէջը ըսաւ , թէ՛ Չի պիտի քննես :

14 Գուն տեսար , ինչու որ՝ կրնայիսկոր ցաւին ու նեղչութեանը , քու ձեռքովդ փոխարէն հատուցանելու համար . աղքատը

ինքը զինքը քեզի կը յանձնէ . որքին օգնա-
կանք դուն ես :

15 Սեղաւորին բազուկը կտորէ . ու չա-
րին անօրէնութիւնը փրնտրուէ ճնշուող չի
գտնաս :

16 Տէրը յաւիտեանս յաւիտենից թա-
գաւոր է . չեթանոսները կորսը ված են անօր
երկրէն :

17 Տնանկներուն ցանկութիւնը լսեցիր՝
ով Տէր . անոնց սիրտերը պիտի հաստա-
տես , ու քու ականջդ պիտի տաս ,

18 Արքին ու տնանկին դատաստանը
տեսնալու համար , որ երկրին մարդը ալ
անոնք չի վախցունէ :

ՍԵՂԱՎՈՐՈՒ ԺԵ :

Գլխաւոր երգեցողքն , (Սուգոս) Գաւլի :


19335
66
57
7
6
26

Տէրոջը ապաւինեցայ , ի՞նչպէս կըսէք ին-
ծի , թէ՛ թաշունի պէս դէպի ձեր լեռը
թռչէ :

2 Ա՛սան զի ահա մեղաւորները լարեցին
երեւոյ աղեղը . պատրաստեցին նեւերը լա-
րին վրայ , որ մութ տեղը սիրտը շխտակ
եղողներուն նեւին :

3 Թէ որ սիւները աւրը վին նէ , արդա-
րը ի՞նչ պիտի ընէ :

4 Տէրը իր սուրբ անձնակն է . Տէրոջը



աթոռը երկինքն է . անոր աչվըները կը տեսնան . անոր թարթիչները կը քննեն մարդոց որդիները :

5 Տէրը կը քննէ արդարը , բայց իր անձը կատէ ամբարիշտը ու բռնութիւն սիրողը :

6 Սեղաւորներուն վրայ պիտի անձրևէ ծուռումուռ փայլակը , հուրը , և ծծումբը , ու տաք հովը անոնց բաժակին բաժինն է :

7 Բայց Տէրը ոչ արդար է , արդարութեան գործքերը կը սիրէ . անոր երեսը շիտակին կընայի :

ԱՆՂԱՌԱՍ ԺԻ :

Գլխաւոր երգեցողէն Շաբինէի վրայ
Սուգնոս Գաւիէ :

Ո՛վ Տէր՝ փրկէ , վասն զի սուրբ չի մնաց՝ վասն զի հաւատացեալները մարդոց որդիքներուն մէջէն պակսեցան :

2 Ամէն մարդ սուտ կը խօսի իր ընկերին հետ . շողոքորթող պոկունքներով ու կըրկին սրտով կը խօսին :

3 Տէրը պիտի կտրէ ամէն շողոքորթո պոկունքները ու մեծախօս լեզուն :

4 Որ ըսին , թէ՛ Վեզուներովնիս պիտի յաղթենք . պոկունքներնիս մերն է , մեր Տէրը ո՛վ է :

5 Մղքատներուն տառապանքին ..

անանկներուն հեծու թեանը համար՝ հիմայ պիտի ելլամ կրսէ Տէրը . ազատութեան պիտի դնեմ անիկա «ընտր կրօնիչի» :

6 Տէրոջը խօսքերը մաքուր խօսքեր են . ընտրոված ու բովբի մէջ հողէն մաքրոված արծաթի պէս , եօթն անգամ մաքրոված են :

7 Այլ Տէր , դուն պիտի պահես անոնք . պիտի պաշտպանես ամէն մէկը աս աղօթէն մինչև յաւիտեան :

8 Ամբարիշտները չորս կողմը կը պըտըտին , երբոր մարդոց որդիքներուն մէջը աշարգները կը բարձրանան :

ԱՆՉՄՈՍ . ԺԳ . :

Գլխաւոր երգեցողէն , Սողոմոն Գաւլէ :

Այլ Տէր , մինչև ե՞րբ բողոքովին պիտի մոռնաս իս . մինչև ե՞րբ երեսդ պիտի ծածկես ինծմէ :

2 Մինչև ե՞րբ մտքիս մէջը հոգեր , սօրախս մէջը ցաւ դնեմ ամէն օր . մինչև ե՞րբ թշնամիս իմ վրաս կը բարձրանայ :

3 Այլ ու լսէ ինծի ո՞վ իմ Տէր Աստուածս , լոյս տուր աչիւններուս՝ ո՞վ Տէր , որ մահուան քունը չի քնանամ :

4 Թող չըսէ թշնամիս թէ յաղթեցի անոր , իմ լէ՛ք ինծի դէմ կեցողները խընդան իմ սասանելու ատենս :

5 Ես քու ողորմութեանդ յուսացայ ,
քու փրկութիւնովդ իմ սիրտս պիտի ցնծայ :

6 Պիտի երգեմ Տէրոջը , ինչու որ ինձի
բարեբարութիւն ըրաւ :

ԱՆՎՄՈՍ . ԺԳ :

Կալեաւոր երգեցողէն , (Սողոմոն) Կալեալ :

Խենդը իր սրտին մէջը ըսաւ , թէ՛ Լստուած չի կայ . պղծը վեցան , իրենց պիղծ գործքերը ըրին , մէկ մը չի կայ որ աղէկութիւն ընէ :

2 Տէրը երկինքէն նայեցաւ մարդոց որդիքներուն , որ տեսնայ թէ՛ կայ իմաստուն մէկ մը՝ զԼստուած փնտրող :

3 Լմէնքը մոլորեցան՝ մէկ տեղ պղծը վեցան , աղէկութիւն ընող մէկ մը չի կայ , ու մէկ մըն ալ չի կայ :

4 Չե՞ն ճանչնար ամէն անօրէնութիւն ընողները , որ հացը ուտելու պէս իմ ժողովուրդս կուտեն , ու Տէրոջը չեն կանչեր :

5 Լն ատենը շատ պիտի վախնան , երբոր Տէրը արդարներուն ազգին մէջն է :

6 Լղբատին խորհուրդը ամբշջուցիք . սակայն անոր յոյսը Տէրն է :

7 Երանի՛ թէ Աիօնէն գար Իսրայէլին փրկութիւնը . Տէրը իր ժողովուրդը գերութենէն դարձուցած ատենը , Յակորը

պիտի ցնծայ , և Իսրայէլը ուրախ պիտի
լլայ :

ՍԵՂՄՈՍ ԺԵ :

Սողոմոն Գառնի :

Տէ՛ր՝ ո՞վ պիտի կենայ քու վրանիդ մէջը .
կամ ո՞վ պիտի բնակի քու սուրբ լեռանդ
վրայ :

2 Ընմեղու թեամբ գացողը , ու արդա-
րութիւն գործողը , և ճշմարտութիւն
խօսողը իր սրտին մէջը .

3 Ըն որ լեզուովը չի զրպարտեր , ու
դրացիներն չարութիւն չի գործեր , և իրեն
մօտը եղողին դէմ նախատինք չընէր .

4 Ընարգրելած է անոր առջին շարա-
գործը . աստուածաւախները կրփառաւորէ .
երգում կընէ իր դրացիներն ու չի փոխվիր .

5 Իր արծաթը վարձու չի տար . ու ան-
մեղին դէմ կաշառք չառներ . ո՞վ որ ա-
սոնք կընէ՝ յաւիտեան չի պիտի սասանի :

ՍԵՂՄՈՍ ԺԳ :

Երբ Գառնի :

Ո՞վ Ըստուած , իս պահէ . վասն զի քե-
զի յուսացայ :

2 Տերոջը ըսիր է՛ անյս , Գուն ես Տէրս .

իմ բարութիւնս առանց քեզի չի կայ :

3 Երկրի մէջի եզող սուրբերուն ու պատուականներուն՝ անոնց վրայ է իմ բուրբ կամքս :

4 Անոնց ցաւերը պիտի շատնան , որոնք որ ուրիշի մը կարտորան . չի պիտի նուիրեմ անոնց արիւնի նուիրումները . ու անոնց անունները պոկունքներուս վրայ չի պիտի առնեմ :

5 Տէրն է իմ ժառանգութեանս ու բաժակիս բաժինը . դուն իմ վիճակս պիտի պահես :

6 Ա իճակներ ելան ինծի երջանիկ խոյս-լէտն մէջ . իրաւ իմ ժառանգութիւնս ինծի երջանիկ եղաւ :

7 Ե նորհակալ պիտի ըլլամ Տէրոջը որ ինծի համար հոգ տարաւ . գիշերը ևս երիկամունքներս կրխրատնն :

8 Ամէն ատեն Տէրը իմ առջիս դրի . որովհետեւ իմ աջ կողմս է , չի պիտի սասանիմ :

9 Ասոր համար սիրտս ուրախ եղաւ , ու անձս բերկրեցաւ . ու մարմինս ալ յուսով պիտի հանգստանայ :

10 Ա ասն զի իմ անձս դերեզմանին մէջը չի պիտի թողուս . ու քու սուրբիդ ալ ապականութիւն տեսնալ չի պիտի տաս :

11 Աննաց ճամբան ինծի պիտի ցուցը-

նես , երեսիդ առջին լեցուն ուրախութիւն
կայ . քու աջ կողմդ միշտ հաճութիւններ
կան :

ՍԵՂՍՈՍ • ԺԿ :

ԸՆԴԵ՛ ԳՆԱԼԷ՛ :

ՈՎ Տէր , լըսէ արդարութիւնը . մտիկ
ըրէ իմ աղաղակիս . ականջ դիր աղօթ-
քիս , որ խաբերայ շրթունքներով չէ :

2 Վու երեսէդ իրաւունքս թող ելլայ .
աչքերդ շիտակութիւնները թող տեսնան :

3 Փորձես սիրտս՝ գիշեր ատեն քննես .
կրակով փորձես , ու բան մը չի պիտի
գտնաս . միտքս դրի որ բերանս պատուի-
րանազանց չըլլայ :

4 Մարդոց գործքերուն կողմանէ՛ քու
պուկունքներուդ խօսքերովը ես բռնաւորին
ճամբաներէն զգուշացայ :

5 Իմ քայլերս քու ճամբուդ մէջը
պաշտպանէ , որ իմ գնացքներս չի շարժին :

6 Ես քեզի կանչեցի , վասն զի ինձի պի-
տի լես Մատուած . խոնարհեցուր ինձի ա-
կանջդ , լսէ իմ խօսքիս :

7 Աքանջելի ըրէ քու ողորմութիւն-
ներիդ , դուն որ ինչ յուսացողները աջ
ձեռքովդ կազատես հակառակ եղողներէն :

8 Ընքի բիրի պէս իս պահէ , թներուդ
հովանաւորութեանը տակը իս ծածկէ :

9 Ինձի տառապանք տրվող ամբարիշտներուն երեսէն պահէ՛ . իմ՝ անձիս թշնամիները իս պաշարեցին :

10 Իրենց պարարտութիւնովը ծածկրվեցան , իրենց բերնովը ամբարտաւանութեամբ խօսեցան :

11 Հիմայ քայլերնուս շորս կողմը պատած աչվըներնին տնկեցին գետինը զարնելու համար ,

12 Մտիւծի պէս՝ ո՞ր կրփափաքի յափըշտակելու , առիւծի ձագի պէս որ դարանակալ կրլայ :

13 Ելի՛ր ո՛վ Տէր , անոր առջևը կտրէ . անիկա գետինը զարկ . փրկէ՛ իմ՝ անձս ամբարիշտներէն քու սուրովդ :

14 Մարդիկներէն ձեռքովդ՝ ո՛վ Տէր , երկրիս մարդիկներէն՝ որոնց բաժինը աշխարհիս մէջն է , ու անոնց փորերը շտեմարաններէդ կրլեցունես . անոնց տղաքն ալ լեցվեցան , ու անոնք ալ իրենցմէ էվելցածը իրենց տղոցը կրթողուն :

15 Իս՛կ ես արդարութիւնով պիտի տեսնամ քու երեսդ . երբոր արթննամ քու դէմքէդ պիտի կշտանամ :

ԱՆԳՍՏՈՒՄ ԺԻՐ :

Գլխաւոր երգեցողին Գաւլի (Սաղմոս) Տէր-
 րոջ ծառային, որ ըստ Տէրոջ աս էր-
 գին Բաւերը՝ ան օրը, որ ապագայ անկա Տէ-
 րը ամեն լշնամիներուն յետին, ու Սաղմո-
 սին յետին, և ըստ :

Ո՛վ Տէր, իմ զօրութիւնս, պիտի սիրեմ
 քեզ :

2 Տէրն է իմ ժայռս, իմ պարիսպս, ու
 իմ ազատիչս . Մտուածս իմ ժայռս, անոր
 կը յուսամ ես . վահանս, փրկութեանս եղ-
 ջիւրը, ու իմ ապաւենս :

3 Պիտի կանչեմ Տէրոջը՝ որ ան գովելի
 է, ու իմ թշնամիներէս պիտի ազատիմ :

4 Մահուան ցաւերը չորս կողմն պա-
 տեցին, ու փնասակար հեղեղները իս
 վախցուցին :

5 Գերեզմանի ցաւերը իս պաշարեցին .
 մահուան որոգայթները առջևս կտրե-
 ցին :

6 Անդութեանս մէջը Տէրոջը կանչեցի,
 ու Մտուածուս ազաղակեցի . լսեց իմ ձայնս
 իր տաճարէն, ու անոր առջին եղած ազա-
 ղակս անոր ականջները մտաւ :

7 Աւ սարսափեցաւ և դողաց երկիրը՝ ու
 լեռներուն հիմունքները շարժեցան և սա-
 սանեցան, վասն զի բարկացաւ :

8 Ընոր քիթէն ծուխ , ու անոր բերանէն վատնող կրակ ելաւ . անկէ կայծակներ բորբոքեցան :

9 Ու երկինքը վար ծոց ու իջաւ , և անոր ոտվըներուն տակը մառախուղ կար :

10 Ու քերորէին վրան հեծաւ և թռաւ , ու հոյին թևերուն վրայ թռաւ :

11 Խաւարը իրեն ծածկոյթ բրաւ , ու իր չորս կողմէն իր բնակարանը՝ խաւարային ջուրերը , ամպերուն խաւարը :

12 Իր առջևի եղած պայծառութենէն իր ամպերը անցան կարկուտով ու կրակի կայծակներով :

13 Ու Տէրը երկինքին մէջը օրոտում բրաւ , և Բարձրեալը իր ձայնը տրւաւ կարկուտով ու կրակի կայծակներով :

14 Ու իր նետերը խրկեց և ցրվեց անոնք , ու շատ կայծակները Խրիչ և անհանգիստ բրաւ անոնք :

15 Ծուրերուն յատակները երեցան , ու աշխարհիս հիմունքները յայտնվեցան , ու Տէր՝ քու չեխովդ ու քու քիթիդ շունչին նշխունովը :

16 Խրկեց բարձրէն ու իս բունեց , իս շատ ջուրերէն հանեց :

17 Փրկեց իս իմ զօրեղ թշնամիէս , ու իմ ատողներէս . վասն զի ինձմէ էվել զօրեղ եղան :

18 Եւ եղութիւն քաշած օրվանս մէջը

Հասան ինծի . բայց Տէրը ինծի օգնական եղաւ :

19 Ու իս լայնարձակ տեղը Հանեց՝ ու իս փրկեց , վասն զի Հաճեցաւ ինծի :

20 Տէրը իմ արդարութեանս Համար փոխարէնը տրվաւ ինծի . իմ ձեռացս մաքրութեանը Համար փոխարէնը տրվաւ ինծի :

21 Ասան զի Տէրոջը ճամբաները ես պահեցի , ու իմ Աստուծմէս դարձած Հարութիւն չըրի :

22 Ասան զի անոր ամէն դատաստանները իմ առջիս են , ու իր հրամանները հետու չըրի ինծմէ :

23 Ասաւ անոր առջին կատարեալ եղայ , ու իմ անօրէնութենէս զգուշացայ :

24 Ու Տէրը փոխարէնը տրւաւ ինծի , իմ արդարութեանս Համար . իմ ձեռացս մաքրութեանը Համար՝ որ անոր աչվրներուն առջին է :

25 Աղորմածին հետ ողորմած կրլաս . կատարեալ մարդուն հետ կատարեալ կրլաս :

26 Մաքուրին հետ մաքուր կրլաս . ու ծուռին հետ կրծուիս :

27 Ասան զի վշտացած ժողովուրդը դուն կապրեցունես . ու ամբարտաւան աչվրները դուն կըցածցունես :

28 Ասան զի դուն իմ ճրագս կրվա-

ուես , Տէրը իմ Մատուածս կըլուսաւորէ իմ
խաւարս :

29 Ինչու որ քեզմով խուճրին մէջը վա-
զեցի , ու իմ Մատուծովս պարիսպէն ան-
ցայ :

30 Մատուծոյ ճամբան կատարեալ է .
Տէրոջը խօսքերը փորձըված են . ամէն ի-
րեն յուսացողներուն վաճան է :

31 Այս ան զի ո՛վ է Մատուած՝ Տէրոջմէն
'ի զատ , կամ ո՛վ է ժայռ մը՝ մեր Մատուծ-
մէն 'ի զատ :

32 Մատուած է որ ինծի զօրութիւն կը
հագցունէ , ու իմ ճամբաս կատարեալ կընէ :

33 Իմ ոտվըներս եղջերուի սպիւնէրու
պէս կընէ , ու բարձր տեղերը իս կըկայնե-
ցունէ :

34 Չեռվըներս պատերազմի կըվարժէ ,
ու իմ բազուկներուս վրայ պղնձի աղեղ
կըլարէ :

35 Ինծի նաև քու փրկութեանդ վաճանը
տըւիր , ու քու աջ ձեռքդ իս վերցուց , և
քու ողորմութիւնդ իս մեծցուց :

36 Ինչո՞ւ ցուցիր ներքևս իմ քալվածքս ,
ու իմ յօդուածներս չի շարժեցան :

37 Հալածեցի իմ թշնամիներս , և հա-
սայ անոնց , ու ետ չի դարձայ մինչև անոնք
վատնեցի :

38 Կոտորեցի անոնք , ու կանգնելու կա-
րող չեղան . իմ ոտվըներուս տակը ինկան :

39 Ու պատերազմի համար ինձի զօրութիւնով գօտի կապեցիր , իմ վրաս ելլողները տակս ձգեցիր :

40 Ու իմ թշնամիներուս վիզերը իձձի տըւիր , և իմ ատելիներս սատկեցուցի :

41 Աղաղակեցին՝ բայց փրկող չի կար , Տէրօջը անգամ ու անոնց չի պատասխանեց :

42 Ու փոշիի պէս անոնք մանտրեցի հովին առջին , և փողոցներուն տիղմին պէս մէկդի ձգեցի անոնք :

43 Գուն փրկեցիր իս ժողովուրդին կռիւներէն , ու հեթանոսներուն գլուխ ըրիր իս . իմ չի գիտցած ժողովուրդս ծառայեց ինձի :

44 Իրենց ականջներովն լսածներնուն պէս ինձի նազանդեցան . օտար զաւակները ինձի շողօքօրթութիւն ըրին :

45 ()տար զաւակները նիհարցան , և իրենց փախալքոված տեղերէն դողացին :

46 Տէրը կենդանի է՝ ու իմ ժայռս օրհնեալ ըլլայ . և բարձր ըլլայ իմ փրկութեանս Աստուածը :

47 Աստուած իմ վրէժս կրխնդրէ , ու ժողովուրդները ինձի կը նազանդեցունէ :

48 Իմ թշնամիներէս իս կը փրկէ . իս ալ բարձրացուցիր իմ վրաս ելլողներէն , ու բրոնաւոր մարդէն իս փրկեցիր :

49 Ասոր համար ո՛վ Տէր , հեթանոսներուն մէջը պիտի գովեմ քեզ , և քու անունիդ սաղմոս պիտի երգեմ :

50 Իբ թագաւորին փրկու թիւնները մեծցունողը , ու () ծեալին՝ Գաւիթին ու անոր զաւակին յախտեան ողորմողը ան է :

ՍԱԳՍՈՍ · ԺԹ :

Գլխաւոր երգեցողէն , Սալսա Գաւիթ :

1 Արկինքը՝ Աստուծոյ փառքը կը պատմէ , ու երկնէջ հաստատութիւնը անոր ձեռքին գործքերը կը ցուցնէ :

2 () րը՝ օրին խօսքը կը յայտնէ , ու գիշերը՝ գիշերին գիտութիւնը կը ցուցնէ :

3 Չի կայ զոոյց ու չի կան խօսքեր . անոնց ձայնը չի լսվիր .

4 Իայց ամէն երկիր ելաւ անոնց ձայնը՝ ու մինչև աշխարքի ծայրը անոնց խօսքը . անոնց մէջը արեւին վրան մը հաստատեց :

5 Աւիքը արեւը առագաստէն ելած փեսայի պէս է իր ճամբուն մէջ . հզօր մարդու պէս վազելու ատենը կուրախանայ :

6 Անոր ելքը երկինքին ծայրէն , ու անոր շրջանը մինչև անոնց ծայրերն է . և անոր տաքութենէն բան մը չի ծածկը վիր :

7 Տերօջը օրէնքը կատարեալ է հոգին կրնորոգէ . Տերօջը վկայութիւնը ճշմարիտ է , տգէտը իմաստուն կրնէ :

8 Տերօջը կանոնները շիտակ են՝ սիրտը կուրախացունեն . Տերօջը պատուիրանք-

ները պայծառ են , աչքերուն լոյս կուտան :

9 Տէրոջը վախը սուրբ է՝ յաւիտեան կըմնայ . Տէրոջը դատաստանները ճշմարիտ են , բոլորովին արդար են :

10 Յանկալի են անոնք ոսկիէն ու շատ փորձըված ոսկիէն . մեղրէն ու քանված մեղրէն անուշ են :

11 Եւաւ քու ծառադ անոնցմով խրատվեցաւ , ու անոնք պահելէն շատ վարձք կայ :

12 Ո՛վ կրնայ միտք առնել էջ յանցանքները , արդար սեպէ իս իմ ծածուկ Ռդէրէն :

13 Եմբարտաւան Ռդէրէն ալ պահէ քու ծառադ . թող ինծի չի տիրեն , որ անատենը անմեղ ըլլամ , ու սուրբ ըլլամ մեծ մեղքէն :

14 Իներնիս խօսքերը ու սրտիս խորհուրդները քու առջիդ ընդունելի ըլլան , ո՛վ Տէր , իմ ժայռս ու փրկիչս :

ԱՇԳՍՈՍ • Ի :

Գլխաւոր երգեցողէն , Սաղմոս Գաւլի :

Ներուժեան օրը Տէրը պատասխանէ քեզի , Յակոբին Եստուծոյն անունը քեզ պաշտպանէ :

2 () Գնուժիւն խրկէ քեզի սուրբ տեղէն , ու Սիօնէն զօրացունէ քեզ :

3 Յիշէ քու ամէն ընծաներդ , և քու զոհներդ ընդունէ : Ահլայ :

4 Քու սրտիդ պէս տայ քեզի , և քու ամէն խորհուրդներդ կատարէ :

5 Ուրախանանք պիտի քու փրկութիւնովդ . ու մեր Աստուծոյ անունովը մեր դրօշակը պիտի վերցընենք . Տէրը կատարէ քու ամէն խնդրուածքդ :

6 Հիմայ գիտցայ որ Տէրը կը պահէ իր () ծնալը . անոր կը լըսէ իր սուրբ երկինքէն , իր աջ ձեռքին փրկութեան ուժովը :

7 Ամանք կառքերուն և ոմանք ալ ձիերուն կապուին . բայց մենք մեր Տէր Աստուծոյ անունը պիտի յիշենք :

8 Անոնք կորացան ու ինկան , բայց մենք ելանք ու շիտակ կեցանք :

9 Այլ Տէր , փրկէ թագաւորը . պատասխան տուր մեզի մեր կանչելու օրը :

ՍՄԳՄՈՍ . ԻԸ :

Գլխաւոր երգեցողէն , Սաղմոս Գաւլէ :

Այլ Տէր , քու զօրութիւնովդ ուրախ պիտի ըլլայ թագաւորը , ու քու փրկութիւնովդ սրչափ խիստ պիտի ցնծայ :

2 Անոր սրտին փափաքը տըւիր անոր . ու անոր պոկունքներուն խնդիրքը չարգիլեցիր անկէ : Ահլայ :

3 Այս անգամ զի բարութեան օրհնութիւններով անոր օգնեցիր . մաքուր ոսկիէ պսակ դրիր անոր գլուխը :

4 Քենէ կեանք խնդրեց , — անոր երկան օրեր տըւիր յաւիտեանս յաւիտենից :

5 Ընոր փառքը մեծ է քու փրկութիւնովդ . փառք ու մեծ վայելչութիւն դրիր անոր վրայ :

6 Այս անգամ զի օրհնութիւնները անոր վրայ հաստատեցիր յաւիտեանս . ուրախութեամբ ուրախ ըրիր անիկա քու երեսիդ առջին :

7 Ինչու որ թագաւորը Տէրոջը յուսացաւ , ու Քարձրեային ողորմութիւնովը չի պիտի շարժի :

8 Քու ձեռքդ թշնամիներդ պիտի գրանայ . քու աջ ձեռքդ պիտի գտնայ ամէն ատելիներդ :

9 Ընոնք նոցին կրակին պէս պիտի ընես քու բարկութեանդ ժամանակը . Տէրը իր բարկութիւնովը՝ թողորովին պիտի կորսընցունէ անոնք , ու կրակը պիտի ուտէ անոնք :

10 Ընոնց պտուղը երկրին վրայէն կորսընցունես , ու անոնց զաւակները մարդոց որդիքներէն :

11 Ինչու որ քեզի դէմ շարութիւն պատրաստեցին . խաբէութիւն մտմտացին , Բայց կարող չեղան :

12 Այս անգամ զի դուն անոնց կռնակը ետ

պիտի դարձունես . անոնց երեսներուն դէժ
նէրէրէր լարերուդ վրայ պիտի պատրաստես :

13 Ո՛վ Տէր , քու զօրութիւնովդ բարձր
եղիր . ձայնաւոր պիտի կարգանք , ու եր-
գենք քու զօրութեանդ :

ՍՇՂ ՄՈՍ . ԻԲ :

Գլխաւոր երգեցողն Լյեւէր Շահարին
Վրայ , Սուրբ Գաւթի :

Ո՛վ Աստուածս՝ իմ Աստուածս , ինչո՞ւ
իս թողուցիր , ի՞նչ փրկելէն ու պօռալուս
խօսքերէն հեռուես :

2 Ո՛վ իմ Աստուածս , ցորեկը կըկանչեմ
քեզի և չես պատասխաներ . ու գիշերը ի՞նչ
կանչէ և ինձի հանգստութիւն չի կայ :

3 Ի՛նչո՞ւ դուն սուրբ ես , ո՞վ Իսրայէլի
գովասանաց մէջը բնակողը :

4 Զայրերնիս քեզի յուսացան , յու-
սացան , ու փրկեցիր անոնք :

5 Վեղի կանչեցին ու աղատեցան . քե-
զի յուսացան ու չամբռցան :

6 Ի՛նչո՞ւ ես որդ եմ ու մարդ չեմ ,
մարդոց մէջը քամահրըված ու ժողովրդոց
մէջը խայտառակ եղած :

7 Ա՛մէն իս տեսնողները ծաղս կրնեն .
պոկունք կրբանան , գլուխ կերերցունեն ,

8 Ը՛նէլ . Տէրոջը յուսացաւ , ու թող

փրկէ անիկա . թող ազատէ անիկա , ինչու որ ուզեց անիկա :

9 Բայց մօրս արգանդէն իս առաջ բերողը դուն ես . մօրս ծիծը եղած ատենս դուն ինձի յոյս տըւիր :

10 Մօրս արգանդէն ես քեզի յանձնը վեցայ . մօրս փորէն դուն ես իմ Աստուածըս :

11 Մի՛ հեռանար ինձմէ , վասն զի նեղութիւնը մօտ է . օգնող մըն ալ չի կայ :

12 Եւստ զըւարակներ չորս կողմս դարձուցին . Բասանի զօրաւորները իս պաշարեցին :

13 Բերաննին բացին վրաս , յափշտակող ու պօռացող առիւծի պէս :

14 Սուրի պէս թափվեցայ , ամէն ոսկորներս քակվեցան . սիրտս մօփի պէս հալեցաւ փորիս մէջը :

15 Չորացաւ ուժս հողէ շինած ամանի մը պէս , ու լեզուս ծնօտներուս փակաւ : Եւ իս մահուան հողը դրիր :

16 Այսն զի շունները չորս կողմս դարձուցին , չարերուն ժողովքը իս պատեցին , ձեռվըներս ծակեցին :

17 Իմ ամէն ոսկորներս կրնամ համրել . անոնք կրնային՝ կրտսնան զիս :

18 Իմ լաթերս իրենց մէջը բաժանեցին ու պատմուճանիս վրայ փիճակ ձգեցին :

19 Բայց դուն՝ ո՛վ Տէր , մի՛ հեռանար

ինչո՞ք . ո՞վ իմ զօրութիւնս ինձի օգնութեան հասիր :

20 Իմ անձս սուրէն , ու ամենասիրելի ինչո՞ք շանք ձեռքէն ազատէ :

21 Փրկէ՛ իս առիւծին բերնէն , ու պատասխան տուր վայրի ցուլերուն եղջիւրներէն :

22 Եղբայրներուս պիտի պատմեմ քու անունդ . ժողովրդեան մէջ պիտի գովեմ քեզ :

23 Ո՞վ Լստուածաւախներ գովեցէք անիկա . ո՞վ Յակոբին բոլոր զաւակները փառաւորեցէք անիկա , ու վախցէք անկէ Խորայէլին ամէն զաւակները :

24 Ա՛յ ասն զի Տէրը շանարգեց ու անտես չըրաւ վշտալիին նեղութիւնը , ու երես չի դարձուց անկէ . հասպա իրեն կանչած ատենը լսեց :

25 Վ՛եզմով պիտի ըլլայ իմ գովութիւնս շատ ժողովուրդներուն մէջը . պիտի կատարեմ ուխտերս անկից վախցողներուն առջին :

26 Տնանկները պիտի ուտեն ու պիտի կշտանան . պիտի գովեն Տէրը զինքը փնտրողները . պիտի ապրի ձեր սիրտը յաւիտեան :

27 Պիտի յիշեն ու Տէրոջը պիտի դանան երկրի ամէն ծայրերը , ու երկրպագութիւն պիտի բնեն քու առջիդ աղբերուն ամէն ցեղերը :

28 Ասան զի թագաւորութիւնը Տէրոջն է . ու ան կը տիրէ ամէն ազգերուն վրայ :

29 Պիտի ուտեն ու երկրպագութիւն պիտի ընեն երկրի ամէն հարուստները . ամէն հողը իջնողները պիտի ծունկ չոգեն անոր առջին , ու ան ալ որ իր անձը չի ապրեցուներ :

30 Օգուակը պիտի ծառայէ անոր . «Մատուծոյ վրայօք պիտի պատմըվի Գալտտարիները :

31 Պիտի գան ու անոր արդարութիւնը պիտի պատմեն ան ժողովուրդին , որ պիտի ծնանի . վասն զի « Բանը ան կատարեց :

ՍԵՂՍՈՍ . ԻԳՆ :

Սողոմոն Գալտտարի :

Տէրը՝ հովիւս է . ես Բանէ իւր չի պիտի կարօտիմ :

2 Իս խոտաւէտ տեղերը կը պառկեցունէ . հանդարտ ջուրերուն քովը ինծի կառաջնորդէ :

3 Հոգիս կը նորոգէ . իր անունին համար արդարութեան ճամբաներուն մէջը կառաջնորդէ ինծի :

4 Երբեք մահուան շուքին մէջը երթալու ժամանակս , չարէն չի պիտի վախնամ .

վասն զի դուն իմ հետս ես , քու ցուպդ ու գաւաղանդ՝ անոնք իս պիտի մխիթարեն :

5 Սեղան կը պատրաստես իմ առջիս , իմ թշնամիներուս դէմը . իմ գլուխս իւղով օծեցիր . իմ բաժակս լեփ լեցուն է :

6 Ղշմարիտ բարերարութիւնը ու ուղորմութիւնը իմ հետս պիտի գան կեանքիս բոլոր օրերուն մէջը , ու երկար ժամանակ հերոջը տունը պիտի բնակիմ :

ՄԱՂ ՄՈՍ . ԻՂ :

Սաղմս Գաւ-Էի :

Արկիրը հերոջն է , ու անոր լիութիւնն
 ալ . աշխարհը՝ ու անոր բնակիչներն
 ալ :

2 Ինչու որ ինքը ծովերուն վրայ անոր հիմերը ձգեց , ու գետերուն վրայ անիկա հաստատեց :

3 Ով պիտի ելլայ հերոջը լեռը . կամ ով պիտի կենայ անոր սուրբ տեղը :

4 Չեռքերով սուրբը՝ ու սրտով մաքուրը , որ իր անձը սուտի չի ասրաւ , ու նենգութեամբ երդում չըրաւ .

5 Ըն պիտի ստանայ հերոջմէն օրհնութիւն , ու իր փրկութեան Մատուցմէն արգարութիւն :

6 Ընիկա փնտռողներուն ցեղը աս է .

քու երեսդ խնդրողները Յակորն է : Սէլայ :

7 Ո՛վ դուռներ , գլուխնիդ վեր վերցուցէք . ու վերցրվեցէք յաւիտենական դուռներ , որ փառքին թագաւորը մտնայ :

8 Ո՛վ է աս փառքին թագաւորը . կարող ու հզօր Տէրը , պատերազմի մէջ հզօր Տէրը :

9 Ո՛վ դուռներ , գլուխնիդ վեր վերցուցէք . ու յաւիտենական դուռներ վեր վերցրվեցէք , որ փառքին թագաւորը մտնայ :

10 Ո՛վ է աս փառքին թագաւորը . զօրքերուն Տէրը , աս է փառքին թագաւորը : Սէլայ :

ՍԸՂՍՐԱՍ • ԻԵ :

(Սաղմսս) Գառլէ :

Ո՛վ Տէր , իմ անձաքեզի վերցուցի :

2 Ո՛վ իմ Մատուածս՝ քեզի յուսացայ . թող չամչնամ , ու թշնամիներս իմ վրաս թող չի ցնծան :

3 Նաև ամէն քեզի սպասողները թող չամչնան . փուճ տեղը անօրէնութիւն ընողները թող ամչնան :

4 Ո՛վ Տէր , քու ճամբաներդ ցուցուր ինձի . քու ճամբաներդ սորվեցուր ինձի :

5 Քու ճամարտութեանդ մէջը իսպառացուր . ու սորվեցուր ինձի , վասն զի դուն ես

իմ փրկու թեանս Մատուածը . ես քեզի կըս-
պասեմ ամէն օր :

6 Այլ Տէր , քու գ թու թիւններդ ու ու-
ղորմու թիւններդ յիշէ , ինչու որ հին ժա-
մանակէն են :

7 Անկու թեան մեղքերս ու յանցան-
քըս մի յիշեր . ողորմու թիւնովդ իս յիշէ ,
բարերարու թեանդ համար ոյլ Տէր :

8 Տէրը բարի և ուղիղ է . անոր համար
մեղաւորներուն կըցուցընէ ճամբան :

9 Վատաստանի մէջ պիտի առաջնորդէ
հեղերուն , ու իր ճամբան հեղերուն պի-
տի սորվեցունէ :

10 Տէրոջը բոլոր ճամբաները ողորմու-
թիւն ու ճշմարտութիւն են , իր ուխտը ու
պատուիրանքները պահողներուն :

11 Այլ Տէր , քու անունիդ համար նե-
րէ իմ անօրէնութիւնս , վասն զի մեծ է :

12 Այլ է ան մարդը որ Տէրոջմէն կը
վախնայ . անոր պիտի գիտցունէ իր ընտրած
ճամբան :

13 Մնոր անձը բարութեան մէջ պիտի
քնակի , ու անոր զաւակը երկիրը պիտի
ժառանգէ :

14 Տէրոջը ընտանութիւնը իրմէն վախ-
ցողներուն հեան է . ու իր ուխտը անոնց
կըսորվեցունէ :

15 Իմ աշխարհներս ամէն ատեն դէպի Տէ-
րոջն են . ինչու որ իմ ոտխարներս որոգայ-
թէն ան պիտի հանէ :

16 Ինծի մտիկ բրէ և ողորմէ , վասն զի մինակ ու նեղած եմ :

17 Իմ սրտիս նեղութիւնները շատցան . իմ տառապանքներէս իս հանէ :

18 Իմ նեղութիւնս ու աշխատութիւնս տես , ու ամէն մեղքերուս թողութիւն բրէ :

19 Իմ թշնամիներս տես՝ ինչու որ շատցան , ու անիրաւ ատելութիւնով իս ատեցին :

20 Պահէ իմ անձս ու փրկէ իս . թող չամբնամ , վասն զի քեզի յուսացայ :

21 Աւղղութիւնը ու շիտակութիւնը իս թող պահեն , ինչու որ քեզի սպասեցի :

22 Ա՛յլ Աստուած , փրկէ Իսրայէլը իր ամէն նեղութիւններէն :

ՍՇԳ ՍՂՍ . ԻՕ :

(Սողոմոն) Գաւ-Էէ :

Ա՛յլ Տէր՝ դատէ իս , վասն զի իմ անարատութիւնովս քալեցի , ու Տէրսօջը յուսացայ , շի պիտի շարժիմ :

2 Ա՛յլ Տէր , իս փորձէ ու քննէ . փորձէ իմ երիկամձնքներս ու իմ սիրտս :

3 Ա՛յլ վասն զի քու ողորմութիւնդ իմ աշխատութիւնս անջին է , ու քու ճշմարտութեանդ մէջը պտրտեցայ :

4 Փուճ մարդիկներուն հետ չի նստեցայ , կեղծաւորներուն հետը չի խառնըվեցայ :

5 Չարերուն ժողովքը ատեցի , ու ամբարիշտներուն հետ չի նստեցայ :

6 Ընմեղութիւնով ձեռվըներս պիտի լըւամ , ու քու սեղանիդ շորս կողմը պիտի պըտըտիմ՝ ո՛վ Տէր :

7 Ար շնորհակալութեան ձայնը լսել տամ , ու քու ամէն սքանչելիքդ պատմեմ :

8 Ո՛վ Տէր , սիրեցի քու տանդ բնակութիւնը , ու քու փառքիդ եղած տեղը :

9 Մի՛ կորսընցուններ իմ անձս ամբարիշտներուն հետ , ու իմ կեանքս արիւնահեղ մարդիկներուն հետ :

10 Արոնց ձեռվըներուն մէջ անօրէնութիւն կայ , ու անոնց աջ ձեռվըները կաշառքով լեցուն է :

11 Բայց ես իմ անարատութիւնովս կերթամ , իս փրկէ ու ինձի ողորմէ :

12 Իմ ոտքս շիտակութեան մէջ կը կենայ , ժողովուրդներուն մէջ Տէրը պիտի գոյլեմ :

ՍՇՂ ՄՌՍ - ԻԼ :

(Սաղմոս) Գառլէ :

Տէրը՝ իմ լոյսս ու իմ փրկութիւնս է , ես ո՛ւնակից պիտի վախնամ : Տէրը իմ կեանքիս ապաւէնն է , ես ո՛ւնակից պիտի դողամ :

2 Չարերը իմ մարմինս ուտելու համար
ինձի մօտենալու ատեննին , իս նեղողները
ու թշնամիներս դողալողացին ու ինկան :

3 Թէ որ վրաս զօրքի բանակ ելլայ՝ սիրտս
չի պիտի վախնայ . թէ որ վրաս պատե-
րազմի պատրաստութիւն ըլլայ՝ անով ալ
ես պիտի յուսամ :

4 Բան մը կըխնդրեմ՝ Տէրօջմէն՝ ա-
սիկա կաղաչեմ , որ կեանքիս ամէն օրերը
Տէրօջը տանը մէջ բնակիմ . Տէրօջը վա-
յելչութիւնը տեսնալու ու անոր տաճարին
մէջ զէնքը խնդրելու համար :

5 Ասան զի շար օրվան մէջը իր բնա-
կարանին մէջը իս պիտի պահէ , իր վրանին
ծածկոյթովը իս պիտի ծածկէ . քարի վրայ
իս պիտի վերցունէ :

6 Աւ հիմայ՝ իմ գլուխս իմ բոլորտիքս
եղած թշնամիներուս վրայ պիտի բարձրա-
նայ . ու անոր վրանին մէջը ուրախութեան
ձայնով զոհեր պիտի մատուցանեմ , ձայ-
նաւոր պիտի երգեմ ու սաղմոս պիտի կար-
դամ Տէրօջը :

7 Ա՛վ Տէր , ձայնս լսէ կանչելու ատե-
նըս , ու ողորմէ և պատասխան տուր ինձի :

8 Վեզի իմ սիրտս ըսաւ , « Ե ընչ »
փնտրանցէք իմ երեսս . քու երեսդ Տէր
պիտի փնտրուեմ :

9 Երեսդ մի՛ ծածկեր ինձմէ , բարկու-
թիւնով ծառագ մէկդի մի՛ ձգեր . ինձի

օրնական եղար, իս մի՛ ձգեր՝ ու իս մի՛
 թողուր՝ ո՛վ իմ՝ փրկութեան Մատուածս :

10 Թէ՛ որ հայրս ու մայրս իս երեսէ
 ձրգեն նէ, Տէրը իս պիտի ընդունէ :

11 Ո՛վ Տէր, քու ճամբադ ինձի սորվե-
 ցուր, ու շիտակ ճամբուն մէջը ինձի ա-
 սացնորդէ թշնամիներուս համար :

12 Թշնամիներուս կամացը իս մի՛ մատ-
 ներ, ինչու որ սուտ վկաներ իմ վրաս ե-
 լան, ու անիրաւութիւն փշոզներ :

13 Հաւատացի Տէրոջը բարութիւնը
 տեսնալ կենդանիներուն երկրին մէջը :

14 Տէրոջը սպասէ՛. զօրացի՛ր ու սիրտդ
 թող զօրանայ, ու Տէրոջը սպասէ՛ :

ԱՇԴ ՄՈՍ ԻԸ :

(Սաղմոս) Գառնէ :

Ո՛վ Տէր, քեզի կրկանչեմ. ո՛վ իմ
 ժայռս՝ մի՛ լռեր ինձի. չըլայ որ ինձի
 լռես, ու գերեզմանը իջնողներուն նմա-
 նիմ :

2 Լսէ իմ խնդրուածքիս ձայնը քեզի
 աղաչելու ատենս. ձեռվրներս քու սուրբ
 խորանիդ վերցունելու ատենս :

3 Միբարիշտներուն հետ ու անօրէնու-
 թիւն ընողներուն հետ իս մի՛ կորսընցու-
 ներ. որ ընկերներնուն հետ խաղաղութիւն

կրխօսին , բայց սրտերնուն մէջը չարութիւն կայ :

4 Իրենց գործքերուն պէս տուր անոնց , ու իրենց չար գործքերուն պէս . իրենց ձեռքով ըրածնուն պէս տուր անոնց , հատուցում ըրէ անոնց :

5 Ինչու որ անոնք Տէրոջը գործքերուն ու անոր ձեռվըներով ըրածներուն շնն նաշիր . պիտի կործանէ անոնք , ու ալ շի պիտի շինէ :

6 Օրհնեալ ըլլայ Տէրը , որ լսեց իմ աղօթքիս ձայնը :

7 Տէրը իմ զօրութիւնս ու իմ վահանս է . անոր յուսացաւ իմ սիրտս , և օգուտ գտաւ . ուստի սիրտս ուրախացաւ , և ես իմ երգովս շնորհակալ պիտի ըլլամ անոր :

8 Տէրը անոնց ուժն է , ու իր օճեալին փրկութեանը պարիսպն է :

9 Փրկէ քու ժողովուրդդ , ու օրհնէ քու ժառանգութիւնդ . հովւէ ևս անոնք , ու յաւիտեան անոնք բարձրացուր :

ՍՇԳ ՄՈՍ . ԻԹԻ :

Սաղմոս Գտմէ :

Տէրոջը տրւէ՛ք ո՛վ Լստուծոյ որդիքը ,
 Տէրոջը տրւէ՛ք փառք ու զօրութիւն :
 2 Տէրոջը տրւէ՛ք անոր անունին փառ-

քը՝ Տէրոջը երկրպագութիւնը բռնաբար սրբութեան զարդարանքներով :

3 Տէրոջը ձայնը՝ ջուրերուն վրայ է . փառաց Մատուածը կորոտայ . Տէրը շատ ջուրերուն վրայ է :

4 Տէրոջը ձայնը ուժով է . Տէրոջը ձայնը վեհափառութիւնով է :

5 Տէրոջը ձայնը մայր ծառերը կը ջարդէ , ու Տէրը կը կոտորակէ Վիրամանի մայր ծառերը :

6 Մաննք կը ցածկեցունէ կովու որթու պէս , Վիրաման ու Շիրիոն վայրի ցուլերուն ձագիկն պէս :

7 Տէրոջը ձայնը կրակին բոցերը կը ճեղքէ :

8 Տէրոջը ձայնը կը դողացունէ անասատը . Տէրը Աադես անասատը կը դողացունէ :

9 Տէրոջը ձայնը եղջերուները կը ծնուցանէ , ու անտառները կը մերկացունէ , ու իր տաճարին ձեջը ամէնքը պիտի խօսին անոր փառքը :

10 Տէրը ջուրին հեղեղին վրայ կը նստի , ու Տէրը յաւիտեան թագաւոր կը նստի :

11 Տէրը իր ժողովուրդին ուժ պիտի տայ , Տէրը իր ժողովուրդը խաղաղութիւնով պիտի օրհնէ :

ՍՏՂԱՍՏՈՒՄ ԵՒ ԳՆՈՒԿՆԵՐ

Ստղաս՝ Գնու-լի Կանը օրհնու-լի-ան էրգը :

Ո՛վ Տէր , կրբարձրացունեմ քեզ , վասն զի իս ազատեցիր , ու թշնամիներս իմ վրաս չուրախացուցիր :

2 Ո՛վ իմ Տէր Մատուածս , կանչեցի քեզի , ու իս բժշկեցիր :

3 Ո՛վ Տէր , գերեզմանէն հանեցիր իմ անձս . գերեզմանը իջնողներուն մէջէն իս ողջ պահեցիր :

4 Սաղմոս երգեցէք Տէրոջը՝ ո՛վ անոր սուրբերը , ու անոր սրբութիւնը յիշելով շնորհակալ եղիք :

5 Ա՛սան զի մէկ բոպէ մը իր բարկութեանը մէջն է , Բայց իր հաճութեանը մէջն է Բալը կեանքը . իրիկունը լաց կայ , բայց առտուն ուրախութիւն :

6 Ես իմ հանգստութեանս մէջը ըսի , թէ՛ Յաւիտեան չի պիտի շարժիմ :

7 Ո՛վ Տէր՝ հաճութեամբդ իմ լեռս պինտացուցիր . երևոյ՞ ծածկեցիր ես խոովեցայ :

8 Ո՛վ Տէր՝ քեզի կրկանչեմ , ու Տէրոջ կաղաչեմ :

9 Ի՛մ արիւնէս ի՞նչ օգուտ կը լայ , թէ՛ որ ես գերեզմանը իջնամ , մի՞թէ հողը

քեզ պիտի գովէ՞, իմ պիտի պատմէ՞ քու ճրջմարտութիւնդ :

10 Ո՛վ Տէր , լսէ ու ողորմէ ինձի . ո՛վ Տէր , ինձի օգնական եղիր :

11 Իմ սուգս պարի փոխեցիր . քուրծս ինձմէ քակեցիր և ինձի ուրախութիւն հագուցիր :

12 Անոր համար իմ փառքս սաղմոս պիտի երգէ քեզի , ու ալ չի պիտի լռէ . ո՛վ իմ Տէր Աստուածս , յաւիտեան շնորհակալ պիտի ըլլամ քեզի :

ՍԱԳՍՈՍ ԼԵ :

Գլխաւոր երգեցողն , Սաղմոս Գաւլի :

Ո՛վ Տէր՝ քեզի յուսացայ , յաւիտեան շամբշնամ . քու արդարութեամբդ իս ազատէ :

2 Ականջդ դէպի ինձի ըրէ , շուտով իս ազատէ . դուն եղիր ինձի զօրաւոր ժայռ մը , ու իս ապրեցունելու համար բերդաւոր տուն մը :

3 Ա՛յն զի ժայռս ու բերդս դուն ես , և քու անունիդ համար ինձի առաջնորդէ ու իս կառավարէ :

4 Արողայթէն իս հանէ , որ ինձի համար գաղտուկ լարեր են , ինչու որ իմ ապաւէնս դուն ես :

5 Իմ հոգիս քու ձեռքդ կը յանձնեմ .
 ո՛վ Տէր Աստուած ճշմարիտ՝ դուն իս փրկ-
 կեցիր :

6 Սուտ պարապու թիւններ պահողները
 ատեցի . բայց ես Տէրոջը յուսացայ :

7 Պիտի ցնծամ և ուրախ պիտի ըլլամ
 քու ողորմութիւնովդ , ինչու որ իմ խրդ-
 ճութիւնս տեսար , ու իմ անձս տառա-
 պանքներուն մէջը գիտցար :

8 Աւ իս թշնամիին ձեռքք չի մատնեցիր ,
 իմ սովըներս լայնարձակ տեղ կանդնե-
 ցուցիր :

9 Ո՛վ Տէր , ողորմէ ինձի , վասն զի նե-
 ղութեան մէջ եմ . սրտնեղութենէն մա-
 շեցաւ իմ աչքս , իմ անձս ու փորս :

10 Ա՛սան զի իմ կեանքս ցաւով , ու
 տարիներս հառաչանք ընելով պակսեցան .
 ուժս իմ թշուառութենէս տկարացաւ ,
 ոսկորներս ալ մաշեցան :

11 Ա՛մէն թշնամիներուս ևս առաւել
 դրացիներուս առջևը նախատվեցայ , ու
 իմ ծանօթներուս երկիւղ եղայ . իս դուրսը
 տեսնողները ինձմէ փախան :

12 Ո՛րեւածի պէս սիրտէ մոռցրված ե-
 ղայ , կորսրված ամանի պէս եղայ :

13 Ա՛սան զի շատերուն բանբասանքը
 լսեցի , չորս կողմս վախ կար . երբոր ա-
 նոնք մէկ տեղ ժողվրվեցան ինձի համար ,
 խորհուրդ կընէին սր հոգիս առնեն :

14 Նայց ես քեզի յուսացայ ո՛վ Տէր ,
ըսի՝ Գուն ես իմ Մատուածս :

15 Իմ ժամանակներս քու ձեռքդ են ,
փրկէ իս թշնամիներուս ձեռքէն ու իս հա-
լածողներէն :

16 Երեսդ փայլեցուր քու ծառայիդ
վրայ , փրկէ իս քու ողորմութեամբդ :

17 Թող չամչնամ ո՛վ Տէր , վասն զի
քեզի կանչեցի . ամբարիշտները թող ամբը-
նան , գերեզմանին մէջը թող լուռ կենան :

18 Մրդարին դէմ ամբարտաւանու-
թիւնով ու նախատինքով խօսող նեն-
գաւոր պոկունքները թող պապանծին :

19 Որչափ մեծ է քու բարութիւնդ որ
քննէ վախցողներուն համար պահեցիր .
քեզի յուսացողներուն համար ըրիր մար-
դոց որդիքներուն առջև :

20 Մնոնք քու երեսիդ ծածկոյթովը պի-
տի ծածկես մարդոց չար միաբանութիւն-
ներէն , խորանի մէջ պիտի ծածկես անոնք
լեզուներուն հակառակութենէն :

21 Տէրը օրհնեալ ըլլայ , վասն զի իր
ողորմութիւնը զարմանալի ըրաւ ինծի
պարսպաւոր քաղաքին մէջը :

22 Իմ շիտթութեանս մէջը ըսի , թէ՛
Վրարովեցայ ես քու աչիւններուդ առջևէն .
բայց իմ աղօթքիս ձայնը լսեցիր քեզի աղա-
ղակելու ատենս :

23 Տէրը սիրեցէք ո՛վ անոր ամէն սուր-

բերը . վասն զի հաւատացեալները Տէրը կը պահէ , ու ամբարտաւանութիւն ընողներուն է վեջը պատիժը կուտայ :

24 Կարիճ եղիք ու ձեր սիրտը թող զօրանայ , դուք ամէնքդ՝ որ Տէրոջը կը յուսաք :

ՍԵՂՄՈՍ • ԼԻ :

(Սաղմոս) Գալիէ երգը :

ԼԵրանի՛ անոր՝ որ մեղքերուն թողութիւն եղաւ , ու յանցանքները ծածկը վեցան :

2 Երանի՛ ան մարդուն՝ որ Տէրը անօրէնութիւն չի սեպեր անոր , ու անոր հոգիին մէջը նենգութիւն չի կայ :

3 Երբոր լուռ կեցայ՝ ոսկորներս մաշեցան իմ ամէն օր աղաղակելէս :

4 Վասն զի գիշեր ու ցորեկ քու ձեռքդ ծանրըցաւ իմ վրաս . իմ թացութիւնս ամառվան չորութեան դարձաւ : Սէլայ :

5 Իմ մեղքս քեզի յայտնեցի , ու իմ անօրէնութիւնս չի ծածկեցի . ըսի թէ՛ Տէրոջը պիտի խոստովանիմ մեղքերս . ու դուն թողուցիր իմ մեղքիս անօրէնութիւնը : Սէլայ :

6 Եսոր համար ամէն աստուածապաշտ աղօթք պիտի ընէ քեզի գտնելուդ ժամա-

նակը . Ճշմարիտ՝ ջուրերուն հեղեղներուն
ատենը անոր չի պիտի մօտենան :

7 Գուն ես իմ ծածկըսկու տեղս . նե-
ղութենէն իս պիտի պահես . դուն իս պիտի
պատես աղատութեան երգերով : Աշխարհ :

8 Քեզի պիտի սորվեցունեմ , ու եր-
թալու ճամբադ պիտի ցուցընեմ քեզի .
խորհուրդ պիտի ընեմ շեղէ համար , իմ աչքս
քու վրադ պիտի ըլլայ :

9 Չիի պէս . ջորիի պէս մի՛ ըլլաք , որ
միտք չունին . ո՞ր իր սանձին ու լկամին
ղարդոյն կապելու է , որ քեզի չի մօտենան :

10 Մեղաւորին տանջանքները շատ են .
սակայն Տէրոջը յուսացողին չորս կողմը ու-
ղորմութիւնը պիտի պատէ :

11 Այլ արդարներ , Տէրոջմով ուրախ
եղիք ու ցնծացէք , ցնծութիւնով երգեցէք
դուք ամէնքդ որ սրտով շիտակ էք :

ՄԱԳՄԱՍ . 19 :

Այլ արդարներ , Տէրոջմով ցնծացէք՝
շիտակներուն կըվայելէ օրհնութիւն ը-
նել :

2 Գովեցէք Տէրը քնարով , տասը լար
ունեցող նուագարանով սաղմոս երգեցէք
անոր :

3 Երգեցէք անոր նոր երգ՝ մը , քաղց-
րութեամբ սաղմոս երգեցէք անոր մեծ
ձայնով :

4 Այսան զի Տէրոջը խօսքը շիտակ է ,
ու անոր գործքերուն բոլորը ճշմարտու-
թիւնով են :

5 Ընկիւս արդարու թիւնը ու իրաւունքը
կրտիրէ . Տէրոջը ողորմութիւնովը երկիրը
լեցուն է :

6 Տէրոջը խօսքովը երկինքը ստեղծվե-
ցաւ , ու անոր բերնին հոգիովը անոնց ա-
մէն զօրքը :

7 Օտփուն ջուրերը դէզի մը պէս կը
ժողվէ , անդունդները շտեմարաններուն
մէջը կը դնէ :

8 Թող վախնան Տէրոջմէն ամէն եր-
կիր , ու անկէ դողան աշխարհի ամէն բնա-
կիչները :

9 Այսան զի ան ըսաւ ու եղաւ . ինքը
հրամայեց՝ ու հաստատվեցաւ :

10 Տէրը կը ցրուէ հեթանոսներուն խոր-
հուրդները . փուճ կը հանէ ժողովուրդնե-
րուն խորհուրդները :

11 Տէրոջը խորհուրդը յաւիտեան կը
մնայ , անոր սրտին դիտաւորութիւնները՝
ազգէ մինչև ազգ :

12 Երանի՛ ան ազգին՝ որուն Մատուածը
Տէրն է . ան ժողովուրդին՝ որ իր ժա-
ռանգութեանը համար ընտրեց :

13 Տէրը երկինքէն կը նայի , ամէն մար-
դոց զաւակները կը տեսնայ :

14 Ի՛ր բնակութեան տեղէն՝ աշխարհի
ամէն բնակիչներուն կը նայի :

15 Ինքը ստեղծեց անոնց սիրտերը մէկ տեղ . անոնց բաշտը ըրածները կիմանայ :

16 Ոչ զօրքի շատութիւնով կազատի թագաւոր մը . ու ոչ ուժի շատութիւնով կը փրկըվի զօրաւոր մարդ մը :

17 Չին՝ ազատութեան համար պարտաբան մըն է , ու իր ուժին շատութիւնովը չի կրնար ազատել :

18 Ահա Տէրօջը աչքը իրմէն վախցողներուն , «- իր ողորմութեանը յուսացողներուն վրայ է :

19 Անոնց անձը մահուանէ փրկելու , ու սովի ատեն անոնք ապրեցունելու համար :

20 Մեր անձը Տէրօջը կը սպասէ , մեր օղնականը ու մեր վահանը անիկա է :

21 Այս ան զի մեր սիրտերը անով կուրախանան . ինչու որ անոր սուրբ անունին յուսացինք :

22 Ա՛վ Տէր՝ քու ողորմութիւնդ մեր վրայ ըլլայ , ինչպէս որ քեզի կը յուսանք :

ՍԵՂՄՈՍ . ԼԳ :

(Սաղմոս) Գաւթի . ան արեւը՝ «ր Աթէթէ-
 շինն արեւն յեմար յեացաւ , «- ան գո-րո-
 ըրտն անիկա , «- գնաց :

Ա՛մէն ժամանակ Տէրը պիտի գովեմ , ա-
 մէն ժամանակ անոր գովութիւնը իմ
 բերանս պիտի ըլլայ :

2 Իմ անձս Տէրոջմով պիտի պարծի ,
 Տեղերը պիտի լսեն և ուրախ ըլլան :

3 Տէրը ինծմով մեծցուցէք , ու մէկ տեղ
 բարձրացունենք անոր անունը :

4 Տէրը խնդրեցի՝ ու պատասխանեց ին-
 ծի , և իմ ամէն երկիւղներէս իս փրկեց :

5 Անոր նայեցան ու լոյս առին . և ա-
 նոնց երեսները չամբռչցան :

6 Աս աղբատը կանչեց , ու Տէրը լսեց
 անոր . և իր ամէն նեղութիւններէն փրկ-
 կեց անիկա :

7 Տէրոջը հրեշտակը իր բանակը ան-
 կից վախցողներուն չորս կողմը կըդնէ , ու
 անոնք կըպահէ :

8 Համբ առէք ու տեսէք՝ որ Տէրը բա-
 րի է . երանի՛ ան մարդուն՝ որ անոր կը
 յուսայ :

9 Տէրոջմէն վախցէք ո՛վ անոր սուրբե-
 րը . վասն զի անկից վախցողներուն կարօ-
 տութիւն չի կայ :

10 Առիւծին լակոտները կաղբաանան
 և կանօթենան . սակայն Տէրը փնտրուող-
 ներուն բարութիւն մը պակաս չի պիտի
 ըլլայ :

11 Եկէք որդիք , լսեցէք ինծի , Տէրոջը
 վախը ձեզի սորվեցունեմ :

12 Ար՞ մարդն է որ ողջ մնալ կուզէ ,
 շոք օրեր կըսիրէ՝ բարութիւն տեսնալու
 Տամար :

13 Եկզուդ պահէ շարութենէն, ու պրոկունքներդ նենգութիւն խօսելէն:

14 Չարութենէն հեռու կեցիր ու բարութիւն բրէ. խաղաղութիւն ուզէ, ու անոր ետեւէն գնայ:

15 Տէրօջը աչքերը արդարներուն վրայ է. ու անոր ականջները անոնց աղօթքին է:

16 Տէրօջը երեսը շարութիւն ընողներուն դէմ է, անոնց յիշատակը երկրէն բնաջինջ ընելու համար:

17 Երբ արմէրը կը կանչեն՝ ու Տէրը կը լսէ, ու իրենց ամէն նեղութիւններէն կը փրկէ անոնք:

18 Տէրը մօտ է անոնց՝ որոնց սիրտը կոտրած է, ու հոգիներն կոտրածները կապրեցունէ:

19 Երգարին նեղութիւնները շատ է. բայց Տէրը ամէնէն կը փրկէ անոնք:

20 Ենոր ամէն ոսկորները կը պահէ, անոնցմէ մէկը չի կոտորիր:

21 Չարութիւնը մեղաւորը պիտի մեռցունէ, ու արդարը ատողները պիտի պատժըվին:

22 Տէրը իր ծառաներուն անձը կը փրկէ. և ամէն իրեն յուսացողները բնաւ չի պիտի պատժըվին:

ՍԵՂՄՈՍ Ե :

(Սողոմոն) Գրեց :

Ո՛վ Տէր, ինձի հետ հակառակողներուն հետ հակառակէ՛ . ինձի հետ պատերազմողներուն հետը պատերազմէ՛ :

2 Ա՛ս հանր ու ասպարը ա՛ռ, ու ելիք ինձի օգնութիւն ընելու :

3 Ա՛ս եւ նիզակը քաշէ ու ճամբան գոցէ իս հալածողին դէմ . ըսէ անձիս թէ՛ Վ. ու փրկութիւնդ ես եմ :

4 Ի՛մ անձս փնտրողները ամբշնան ու խայտառակ ըլլան . ետ դառնան ու ամբշնան, որ ինձի չարութիւն կրմամբ տային :

5 Հոյին առջին եղած մղեղին պէս ըլլան անոնք, և Տէրոջը հրեշտակը փախցունէ անոնք :

6 Ա՛նոնց ճամբան խաւար ու սկրդեցունող ըլլայ, և Տէրոջը հրեշտակը հալածէ անոնք :

7 Ա՛ս ան զի զուր տեղը իրենց որոգայթը փոսին մէջը ինձի համար ծածկեցին, զուր տեղը փոսեցին անձիս համար :

8 Ա՛ւերումն անոր փոայ պիտի գայ յանկարծ . և իր ծածկած որոգայթը զինքը պիտի բռնէ, նոյն աւերման մէջը պիտի իյնայ :

9 Սակայն իմ անձս Տէրոջմով պիտի ցնծայ, անոր փրկութիւնովը ուրախ պիտի ըլլայ :

10 Իմ ամէն ոսկորներս պիտի ըսեն, Միջ Տէր, քեզի ո՛վ կրնամանի, որ աղքատը կազատէ անկից որ կը զօրանայ անոր վրայ, ու աղքատը և տնանկը իր յափըշտակողէն :

11 Սուտ վկաներ ելան, չի գիտցածներս կը հարցունէին ինծի :

12 Աղէկութեան փոխարէն՝ ինծի գէշութիւն ըրին յափշտակելով իմ անձս :

13 Բայց ես անոնց հիւանդութեան ատենը քուրձ կը հագնէի, իմ անձս ծոմով կը շարշարէի, ու իմ աղօթքս իմ ծոցս կը դառնար :

14 Իմ եղբօրս պէս — ընկերիս պէս կը վարվէի, իր մօրը համար սուգ ունեցողի մը պէս տրտմութեամբ կը ցածնայի :

15 Բայց կաղութեանս մէջը խնդացին ու ժողովրդեացան. զարնողները ինծի դէմ ժողովրդեացան, և ես չիմացայ. կը ճեղքէին իս ու չէին լսեր :

16 Խնձոյքի ամբարիշտ խնդկատակներուն հետ ահռաներնին իմ վրաս կը կճրուտացունէին :

17 Միջ Տէր, մինչև ե՞րբ կրնայիս. ազատէ իմ անձս անոնց աւերումներէն, իմ կեանքս առիւծին լակոտներէն :

18 Ս'եծ ժողովքին մէջը շնորհակալ պիտի ըլլամ քեզի , շատ ժողովրդոց մէջ պիտի գովեմ քեզ :

19 Անարժանապէս թշնամիներս իմ վրաս թող չուրախանան , առանց պատճառի իս ատողները աչքով նշան թող չիտան :

20 Ինչու որ խաղաղութիւն չեն խօսիր , բայց երկրի մէջ հանդարտներուն դէմ նենգութիւն կրմամբտան :

21 Ու իրենց բերանը ինծի դէմ կը բանան ըսելով . Այո՛ւյո՛ մեր աչքերը տեսան :

22 Ո՛վ Տէր տեսար լուռ մի՛ կենար . ո՛վ Տէր , ինծմէ մի՛ հեռունար :

23 Արթնցիր ու ել իմ դատաստանիս , ո՛վ Աստուածս ու Տէրս՝ իմ իրաւունքիս :

24 Վու արդարութեանդ նայելով իրաւունք ըրէ ինծի ո՛վ Տէր Աստուածս , և իմ վրաս թող չի խնդան :

25 Իրենց սրտին մէջը թող չըսեն՝ Թէ չա՛ մեր կամքը եղաւ , « - թող չըսեն՝ Ալլեցինք անիկա :

26 Ամբշնան ու խայտառակ ըլլան մէկ տեղ , որ իմ խեղճութեանս համար կը խրնդան . իմ վրաս բարձրացողները ամօժ ու խայտառակութիւն հագնին :

27 Անոնք թող ցնծան և ուրախանան , որ իմ արդարութիւնս կուզեն . ու միշտ թող ըսեն՝ Թէ Աստուած մեծանայ , որ իր ծառային խաղաղութիւն կուզէ :

28 Աւ լեզուս քու արդարութիւնդ պիտի խօսի , — ամէն օր քու գովութիւնդ :

ԱՐԳԱՌԱՎԱՆԻԿ :

Գլխաւոր երգեցողէն (Սաղմոս) Գաւառէի
Տէրօջէ ծառայէն :

1 Երարըշտին շարութեանը վրայօք . սրտիս մէջի խօսքը — է . Մատուծոյ վախը չի կայ անոր աչիքներուն առջին :

2 Ինչու որ ինքքդինքը կը շողոքորթէ իր աչիքներուն առջին , իր անօրէնութիւնը գանձակու՝ ու ատելի ըլլալու կողմանէ :

3 Ընոր բերանին խօսքերը անօրէնութիւն և խարէութիւն ևն , բարի ընելու համար իմաստուն ըլլալը մէկդի ձգեց :

4 Իր անկողինին մէջը անօրէնութիւն կը րամբտայ , ինչը կը հաստատէ ան ճամբան որ աղէկ չէ , ու շարէն ան չի զգուիր :

5 Այլ Տէր , ողորմութիւնդ մինչև երկինքն է , ճշմարտութիւնդ մինչև ամպերը :

6 Երդարութիւնդ հզօր լեռներուն պէս է , իրաւունքդ մեծ անդունդ մըն է , մարդիկը ու անասունները դուն կապրեցունես այլ Տէր :

7 Ինտո՛ր գերազանց է քու գթութիւնդ այլ Մատուած , անանկ որ մարդոց որդիքը քու թևերուդ հովանաւորութեանը կապաւինին :

8 Լ'նոնք քու տանդ պարարտու թննէն կրկշտանան . ու քու հաճու թիւններուդ գետէն պիտի խմցունես անոնց :

9 Ինչու որ կեանքին աղբիւրը քու քովդ է . քու լուսովդ կրտեսնանք լոյսը :

10 Քու գթութիւնդ քեզ ճանչցողնե՛րուն շարունակէ . քու արդարութիւնդ սրբտով շիտակ եղողներուն :

11 Գոռողութեան օտքը չի գայ իմ վրաս , ու շարերուն ձեռքը իս չի շարժէ :

12 Ընն տեղը ինկան անօրէնութիւն բնողները . գետինը զարնըվեցան ու չի կրցան վեր ելլելու :

ՍԵՂՄՈՍ ԼԵՆ :

Սաղմս Գաւլի :

1) արերուն համար մի՛ բարկանար , անօրէնութիւն գործողներուն մի՛ նախանձիր :

2 Ա՛յ ասն զի խոտի պէս շուտով պիտի կտրըվին , ու կանանչ խոտի պէս պիտի չորնան :

3 Տէրօջը յուսացիր և աղէկութիւն բրէ , երկրի վրայ բնակէ ու ճշմարտութիւնով արածովէ :

4 Ու Տէրօջմով ուրախացիր , և ան կուտայ քեզի քու սրտիդ խնդրուածքը :

5 Տէրոջը յանձնէ քու ճամբադ ու անոր յուսացիր, ու ան պիտի կատարէ :

6 Աւ դուրս պիտի հանէ քու արդարութիւնդ լուսի պէս, քու իրաւունքդ կէս օրի պէս :

7 Համբերէ՛ ու անոր սպասէ, և մի՛ սրդողիւր իր ճամբան յաջողութեամբ գացողին, խաբէութիւն ընող մարդուն համար :

8 Դադրէ բարկութենէն, ու սրդողիւր վերջ ըրէ. մի՛ սրդողիւր, ոչ միայն չարութիւն ընել է :

9 Ա՛սան զի չար գործողները պիտի փճանան, սակայն Տէրոջը համբերողները պիտի ժառանգեն երկիրը :

10 Ա՛սան զի քիչ ժամանակէն ետեւ ամբարիշտ չի կայ. անոր տեղը փնտրուես ու ինքը չի կայ :

11 Ա՛սկայն հեզերը պիտի ժառանգեն երկիրը, ու խաղաղութեան առատութիւնովը ուրախ պիտի ըլլան :

12 Ա՛նդաւորը արդարին դէմ չար կը խորհի, ու ակռաները կը կճրոցունէ անոր վրայ :

13 Տէրը ծաղը պիտի ընէ անիկա, փասն զի կը տեսնայ որ անոր օրը կուգայ կոր :

14 Ա՛նդաւորները թուր քաշեցին՝ ու աղեղներնին լարեցին, ահաբառ ու տնանկը ձգելու համար, շիտակ ճամբան եղողները մեռցունելու համար :

15 Անոնց թուրք իրենց սիրտը պիտի մրանայ , ու անոնց աղեղները պիտի կոտրտին :

16 Արդարին քիչ բանը շատ մեղաւորներուն առատ ստացուածքէն աղէկ է :

17 Ինչու որ ամբարիշտներուն բազուկները պիտի կոտրին . բայց արդարներուն պաշտպանը Տէրն է :

18 Անմեղներուն օրերը գիտէ Տէրը , և անոնց ժառանգութիւնը յաւիտենական պիտի բլլայ :

19 Փորձանքը ժամանակը չի պիտի ամրչնան , ու սովի օրերը պիտի կըշտանան :

20 Բայց մեղաւորները պիտի կորսւն , և Տէրոջը թշնամիները աղւոր արօտի պէս պիտի անցնին , մուխի պէս պիտի անցնին :

21 Անաւորը փոխ կառնէ ու չի վճարեր . սակայն արդարը կողորմի ու կուտայ :

22 Ինչու որ անոր օրհնածները պիտի ժառանգեն երկիրը . բայց անկէ անիծվածները պիտի փճանան :

23 Արդուն քաղվածքները Տէրոջմէն կըհաստատվին ու անոր ճամբան կըսիրէ :

24 Թէ որ իյնայ նէ չի պիտի կործանվի , վասն զի Տէրը անոր ձեռքը կըբռնէ :

25 Տղայ էի ու ծերացայ , բայց արդարը անտես եղած չի տեսայ . կամ անոր զաւակը հաց մուրացող :

26 Ըմէն օր կողորմի ու փոխ կուտայ , և անոր զաւակը օրհնւիլած է :

27 Չարութենէն ետ կեցիր ու աղէկութիւն բրէ , և յաւիտեան կըմնաս :

28 Ինչու որ Տէրը կըսիրէ իրաւունքը , և իր սուրբերը չի թողուր . յաւիտեան կըպահպանեն անոնք , բայց ամբարիշտներուն զաւակը պիտի կըտըրտի :

29 Ըրդարները պիտի ժառանգեն երկիրը , ու յաւիտեան անոր վրայ պիտի բընակին :

30 Ըրդարին բերանը իմաստութիւն պիտի խօսի , և անոր լեզուն իրաւունք պիտի խօսի :

31 Իր Ըստուծոյն օրէնքը իր սրտին մէջն է , և անոր քալիւածքը չի պիտի սահի :

32 Մեղաւորը լրտես է արդարին , ու մեռցունել կուզէ անիկա :

33 Տէրը անոր ձեռքը չի պիտի ձգէ անիկա , և դատաստան ըրած ատենը չի դատապարտեր անիկա :

34 Տէրոջը համբերէ ու անոր ճամբան պահէ , և ան քեզի կըբարձրացունէ՝ որ երկիրը ժառանգես , մեղաւորներուն սատակումը տեսնաս :

35 Ըմբարիշտը զօրաւոր տեսայ , ու ինքը տարածիլած մէկ բուն կանանչ ծառի մը պէս :

36 Բայց ան անցաւ ու ահա չի կայ , ու անիկա փնտրուցի՝ բայց չի գտնուիլեցաւ :

37 Ընմեղը նկատէ՛ ու շիտակին նայէ՛ .
վասն զի ան մարդուն վերջը խաղաղու-
թիւն է :

38 Բայց անօրէնները մէկ տեղ պիտի
կորսըվին , ամբարիշտներուն վերջը պիտի
փճանայ :

39 Բայց արդարներուն փրկութիւնը
Տէրօջմէն է , նեղութեան ժամանակը ա-
նոնց ապաւէն է :

40 Աւ Տէրը պիտի օգնէ անոնց , և պի-
տի ազատէ անոնք . մեղաւորներէն պիտի
ազատէ ու պիտի փրկէ անոնք , վասն զի ա-
նոր կը յուսան :

ՍՇՂՍՐԱՍ ԵՒ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Սուղնոս Գաւթի , յեշտութիւնէ համար :

Ո՛վ Տէր , նեղանալովդ իս մի՛ շախեր , ու
բարկութիւնովդ իս մի՛ խրատեր :

2 Ա՛սն զի նետերդ ինծի մտան , ու
ձեռքդ իմ վրաս կիջնայ :

3 Աղջութիւն չի կայ իմ մարմնոյս քու
բարկութեանդ համար . հանգստութիւն չի
կայ իմ ոսկորներուս իմ մեղքիս համար :

4 Ինչու որ անօրէնութիւններս գլու-
խէս բարձր եղան , ծանր բեռի պէս ա-
ռաւել ծանր են ինծի :

5 Ա՛յ էրբերս հոսեցան ու փտեցան յի-
մարութեանս համար :

6 Օւմբրուկեցայ ու խիստ ցածցայ . ամէն օր տրտում կրպարտիմ :

7 Ասն զի աղիքներս ջերմութիւնով լեցվեցաւ ու ողջութիւն չի կայ մարմնոյս :

8 Տկարացայ ու խիստ կոտորեցայ , սրբտիս հեծութենէն պոռացի :

9 Ո՛վ Տէր , ամէն բաղձանքս քու առջիդ է , ու իմ հեծութիւնս քենէ չի ծածկրվեցաւ :

10 Սիրտս կրբարախէ , ու ժս թող տրւաւ իս , ու իմ աչքերուս լոյսը՝ ան ալ իմ հետրս չէ :

11 Սիրականներս և ընկերներս իմ շարշարանքէս հեռու կրկենան , ու ազգականներս հեռու կրկենան :

12 Աւ անձս փնտրողները ինձի որոգայթ կրլարեն , ու ինձի շարութիւն փնտրողները անօրէնութիւն կրխօսին , և ամէն օր խաբէութիւն կրմտմրտան :

13 Սակայն ես խուլի պէս չեմ լսեր , ու բերանը չի բացող համրի մը պէս եմ :

14 Եւ ես ան մարդուն պէս եմ՝ որ չի լսեր , ու դէմ խօսք չի կայ իր բերանը :

15 Ասն զի , ո՛վ Տէր , ես քեզի կր յուսամ , դուն կրպատասխանես ո՛վ Տէր Լստուածս :

16 Ինչու որ ըսի թէ՛ թող չուրախանան իմ վրաս . ոտքիս սահած ժամանակը ինձի դէմ իրենք կրմեծցունեն :

17 Այսին զի կաղ ըլլալու ևս պատրաստ էմ , ու իմ ցաւս ամէն ատեն առջիս է :

18 Ինչու որ անօրէնութիւնս պիտի պատմեմ , ու մեղքիս համար հոգ պիտի ընեմ :

19 Իայց թշնամիներս ողջ են , ու ժողջան . փուճ տեղը իս ատողները շատցան :

20 Ու աղէկութեան փոխարէն գէշութիւն ըրին ինծի . ինծի գէմ եկան , վասն զի աղէկութեան ետեւէ կերթամ ևս :

21 Իս մի՛ թողուր ո՛վ Տէր Աստուածս , ինծմէ հեռու մըլլար :

22 Ինծի օգնութիւն արտորա՛ ո՛վ Տէր , իմ փրկութիւնս :

ՍԵՂ ՍՈՍ • ԼԺԻ :

Վախաւոր երգեցողին Իգիլեոսին , Սաղմոս
Վախալին :

Բնի թէ ճամբաներս պահեմ , որ լեզուովս մեղք չի գործեմ . բերանս սանձով պահեմ , մեղաւորը իմ առջիս եղած ատենը :

2 Մուսճ եղայ՝ լուծիւնով , աղէկութեան համար լուցի , ու ցաւս շարժեցաւ :

3 Սիրտս բորբոքեցաւ ներսիդիս , ջերմութեանս մէջ կրակը վառեցաւ . լեզուովս խօսեցայ :

4 Հուցուր ինծի, ո՛վ Տէր, իմ վերջս,
 ու օրերուս չափը ո՞րչափ է. ո՞ր գիտնամ
 թէ ինչպէս անցաւ որ եմ :

5 Ա՛հա իմ օրերս թիզերու չափ դրիր,
 ու իմ կեանքս ոչինչի պէս է քու առջիդ.
 Իրաւ ամէն մարդ լե՛պե՛ր հաստատուած է,
 Բոյց բոլորովին փուճ է : Ա՛լլայ :

6 Իրաւցունէ մարդը ստուերի մը պէս
 կը պտըտի. արդարեւ փուճ տեղը անհան-
 դիստ է. կը դիզէ՛ ու ո՛վ պիտի առնէ անոնք
 չի յտէ :

7 Աւ հիմայ՝ ի՞նչ բանի սպասեմ ո՛վ
 Տէր, իմ յոյսս քեզի է :

8 Ա՛մէն յանցանքներէս իս փրկէ. յի-
 մարներուն նախատինքին իս մի՛ դներ :

9 Ս՛ունճ եղայ ու բերանս չի բացի,
 վասն զի դուն ըրիր :

10 Օ՛արնելդ հեռու ըրէ ինձմէ, ձեռքիդ
 հարուածքովը ես վատեցայ :

11 Ա՛նօրէնու թեան համար չեխելով կը
 խրատես մարդը. ցեցի մը պէս կը հալեցու-
 նես ամէն անոր ցանկալի բաները, իրաւ-
 ցունէ ամէն մարդ փուճ է : Ա՛լլայ :

12 Ո՛վ Տէր, լսէ աղօթքիս ու ականջ
 դիր աղաղակիս. արցունքներուս մի՛ լուեր,
 ինչու որ քու առջիդ պանդուխտ մը եմ ես,
 հիւր մը իմ ամէն նախնիքներուս պէս :

13 Թոյլ տուր ինծի որ զուարթանամ
 բանի որ չեմ գացեր ու չեմ գտնուիր :

ՍԵՂ ՍՐԱՍ . Խ :

Գլխաւոր երգեցողէն , Սողոմոն Գաւլի :

Սպասելով սպասեցի Տէրոջը , ու ծոցաւ
ինձի , ու լսեց իմ կանչելս :

2 Ու իս կորստեան փոսէն «- տղմալից
կաւէն հանեց , ու ոտքերս քարին վրայ ա-
մուրցուց , «- քալվածքս հաստատեց :

3 Ու բերանս մէկ նոր երգ մը դրաւ ,
մեր Մատուծոյ շնորհակալութիւնը . ա-
տերը պիտի տեսնան ու պիտի վախնան , ու
Տէրոջը պիտի յուսան :

4 Երանի՛ ան մարդուն , որ իր յոյսը
Տէրոջը կրդնէ , ու չի նայիր հպարտնե-
րուն , ու սուտին դարցողներուն :

5 Եւ շատ էն սքանչելիքներդ , ո՛վ Տէր
իմ Մատուածս , «բ բրեր ես , ու մեր վրայ
ունեցած խորհուրդներդ մէկը չի կրնար
կարգաւ պատմել քու առջիդ . պիտի պատ-
մէի ու խօսէի , Բայց համբանքէն էվել
շատ են :

6 Օ՛րհ ու բնծայ չուղեցիր . իմ ականջ-
ներս բացիր . ողջակեղներ՝ ու մեղաց հա-
մար զոհ չի խնդրեցիր :

7 Ան ժամանակը ըսի թէ՛ Մահ կուգամ
ես , գիրքին ծալքին մէջը ինձի համար
գրված է :

8 Ո՛վ իմ Մատուածս , քու կամքդ կատարելու կամեցայ , ու քու օրէնքդ ներսիդիս է :

9 Մտաբուծիւն քարոզեցի շատվոր ժողովուրդին մէջը . ահա պոկունքներս շարդիլեցի , ո՛վ Տէր , դուն գիտես :

10 Արտիս մէջը գաղտուկ չի պահեցի քու արդարութիւնդ . հաւատարմութիւնդ ու փրկութիւնդ պատմեցի . քու ողորմութիւնդ ու ճշմարտութիւնդ շատվոր ժողովուրդէն չի ծածկեցի :

11 Դուն՝ ո՛վ Տէր , քու գթութիւնդ մի՛ ետ պահեր ինձմէ , քու ողորմութիւնդ ու ճշմարտութիւնդ ամէն ժամանակ թող պահեն իս :

12 Այսն զի անթիւ շարիքներ իս պատեցին . անօրէնութիւններս ինձի հասան , ու ես չեմ կրնար տեսնալ . գլխուս մազէն շատ են . ու սիրտս իս թողուց :

13 Ո՛վ Տէր , իս փրկելու կամք ըրէ . ո՛վ Տէր , ինձի օգնելու փոյթ ըրէ :

14 Թող ամբչնան ու մէկ տեղ խայտառակ ըլլան իմ անձս փնտրողները , անիկա կորսընցունելու համար . ետ դառնան ու ամբչնան ինձի շարութիւն ուղղները :

15 Թող կործանին իրենց խայտառակութեան պատիժովը , որ ինձի վա՛շ վա՛շ կրսեն :

16 Մէն քեզ փնտրողները քեզմով

Թող ցնծան և ուրախանան . քու փրկու-
թիւնդ սիրողները ամէն ժամանակ Թող
ըսեն՝ Աստուածն մեծանայ :

17 Աղքատ ու տնանկ եմ Բայց Տէրը
հոգ կրտանի ինձի . օգնականս ու աղատիչս
դունես . ո՛վ իմ Աստուածս , մի՛ ուշանար :

ՍԱԳ ՄՈՍ ԽՕԸ :

Գլխաւոր երգեցողէն , Սաղմս Գաւթի :

Արանի՛ անոր , որ աղքատին հոգ կրտա-
նի . նեղութեան օրը՝ Տէրը պիտի փրկէ
անիկա :

2 Տէրը պիտի պահէ ու ապրեցունէ ա-
նիկա . երանելի պիտի ըլլայ երկրի վրայ ,
ու թշնամիներուն կամքին չի պիտի մատ-
նես անիկա :

3 Տկարութեան անկողինին մէջը անոր
ուժ պիտի տայ Տէրը . անոր ամէն անկողի-
նը պիտի դարձունէ անոր հիւանդութեան
մէջը :

4 Ես ըսի , Ո՛վ Տէր՝ ողորմէ ինձի .
բժշկէ իմ անձս , ինչու որ ես մեղանչեցի
քեզի :

5 Թշնամիներս գէշ կրխօսին իմ վրա-
յօքս , ըսելով Ընդ Ե՞րբ պիտի մեռնի ու
անուներ կորսրվի :

6 Թե՛ որ Բելլ ինձի գալու ըլլայ տես-

նալու համար, սուտ կրխօսի. իր սիրտը
անօրէնութիւն կը ժողովէ իրեն համար, ոչ
դուրս ելլէ նէ զըռուցէ :

7 Ինծի դէմ մէկ տեղ կը փսիւրսան ա-
մէն իս ատողները. ինծի համար ինծի դէմ
չարութիւն կը մտմըտան :

8 Կըսէն ընէ՛. Չարութեան բան մը անօր
վրայ թափեցաւ. ու նաև պատկած է, ու
մէկմ ալ չի պիտի ելլայ :

9 Իսկ իմ բարեկամս որի որ յուսացի,
իմ հացս ուտողը ինծի դէմ կը ունկ վեր-
ցուց :

10 Սակայն ո՛վ Տէր, դուն ողորմէ ինծի
ու կանգնեցուր իս, ու ևս փոխարէնը
տամ անոնց :

11 Եսկէ գիտեմ ոչ ինծի կը հաւնիս, որ
թշնամիս իմ վրաս չի պարծենար :

12 Աւ իս անմեղութեան մէջ կը պա-
հես, ու յաւիտեան իս քու առջիդ կը կայ-
նեցունես :

13 () Բնեալ ըլլայ Իսրայէլին Տէր Աս-
տուածը յաւիտեանս յաւիտենից. եղիցի և
եղիցի :

ՄԱՂՍՏՈՍ • ԽՅԻՆ :

Գլխաւոր երգեցողէն . Կորեիի որդոցը
երգը :

Լնչպէս եղջերուն կրփափաքի ջուրերուն
վտակներուն , անանկ կրփափաքի իմ
անձս քեզի՝ ո՛վ Մատուած :

2 Հոգիս ծարաւի է Մատուծոյ , կեն-
դանի Մատուծոյ . երբ պիտի դամ ու երե-
ւամ Մատուծոյ առջին :

3 Գիշեր ու ցորեկ արցունքներս ինձի
հաց եղաւ . երբ որ ամէն օր ինձի կըսեն ,
Թէ՛ Ո՛ր է քու Մատուածդ :

4 Մս բաները միտքս կըբերեմ ու հոգիս
կըթափեմ իմ մէջս . ինչու որ բաղմուծեան
հետ գացեր էի . անոնց հետ Մատուծոյ տու-
նը դացի , ուրախութեան ու օրհնութեան
ձայնով , տօնախմբող բաղմուծեան հետ :

5 Ինչո՞ւ կըցածնաս ո՛վ իմ հոգիս , և
ինչո՞ւ իմ մէջս անհանգիստ ես . Մատուծոյ
յուսացիր . ինչու որ անգամ մըն ալ անոր
շնորհակալ պիտի ըլլամ , իր երեսին փրկ-
կութեանը համար :

6 Ո՛վ իմ Մատուածս , հոգիս իմ մէջս կը
ցածնայ . անոր համար քեզ կըյիշեմ Յոր-
դանանու երկիրէն ու Հերմոններէն «-
փոքր Լեռէն :

7 Այլքքը այլքին կրկանչէ , քու ջուրերուդ վաղած ձայնովը . քու ամէն կոհակներդ ու այլքներդ իմ վրայէս անցան :

8 Յորեկը Տէրը պիտի պատուիրէ իր ուղորմութեանը . ու գիշերը իր երգը ինծի հետ պիտի ըլլայ . — աղօթքս իմ կեանքիս Աստուծոյն ըլլայ :

9 Պիտի ըսեմ Աստուծոյ իմ ժայռիս Ինչո՞ւ իս մոռցեր ես , ինչո՞ւ տրտում պտրտիմ թշնամիին նեղութենէն :

10 Ոսկորներս կոտորտելու պէս թշնամիներս կրնախատէին իս ամէն օր ըսելովնին , թէ՛ Ո՛ր է քու Աստուածդ :

11 Ինչո՞ւ կըցածնաս ո՛վ իմ հոգիս , և ինչո՞ւ իմ մէջս անհանգիստ ես . Աստուծոյ յուսացիր . ինչու որ անգամ մըն ալ անոր շնորհակալ պիտի ըլլամ , ա՛ն է իմ երեսիս փրկութիւնը ու իմ Աստուածս :

ԱՐԳ ՄՈՍ . ԽԳ . :

Իս դատէ , ո՛վ Աստուած , ու իրաւունքս արդարացուր սուրբ չեղող ազգին համար , նենգաւոր ու մեղաւոր մարդէն իս աղատէ :

2 Ինչու որ դուն ես իմ ապաւենիս Աստուածք . ինչո՞ւ իս կըհերքես , ինչո՞ւ տրտում քալեմ ես թշնամիին նեղութենէն :

3 Կու լոյսդ ու ճշմարտութիւնդ խըր-

կէ . անոնք առաջնորդեն ինծի ու իս հանեն
քու սուրբ լեռդ ու քու բնակարաններդ :

4 Ու Աստուծոյ սեղանին քով պիտի եր-
թամ , իմ ուրախութեանս ու ջնճութեանս
Աստուծոյն առջին , ու շնորհակալ պիտի
ըլլամ քեզի սաղմոսարանով , ո՛վ Աս-
տուած՝ իմ Աստուածս :

5 Ինչո՞ւ կըրցածնաս ո՛վ իմ հոգիս , և
ինչո՞ւ իմ մէջս անհանգիստ ես . Աստուծոյ
յուսացիր . ինչու որ անգամ մըն ալ անոր
շնորհակալ պիտի ըլլամ , ա՛ն է իմ երեսիս
փրկութիւնը ու իմ Աստուածս :

ՍԱՂ ՍՈՍ . ԽՊԻ :

Գլխաւոր երգեցողին , Կրեին որդոցը երգը :

Ո՛վ Աստուած , ականջներովնիս լսեցինք ,
հայրերնիս մեզի պատմեցին ա՛ն գործը
որ անոնց օրերը գործեցիր առջի ժամանա-
կը :

2 Գու՛ն քու ձեռքովդ հեթանոսները
բշեցիր ու անոնք հայրերնի՛ն անկեցիր . չար-
չարեցիր ժողովուրդները , ու վա՛նտեցիր
անոնք :

3 Ըէ՛ թէ իրենց սուրովը ժառանգեցին
երկիրը , ու չէ՛ թէ իրենց թւը փրկեց ա-
նոնք . հապա քու աջ ձեռքդ ու քու թւդ
և քու երեսիդ լոյսը . վասն զի անոնց հա-
ճեցար :

4 Դուռն ինքդ ես իմ [Թագաւորս ո՛վ
 Լստուած , հրաման տուր Յակօբին վեր-
 կու թիւններուն համար :

5 Վեզմով թշնամիներնիս գետինը պի-
 տի զարնենք , քու անունովդ մեր վրայ ել-
 լողները օտքի տակ պիտի առնենք :

6 Ասն զի աղեղիս չեմ յուսար , ու
 թուրս իս չի կրնար ազատել :

7 Հապա դուռն կրփրկես մեզ մեր թըշ-
 նամիներէն , ու մեզ ատողները խայտառակ
 կրնես :

8 Լմէն օր Լստուծով պարծենանք , ու
 յաւիտեան քու անունիդ շնորհակալու-
 թիւն ընենք : Սէլայ :

9 Սակայն վճրնտեցիր ու խայտառակ ը-
 րիր մեզ , ու մեր զօրքերուն հետ չես եր-
 թար :

10 Թշնամիէն մեզ ետ դարձուցիր , ու
 մեզ ատողները Դեւ յամիշտակեցին իրենց
 համար :

11 Սեզ ոչխարի պէս ուտվելու տը-
 ւիր , ու հեթանոսներուն մէջը մեզ ցրուե-
 ցիր :

12 Վու ժողովուրդներդ առանց գնոյ
 ծախեցիր , ու չէվելցուցիր քու հարստու-
 թիւնդ անոնց գիներովը :

13 Վրացիներնուս մեզ խայտառակ ը-
 րիր , ծաղր ու կատակ չորս կողմերնիս ե-
 ղողներուն :

14 Հեթանոսներուն մէջ մեզ առակ ըրիր , « ժողովուրդներուն մէջը գլուխնին երերցունելու պատճառ :

15 Մէն օր խայտառակութիւնս առջիս է , ու երեսիս ամօթը իս կրծածկէ .

16 Նախատողին ու հայհոյողին ձայնէն , թշնամիին ու վրէժխնդիրին համար :

17 Մս ամէնը եկաւ մեր վրայ . սակայն մենք քեզ չի մոռցանք , և քու ուխտիդ դէմ սուտ չելանք :

18 Սիրտերնիս ետ չի դարձան , ու քաւվածքնիս քու ճամբէդ դուրս չելան :

19 Թէպէտ մեզ վիշապին եղած տեղը ճգմեցիր , ու մահուան ստուերովը մեզ ծածկեցիր :

20 Թէ որ Մստուծոյ անունը մոռցեր ենք նէ , կամ օտար Մստուծոյ ձեռքերնիս երկընցուցեր ենք նէ ,

21 Մստուած չի՞ փնտրուէր անիկա , որ ինքը սրտին գաղտնիքները գիտէ :

22 Նայց ամէն օր քեզի համար կրսպաններովնք , մօրթըվելու ոչխարի պէս կրսեպվինք :

23 Մթթեցի՛ր՝ ինչո՞ւ կրքնանաս , ո՞վ Տէր , ելի՛ր՝ մի՛ վաճառեր Բոլ յաւիտեան :

24 Ինչո՞ւ երեսդ կրծածկես , կրմոնաս մեր տրամութիւնը ու նեղութիւնը :

25 Ինչու որ մեր անձը մինչև հողը ծրուեցաւ մեր փորը գետինը փակաւ :

26 Ելի՛ր մեր օգնու թեանը , ու ազատէ մեզ քու ողորմու թեանդ համար :

ՍԱՂ ՄՈՍ . ԽԵ :

Գլխաւոր երգեցողն Եւզանի՛ի Չուր , կուր-
նին որդոցը շերէնա՛ծ , երգ սիրոյ :

Լմ՛ սիրտս բարի խօսքով կեփի . խօսքս
թագաւորին համար պիտի խօսիմ՝ , իմ
լեզուս երազագրին գրիչին պէս է :

2 Դուն գեղեցիկ ես մարդոց որդիքնե-
րէն . շնորհք թափեցաւ քու պոկունքնե-
րուդ վրայ , անոր համար Մատուած յա-
ւիտեան քեզ օրհնեց :

3 Ա՛յլ հզօր թուրդ մէջքդ կապէ , ան է
քու փառքդ ու վայելչութիւնդ :

4 Աւ վայելչութիւնովդ յաջողվէ՛ ճըշ-
մարտութեան ու հեղութեան նարդարու-
թեան համար . հեծիր ու քու աջ ձեռքդ քե-
ղի դարմանալի բաներ պիտի սորվեցունէ :

5 Ահտերդ սրված են թագաւորին
թշնամիներուն սրտին մէջը , ժողովուրդնե-
րը քու տակդ կիյնան :

6 Ա՛յլ Մատուած , քու աթոռդ յաւի-
տեանս յաւիտենից է . քու թագաւորու-
թեանդ գաւազանը արդարութեան գա-
ւազան է :

7 Մարդարութիւնը կըսիրես ու անօրէ-

նու թիւնը կատես . անոր համար ո՛վ Մտտուած , քու Մտտուածդ ուրախութեան իւղով քեզ օծեց քու ընկերներէդ է՛վէլ :

8 Օ՛մուռ ու հալուէ և կասիայ բոլոր հանդերձներիդ կը հոտին , փղոսկրէ տաճարներուն նստաբարաննէրուն լարերը քեզ ուրախացուցին :

9 Թագաւորներուն աղջիկները սիրականներուդ մէջն են . Թագուհին քու աջ կողմդ կրկանգնի Ա՛վփիրի ոսկիով :

10 Ա՛վ աղջիկ՝ լսէ՛ ու տե՛ս , և քու ալկանջը ծուէ՛ . ու մոռցի՛ր քու ժողովուրդդ և քու հօրդ տունը :

11 Մնատենը Թագաւորը պիտի ցանկայ քու գեղեցկութեանդ , ինչու որ ան է քու Տէրդ ու անոր երկիրպագութիւն ըրէ :

12 Աւ Օ՛ուր տալանն աղջիկը , ու ժողովուրդներուն հարուստները ընծայով պիտի խնդրեն քու երեսդ :

13 Թագաւորին աղջիկը բոլորովին փառաւոր է ներսը , ոսկի թելով հուսված է իր հանդերձը :

14 Ակարակերպած հանդերձով պիտի բերվի Թագաւորին . իր ետեւէն եկող աղջիկ ընկերները քեզի պիտի բերվին :

15 Հնձութիւնով և ուրախութիւնով պիտի բերվին , Թագաւորին պալատը պիտի մտնան :

16 Հայրերուդ փոխարէնը որդիքդ պի-

տի ըլլան , անոնք ամէն երկրի մէջ իշխաններ պիտի ընես :

17 Վրու անունդ հռչակել պիտի տամ ամէն ազգերուն մէջ . անոր համար ժողովուրդները պիտի գովեն քեզ յաւիտեանս յաւիտենից :

ՍՆՂԱՌՈՍ . ԽԾ . :

Գլխաւոր երգեցողէն Կրեկն որդոցը երգ
Մանգլէն վրայ :

1 Ստուած մեր ապաւէնը ու զօրութիւնն է , նեղութիւններուն մէջը խիստ օգնական կը գտնուի :

2 Մեր համար շի պիտի վախնանք գետնին փոխվելովը , ու լեռներուն ծովին մէջ տեղը ձգվելովը :

3 Թեպէ որ անոր ջուրերը կը գոռան որ կը պղտորին , լեռները կը դողան անոր ուննալովը : Մէլայ :

4 Գետը իր վտակներովը պիտի ուրախացունէ Ստուծոյ քաղաքը , Վարձրեալին սուրբ բնակարանները :

5 Ստուած անոր մէջն է շի պիտի սասանի , Ստուած պիտի օգնէ անոր առտրվանց կանուխ :

6 Հեթանոսները կը շփոթին թագաւորութիւնները կը շարժին . իր ձայնը կուտայ , երկիրը կը հալի :

7 Օօրքերուն Տէրը մեզի հետ է , Յակոբին Մատուածը մեզի ապաւեն է : Աւելայ :

8 Եկէք — տեսէք Տէրոջը գործքերը , որ աւերումներ բրաւ երկրի մէջը :

9 Պատերազմները կը դադարեցնէ մինչեւ երկրի ծայրը . աղեղը կը կոտորտէ , նիզակը կը կըջարդէ , կառքերը կը ակոյլ կէրէ :

10 Դադարեցէք ու ճանչցէք որ ես եմ Մատուած . հեթանոսներուն մէջը պիտի բարձրանամ , երկրի վրայ բարձրանամ :

11 Օօրքերուն Տէրը մեզի հետ է , Յակոբին Մատուածը մեզի ապաւեն է : Աւելայ :

ՍԱԳՍՈՒՄ ԻՍԻ :

Դիտուող երգեցողէն , կողմին որդոց
Սողունը :

1 Առաք աճէն ժողովուրդներ ծափ զարկէք , ցնծութեան ձայնով Մատուածոյ ցնծացէք :

2 Ասան զի Տէրը՝ Բարձրեայը ահարկու է , աճէն երկրի վրայ մեծ թագաւոր է :

3 Ժողովուրդները մեր տակը կը նազանդեցունէ , ու ազգերը ոտքերնուս տակը :

4 Բնորեց մեզի մեր ժառանգութիւնը ,

Յակորին փառաւորութիւնը որ սիրեց :
Աւելայ :

5 Աստուած ցնծութիւնով վեր ելաւ ,

Տէրը փողին ձայնովը :

6 Սաղմոս երգեցէ՛ք Աստուծոյ , սաղմոս
երգեցէ՛ք . սաղմոս երգեցէ՛ք մեր թագաւորին ,
սաղմոս երգեցէ՛ք :

7 Ասն զի ամէն երկրի վրայ թագաւորը
Աստուած է . երգ երգեցէ՛ք :

8 Աստուած հեթանոսներուն վրայ կը
տիրէ , Աստուած կընստի իր սուրբ աթոռին
վրայ :

9 Ժողովուրդներուն իշխանները ժողովրդեցան
Աբրահամին Աստուծոյ ժողովուրդին հետ .
վասն զի երկրի վահանները Աստուծոյ են .
ինքը խիստ բարձրացած է :

ԱՆՎՄՈՍ ԻԲԷ :

Կրե՛ն որո՞ցը Սաղմոն երգը :

Տէրը մեծ է ու խիստ օրհնեալ է մեր Աստուծոյ
քաղաքին մէջը , իր սուրբ լեռանը վրայ :

2 Գեղեցիկ բարձրութիւնով բոլոր երկրի
ուրախութիւնը Սիօնին լեռն է . հիւսիսային
կողմերն է , մեծ թագաւորին քաղաքը :

3 Աստուած անոր պալատներուն մէջը

ապաւէն գիտցրված է :

4 Այսին զի ահա թագաւորները ժողովրդեցան , ու մէկ տեղ անցան :

5 Անոնք տեսածներնուն պէս զարմացան . զարհուրեցան , ու շուտով փախան :

6 Ան տեղը երկիւղը՝ անոնք բռնեց , ու ցաւը՝ զաւակ ծնանողի ցաւի պէս :

7 Արևելեան հովով Թարսիսի նաւերը կըխորտակես :

8 Ինտոր լսեցինք ասանկ ալ տեսանք զօրութիւններուն Տէրոջը քաղաքին մէջ , մեր Աստուծոյ քաղաքին մէջ . Աստուած անիկա պիտի հաստատէ յաւիտեան : Ահա :

9 Այլ Աստուած , քու ողորմութիւնդ կըբնութենք քու տաճարիդ մէջը :

10 Բու գովութիւնդ՝ ո՛վ Աստուած , քու անունիդ պէս մինչև երկրի ծայրն է , արդարութիւնով լեցուն է բոլոր աջ ձեռքդ :

11 Ան լեւր թող ուրախանայ , ու Յուդային աղջիկները թող ցնծան քու իրաւունքիդ համար :

12 Անոնին չորս կողմը պըտրտեցէք , ու անոր բողբոջիքը շարվեցէք , ու աշտարակները համրեցէք :

13 Ակատեցէ՛ք անոր պարիսպները . անոր պալատները նայեցէ՛ք , որ գալու աղգին պատմէք :

14 Այսին զի աս Աստուածը մեր Աս-

տուածն է յաւիտեանս յաւիտենից . ան
պիտի առաջնորդէ մեզի մինչև 'ի մահ :

ՍՆՂ ՄՈՍ . ԽԹ . :

Գլխաւոր երգեցողն Կրեկն որդի
Սողոմոն :

I սէցէ՛ք ասիկա դուք ամէն աղօքեր , ականջ
դրէ՛ք աշխարհի մէջ ամէն բնակողներ :

2 Սամիկներ ու ազնուականներ , հա-
րուստներ ու աղքատներ մէկ տեղ :

3 Իմաստութիւններ պիտի խօսի իմ բե-
րանս , ու սրտիս խորհուրդները հանճար :

4 Իմ ականջս դէպի առակի պիտի
ծռեմ . առակներս սաղմոսարանով պիտի
բանամ :

5 Ինչո՞ւ վախնամ չար օրերուն մէջը
երբոր դարանակալներուն անօրէնութիւնը
չորս կողմս կը պատէ :

6 Իրենց ուժին յուսացողները ու ի-
րենց հարստութիւններուն շատութիւնովը
պարծոցները ,

7 Ինչաւ մարդ մը չի կրնայ փրկել իր
եղբայրը , — չի կրնայ տալ Մատուծոյ անոր
փրկը վեկուն գինը .

8 (Ինչու որ սուղ է անոնց անձին փրկ-
կութեանը գինը . ու յաւիտեան դադա-
րի պիտի .)

9 Որ ապրի յաւիտեանս , ու ապակա-
նութիւն չի տեսնայ :

10 Ինչու որ կըտեսնայ թէ իմաստուն-
ները կըմեռնին , յիմարը ու անխելքը մէկ
տեղ կըկորսըվին , ու իրենց ստացուածք-
ները ուրիշներուն կըթողուն :

11 Ընոնց խորհուրդը աս է՝ որ իրենց
տուները յաւիտեան պիտի մնան , իրենց
բնակարանները ազգէ մինչև ազգ . երկիր-
ները իրենց անուններովը կըկոչեն :

12 Իայց մարդը պատուի մէջ չի մնար .
անասուններուն նման է որ կըկորսըվին :

13 Ընոնց աս ճամբան իրենց յոյս նէ ,
ու անոնց ետեւէն եկողները անոնց խօսքին
հաճութիւն պիտի տան : Սէլայ :

14 Աշխարհներու պէս մահվան կըմատնը-
վին , ու մահը պիտի հովէ անոնք . ու շի-
տակ եղողները՝ անոնց վրայ պիտի տիրեն
առտրվանց . և անոնց դէմքը գերեզմանին
մէջ պիտի մաշի իրենց բնակարանէն :

15 Սակայն Ըստուած գերեզմանին ձեռ-
քէն պիտի փրկէ իմ հոգիս , ինչու որ իս
պիտի ընդունէ : Սէլայ :

16 Սի՛ վախնար երբոր մարդ մը հա-
րուստնայ , ու անոր տանը փառքը շատնայ :

17 Ա ասն զի մեռնելու ատենը ամենեին
բան մը իր հետը չի պիտի առնէ , ու իր
փառքը իր ետեւէն չի պիտի իջնայ :

18 Թէպէտ իր անձը գովեց իր ապրած

ժամանակը . ու քեզ գովեցին երբոր դուն
աղէկութիւն ըրիր քեզի :

19 Ան իր նախնիքներուն ցեղին պիտի
երթայ , մինչև յաւիտեան լոյս չի պիտի
տեսնան :

20 Մարդը որ պատուի մէջ է՝ ու չի
ճանչնար , անասուններուն կը նմանի ոչ կը
կորսըվին :

ՍԱՂ ՄՈՍ . ԿՕ :

Սուգնս սաստիկ :

Ստուածներուն Մտուածը՝ Տէրը խո-
սեցաւ , ու երկիրը կանչեց արեւելքէն
մինչև արեւմուտքը :

2 Միօնէն՝ գեղեցկութեան կատարելու-
թենէն Մտուած փայլեցաւ :

3 Մեր Մտուածը պիտի գայ ու չի պի-
տիլուէ . անոր առջին փձացընող կրակ , ու
չորս կողմը սաստիկ փոթորիկ պիտի ըլլայ :

4 Երկինքին պիտի կանչէ վերէն , ու
երկիրին՝ իր ժողովուրդը դատելու համար :

5 Ինծի ժողովեցէք իմ աստուածապաշտ-
ներս . ու ինծի հետ զոհով ուխտ ընողնե-
րը :

6 Աւ երկինքները անոր արդարութիւն-
ները պիտի պատմեն . վասն զի Մտուած
ինքը դատաւոր է : Սէլայ :

7 Իսէ դուն՝ ո՛վ իմ ժողովուրդս , ու խօսիմ՝ . ո՛վ Խորայէլ , ու քեզի մկայութիւն ընեմ , որ ես եմ Մատուած՝ քու Մատուածդ :

8 Վրու զոհերուդ համար չեմ չախեր քեզ , ու քու ողջակէզներուդ համար որ միշտ իմ առջիս են :

9 Վրու տունէդ զուարակ չեմ առներ , ու չքու գոմերէդ նոխազներ :

10 Ինչու որ իմս է անտառին ամէն դազանները , հազարաւոր լեռներուն անասունները :

11 Ես գիտեմ լեռներուն ամէն թռչունները , ու վայրի գազանները իմ հետս են :

12 Թէ որ անօթեմամ՝ քեզի չի պիտի բսեմ . վասն զի աշխարհը ու իր լեռնութիւնն ալ իմս է :

13 Ես զուարակներուն միսը կուտեմ մի , ու նոխազներուն արիւնը կըխամեմ մի :

14 Եւ որ հակալու թեան զոհ ըրէ Մատուածդ , ու քու ուխտերդ կատարէ Վարձրելոյն :

15 Ու նեղութեան օրը ինծի կանչէ . ես քեզ պիտի փրկեմ , ու դուն իս պիտի փառաւորես :

16 Սակայն Մատուած մեղաւորին կըսէ թէ , Վեզի ի՞նչ՝ որ դուն կըպատմես իմ օրէնքներս ու բերանդ կառնես իմ ուխտս :

17 Ս ասն զի դուն խրատը ատեցիր , ու ետիդ կըձգես իմ խօսքերս :

18 Գող տեսնալու ըլլայիր նէ՛ անոր
հետ կըմիարանէիր , ու շնացողներուն հետ
բաժին ունիս :

19 Վ.ու բերանդ չարութեան կուտաս ,
ու քու լեզուդ նենգութիւնը կընարէ :

20 Արնատիս կըխօսիս եղբօրդ դէմ , մօրդ
որդիին դէմ չարախօսութիւն կընես :

21 Աս բաները ըրիր ու ես լռեցի , կար-
ծեցիր թէ՛ ես ստոյգ քեզի նմանիմ . Բայց
քեզ պիտի չախեմ , ու աչքըներուդ առջևը
պիտի շարեմ անանց ամէնը :

22 Ա՛հա՛ իմացէ՛ք ասիկա՛՝ ո՛վ դուք Աս-
տուած մոռցողներ , որ չըլլայ թէ ձեզ
պատուեմ , ու փրկող մըն ալ չըլլայ :

23 Ե՛ նորհակալութեան զոհ ընողը իս
կըրիառաւորէ . ու իր ճամբուն միտք զնողին
պիտի ցըցունեմ Աստուծոյ փրկութիւնը :

ՍԱԳ ՄՈՍ ԿՆԻ :

Գլխաւոր երգեցողէն , Սողոմոն Գաւլի . ան
Ժամանակը՝ որ Աստուան հարգարէ անոր եկա-
ր Ներսաբէն թող հանալէն ետքը :

Ով Աստուած , քու ողորմութեանդ չա-
փուր ողորմէ ինձի , քու շատ գթու-
թեանդ չափուր աւրէ իմ անօրէնութիւնս :

2 Իմ անօրէնութենէս բոլորովին իս
լուա , ու իմ մեղքէս իս սրբէ :

3 Այս ան զի ես գիտեմ իմ անօրէնութիւնս , ու իմ մեղքս միշտ իմ առջիս է :

4 Քեզի , մինակ քեզի մեղանչեցի , ու քու աչքերուդ առջևը շարութիւն ըրի . որ արդար ըլլաս խօսքիդ մէջ , ու անարատ ըլլաս դատաստանիդ մէջ :

5 Ահա անօրէնութիւնով ծնայ , ու մեղքով մայրս իս յղացաւ :

6 Ահա դուն ճշմարտութիւն կուզես երիկամունքին մէջը , ու ծածուկ պէտք իմաստութիւն պիտի գիտցունես ինծի :

7 Աշտիկով մաքրէ իս , ու մաքուր ըլլամ . լուա իս , ու ձունէն աւելի ճերմակ ըլլամ :

8 Զնծութիւն և ուրախութիւն լսել տուր ինծի , թող ցնծան ան ոսկորները « Կոտրեցիր :

9 Իմ մեղքերէս երեսդ ծածկէ , ու ամէն անօրէնութիւններս աւրէ :

10 Այլ Աստուած , իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ , և ուղիղ հոգի իմ մէջս նորոգէ :

11 Իս երեսէդ մի՛ ձգեր , ու քու Սուրբ Հոգիդ ինծմէ մի՛ հաներ :

12 Փրկութեանդ ցնծութիւնը դարձուր ինծի , ու կամաւոր հոգի մը պիտի ամուրցունէ իս :

13 Անօրէններուն պիտի սորվեցունեմ քու ճամբաներդ , ու ամբարիշտները քեզի պիտի դառնան :

14 Այլ Աստուած՝ իմ փրկութեանս
 Աստուածը, փրկէ իս արունհնդութենէն .
 լնդուս պիտի ցնծայ քու արդարութեանդ
 վրայ :

15 Այլ Տէր, իմ պոկունքներս բաց, ու
 իմ մերանս պիտի պատմէ քու գովութիւնդ :

16 Ասան զի զոհ չես կամիր որ անկա-
 մատուցանէի . դուն ողջակէզն ալ չես հաւ-
 նիր :

17 Աստուծոյ զոհը կոտրած հոգին է .
 կոտրած ու խոնարհ սիրտը՝ ոյլ Աստուած .
 չես անարգեր :

18 Բու բարևսիրութիւնովդ Աիօնին
 բարի ըրէ, Երուսաղէմին պարիսպները
 շինէ :

19 Անատներ պիտի հաւնիս արդարու-
 թեան զոհերուն՝ ողջակէզներուն ու բոլոր
 մատաղներուն : անատներ քու սեղանիդ
 վրայ զուարակները պիտի մատուցանեն :

ԱՆՎՄԱՍ ԾԻ :

Գլխաւոր երգեցողին, Գաւթի երգը . ան ու-
 ըր՝ երբոր Գովէի Երուսաղէմին եկաւ ու-
 զորոցեց Աստուղին՝ ու անոր ըստ, լէ՛ Ահա
 Գաւթի Աբիէլէի գաւթը եկեր է :

Անչո՞ւ կրպարծիս անօրէնութիւնով դուն՝
 ոյլ բռնաւոր . Աստուծոյ գթութիւնը
 ամէն օր կայ :

2 Եղուդ չարութիւններ կը նարէ, սուր
ածելիի պէս նենգութիւն կընէ .

3 Չարութիւնը աղէկութիւնէն՝ ստու-
թիւնը արդար խօսքէն է վէլի կը սիրես :
Սէլոյ :

4 Ըմէն աւրելու խօսքերը՝ «- նենգաւոր
լեզուն կը սիրես :

5 Ու Ըստուած յաւիտեան քեզ պիտի
կործանէ, քեզ պիտի բռնէ ու քեզ հանէ
բնակարանէն, ու քեզ արմատախիլ պիտի
ընէ կենդանեաց երկիրէն : Սէլոյ :

6 Ըրդարները պիտի տեսնան ու պիտի
վախնան, ու անոր վրայ ծիծաղին Ը-Է-Ը-Ը ,

7 Ըհա մարդը՝ որ Ըստուած իր զօրու-
թիւնը չըրաւ, հասկա իր շատ հարստու-
թեանը յոյս դրաւ, ու իր անօրէնութիւ-
նովը ուժովցաւ :

8 Սակայն ես Ըստուծոյ տանը մէջ կա-
նանչ ձիթենիի պէս եմ . Ըստուծոյ ողոր-
մութեանը կը յուսամ յաւիտեանս յաւի-
տենից :

9 Վեղի շնորհակալ պիտի ըլլամ յա-
ւիտեան, որ կատարեցիր . ու քու անունիդ
պիտի սպասեմ, վասն զի բարի է սուրբե-
րուդ առջին :

ՍՆՂ ՍՈՍ ԾԳ :

Գլխաւոր երգեցողէն , Սահալալէն վայ ,
Գալէ երգը :

1 Սենդը իր սրտին մէջը ըսաւ թէ՛ Մտտուած չի կայ . պղծբլիցցան ու պիղծ անօրէնութիւնը բրին . մէկ մը չի կայ որ աղէկու թիւն ընէ :

2 Մտտուած երկինքէն նայեցաւ մարդոց որդոցը մրայ , որ տեսնայ թէ կայ իմատուն մէկը՝ զՄտտուած փնարոող :

3 Մէնքը ետ քաշվեցան , մէկ տեղ պրղծբլիցցան . աղէկութիւն ընող մէկ մը չի կայ , ու մէկ մըն ալ չի կայ :

4 Չեն ճանչնար անօրէնութիւն ընողները , որ հացը ուտելու պէս կուտեն իմ ժողովուրդս , ու Մտտուծոյ չեն կանչեր :

5 Մենք ան տեղը շատ վախցան ուր սք վախ չի կար . ինչու որ քեզ պաշարողներուն սսկորները ցրվեց Մտտուած . ամբչցուցիր անոնք , վասն զի Մտտուած անարգեց անոնք :

6 Երանի թէ Սիօնէն գար Իսրայէլի փրկութիւնը . Մտտուած իր ժողովուրդը գերութենէն դարձուցած ատենը , չակորը պիտի ցնծայ՝ և Իսրայէլը ուրախ պիտի ըլլայ :

ՍՆՂԱՄՈՍ • ՆՕԳ :

Գլխաւոր երգեցողն , Նիկեոսէ Վրայ ,
 Գաւթի երգը . առ ապենը որ Օկոմցիները
 եկան ու բնն Սաւաղն . ահա Գաւթի Բեր
 իմը ծածկած չէ՞ թ :

Ո՛վ Մատուած , քու անունովդ իս ապրե-
 ցո՛ւր , ու քու զօրութիւնովդ իրաւունք
 քե՛զ ինձի :

2 **Ո՛վ** Մատուած , աղօթքիս լսէ՛ , բե-
 րանիս խօսքերուն ականջ դի՛ր :

3 **Ա** ասն զի օտարները իմ վրաս ելան ,
 ու բռնաւորները կրփրնտրան իմ անձս .
 ու Մատուած իրենց առջևը չի դրին : Աե-
 լայ :

4 **Մ**տուած Մատուած ինձի օգնական է .
 Տէրը իմ հոգիիս պաշտպաններուն հետն է :

5 **Չ**արութիւնը թշնամիներուս վրայ
 պիտի դարձունէ . ճշմարտութիւնովդ կօր-
 սրնցուր անոնք :

6 **Ե**ս իմ կամքովս քեզի զոհ մատուցա-
 նեմ . ո՛վ Տէր , քու անունիդ շնորհակալ
 պիտի ըլլամ՝ վասն զի բարի է :

7 **Ա** ասն զի ամէն նեղութենէն իս փրկեց ,
 ու թշնամիներուս վրայօք ուղծու
 աչքս տեսաւ :

ՍԱՂՍՈՍ ԿՕԵ :

Գլխաւոր երգեցողէն , Նիւնօլէ լեայ ,
Գաւթի երգը :

1 Վ՛ր Մատուած , ալանջ դի՛ր իմ աղօթ-
քիս , ու իմ խնդրուածքէս քեզ մի՛
ծածկեր :

2 Այլ ու պատասխանէ ինձի . տրտ-
մութիւնովս կը պըտըտիմ ու կը խռովիմկոր :

3 Թշնամիին ձայնէն ու ամբարիշտին
նեղութիւն տալէն . ինչու որ անիրաւու-
թիւն վրաս կը ձգեն , ու բարկութիւնով
իս կը հալածեն :

4 Սիրտս դողաց իմ ներսս , և մահուան
վախերը իմ վրաս ինկան :

5 Ա՛խ ու դող եկաւ իմ վրաս , ու
սոսկումը իս ծածկեց :

6 Աւրսի , Երանի թէ աղաւնիի նման
թևեր ունենայի , որ թռչէի ու հանգիստ
ըլլայի :

7 Մահահուն կը փախչէի , անապա-
տին մէջը կը բնակէի . Սէլայ :

8 Սաստիկ հովէն ու փոթորիկէն իմ
փախչիլս կարտորցունէի :

9 Վ՛ր Տէր , աւրէ , անոնց լեզուները
բաժնէ . վասն զի քաղքին մէջը բռնութիւն
ու կռիւ տեսայ :

10 Հորեկ ու գիշեր անոր չորս կողմը՝
անոր պարիսպներուն վրայ կը պրտաբախին .
անօրէնութիւն ու չարութիւն կայ անոր
մէջը :

11 Ընոր մէջը անօրէնութիւն կայ , ու
բռնաւորութիւնը և նենգութիւնը չեն
վատվիր անոր հրապարակներէն :

12 Ինչու որ թշնամին չէր իսնասատողը ,
որ համբերէի . Ի՞նչ ատողը չէր իմ վրաս ին-
քըղինքը մեծցունողը , ու անկէ փախաւրտէի .

13 Հապա դուն՝ ո՞վ մարդ , իմ հաւա-
սարս , ընկերս ու ճանչվորս ,

14 Որ մէկզմէկու հետ անուշ խօսակ-
ցութիւն կընէինք , որ բազմութեան հետ
Ըստուծոյ տունը կերթայինք :

15 Ս՛ահը անոնց վրայ պիտի գայ , ու
ողջ ողջ գերեզմանը պիտի իջնան . վասն
զի անոնց բնակարաններուն — իրենց մէջը
չարութիւն կայ :

16 Ի՞նչ ևս Ըստուծոյ պիտի կանչեմ , ու
Տէրը իս պիտի փրկէ :

17 Իրիկվան՝ առտրվանց ու կէս օրվան
մէջը գանգատ պիտի ընեմ՝ ու հառաչեմ ,
և ան պիտի լսէ իմ ձայնս :

18 Խաղաղութիւնով կը փրկէ իմ անձս
ինծի դէմ եղած պատերազմէն . ինչու որ
չատերը կան իմ քովս :

19 Ըստուած պիտի լսէ , ու յաւիտեան
բնակողը պիտի ցածցունէ անոնք . Սէլայ :

ինչու որ չեն փոխվիր անոնք, ու Աստուծակ չեն վախնար :

20 Չեոքը իրեն հետ հաշտրվածներուն վրայ ձգեց, իր ուխտը աւրեց :

21 Անոր բերնին հօտերը կարագ եղէն կակուղ են, բայց անոր սրտին մէջը պատերազմ կայ. անոր խօսքերը ձէթէն կակուղ են, բայց քաշած լուրեր են :

22 Քու բող Տերօջը վրայ ձգէ, ու ան թիկունք պիտի ըլլայ քեզի. անիկա յաւիտեան սասանութիւն չի տար արդարին :

23 Բայց դուն՝ ո՞վ Աստուած, պիտի իջեցունես անոնք ապականութեան փոսին մէջը. արունտէր ու խաբերայ մարդիկը օրերնուն կէսին չի պիտի հասնին. սակայն ես քեզի կը յուսամ :

ԱՆՂ ՍՈՍ . ՆՕՂ :

Գլխաւոր երգեցողն, Եօնալ Լյէլ Բեհօրիին ձեռն . Գալի երգը . Ինչը Գլէլ Գալիին մէջը Փղարացիներէն Բաւը ձեռն ուրիշը :

Ով Աստուած, ողորմէ ինձի, վասն զի մարդը իս կրկնէկոր. ամէն օր պատերազմ ընելով իս կրնեղէ :

2 Ի՞նչնամիներս ամէն օր իս կրկըլեն, վասն զի շատ մարդիկ ամբարտաւանու-

Թիւնով ինծի հետ կրմարտնչին :

3 Ա՛սխցած օրս քեզի պիտի յուսամ :

4 Ա՛ստուծով պիտի գովեմ իր խօսքը .
 Ա՛ստուծոյ կը յուսամ՝ չի պիտի վախնամ ,
 մարմինը ինծի ի՞նչ կրնայ ընել :

5 Ա՛մէն օր իմ բաներուս մնաս կուտան .
 թողոր անոնց խորհուրդները ինծի համար
 չար են :

6 Կը ժողովուրդին ու կը փախաւրտին . իմ
 շաւիղս կը նկատեն , վասն զի իմ անձիս
 կը սպասեն :

7 Ա՛նօրէնու թիւնով անոնց փրկու թիւն
 կը լլա՞մի . բարկու թիւնով ժողովուրդ-
 ները վար ձգէ , ո՞վ Ա՛ստուած :

8 Իմ թափառական պտըտիլս կը համ-
 րես . արցունքներս քու տկիգ մէջը կը դնես .
 ո՞նե՞ք քու գիրքիդ մէջը չե՞ն մի :

9 Կանչելու օրս թշնամիներս անատներ
 ետ պիտի դառնան . ասիկա գիտեմ , ինչու
 որ Ա՛ստուած ինծի հետ է :

10 Ա՛ստուծով պիտի գովեմ իր խօսքը ,
 Տէրօջմով պիտի գովեմ իր խօսքը :

11 Ա՛ստուծոյ կը յուսամ՝ չի պիտի վախ-
 նամ . մարդը ինծի ի՞նչ կրնայ ընել :

12 Ո՞վ Ա՛ստուած , ուխտերդ իմ վրաս
 են . քեզի շնորհակալութիւններ պիտի
 տամ :

13 Արովհետեւ իմ անձս մահւանէ աղա-
 տեցիր նէ , իմ ոտվըներս ալ վար ի՞նչալէն

չէ՞նք սպասուած որ Մատուծոյ առջին կենդանիներուն լոյսին մէջը պատրտիմ :

ԱՐԳ ԱՄԱՍ ԿՈՒՆ :

Գլխաւոր երգիչներն , Լաւաշէլի , Գաւիլի երգը . Սառնալի երգիչն գեղեցիկ այլը փոփոչն :
Չէլն սպասուած :

Ողորմէ ինծի՛ սիւ Մատուած , ողորմէ ինծի , վասն զի իմ անձս քեզի կը յուսայ . ու քու թեքութեամբ հոգիս առնուած քեանք պիտի ապաւինիմ , մինչև որ թշուառութիւնները անցնին :

2 Ինչպէ՛ս արձրեալ Մատուծոյն պիտի աղաղակեմ , ինծի համար դործող Մատուծոյն :

3 Երկինքէն պիտի խրկէ ու փրկէ իս . իս կլիել ուզողը խայտառակ պիտի ընէ . Սէլայ . Մատուած պիտի խրկէ իր ողորմութիւնը ու ճշմարտութիւնը :

4 Իմ անձս առիւծներուն մէջն է . բոց փչող մարդոց որդիքներուն մէջը կը պառկիմ՝ որոնց ակռաները նիզակ ու նեաեր են , և անոնց լեզուները սուր դանակ են :

5 Ո՛վ Մատուած , դուն երկինքը բարձրացիր , քու փառքդ ամէն երկրի վրայ ըլլայ :

6 Որոգայթ պատրաստեցին քայլերուս ,

անձս վար ծռեցաւ . փոս փորեցին առջիս ,
իրենք ինկան մէջը : Սէլայ :

7 Սիրտս պատրաստ է ո՛վ Աստուած ,
սիրտս պատրաստ է . սաղմոս պիտի երգեմ
ու օրհնեմ :

8 Արթնցի՛ր՝ ո՛վ իմ փառքս . արթնցի՛ր՝
սաղմոսարանն ու քնար . ես կանուխ պիտի
արթննամ :

9 Շնորհակալ պիտի ըլլամ քեզի՛ ո՛վ
Տէր , ժողովրդոց մէջը . սաղմոս պիտի եր-
գեմ քեզի ազգերուն մէջը :

10 Ս ասն զի մեծ է քու ողորմութիւնդ
մինչև երկինքը , ու ճշմարտութիւնդ
մինչև ամպերը :

11 Երկինքին վրայ բարձրացի՛ր՝ ո՛վ
Աստուած , քու փառքդ ամէն երկրի վրայ
ըլլայ :

ՍԱՂՄՈՒՆ ԾՅԻՆ :

Գլխաւոր երգեցողն , Աւետիքն , Գաւթի
երգը :

Իրաւի անբարբառ արդարութիւնը կը
խօսի՞ք մի . արդարութեամբ դատաս-
տան կը տեսնա՞ք մի , ո՛վ մարդոց որդիք-
ներ :

2 Իրաւցրնէ՛ որ սիրտով անօրէնու-
թիւններ կը գործէք . երկրի վրայ ձեռ-
քերնուդ բռնութիւնը կը կշռէք :

3 Մեղաւորները հեռացան արգանդէն ,
 փորէն կըմոլըրին սուտ խօսելով :

4 Ընտնց թոյնը օձի թոյնի պէս է , խուլ
 իժի պէս՝ որ կըգոցէ իր ականջները :

5 Որ չի լըսէ վարպետութեամբ կախար-
 դութիւններ ընող թովիշներուն ձայնը :

6 Ով Ըստուած , բերաններնուն մէջը
 անտնց ականները փշրէ՛ . ով Տէր՝ առիւծին
 լակոտներուն մեծ ականները կոտրտէ՛ :

7 Հային ջուրերու պէս որ կըվազեն ,
 երբոր նետերը քաշեն՝ թող կոտրտին :

8 Խխունջի պէս՝ ոչ քալած ատենը կը
 հայի , կնիկին ձգած զաւկին պէս արևը չի
 պիտի տեսնան :

9 Չեր ամանները փուշին կրակը իմանա-
 լէն առաջ , թարմ՝ ու երող զո-շը փոթո-
 րիկով պիտի ցրուէ :

10 Ըրդարը պիտի ուրախանայ երբոր
 վրէժխնդրութիւնը տեսնայ . իր ոտվըները
 մեղաւորին արիւնովը պիտի լըւայ :

11 Ու մարդը պիտի ըսէ , թէ՛ Իրաւցու-
 նէ արդարին վարձք կայ . իրաւցունէ Ըս-
 տուած կայ , որ երկրի վըայ դատաւոր է :

ԱՆՊ ՄՈՍ . ՆՕԻԹ :

Գլխաւոր երգեցողին , Աւլաշէնէն , Գաւ-
 լէն երգը . անստեղծ ըլլաւ Ստեփաննոսի
 պատգամը , որ Տեառնիկն ա-
 նիկ :

Թ՛ն ամիսներէս իս փրկէ , ո՛վ իմ՝ Աս-
 տուածս . իմ վրաս ելլողներէն իս վեր
 վերցուր :

2 Անօրէնութիւն գործողներէն իս ա-
 զատէ , ու արունտէր մարդիկներէն իս
 փրկէ :

3 Ինչու որ ահա իմ անձիս համար դա-
 րանը մտան . զօրաւոր մարդիկ իմ վրաս
 ժողովրդեցան՝ չէ թէ մեղքիս ու յանցանքիս
 համար , ո՛վ Տէր :

4 Սեղք շունեցած ատենս ձեռս վաղե-
 ցին ու պատրաստը վեցան . արթնցիր իմ
 առջիս ելլելու՝ և նայէ՛ :

5 Ո՛վ դուն զօրքերուն Տէր Աստուածը ,
 Իսրայէլին Աստուածը , արթնցիր ամէն հե-
 թանոսները քննելու համար . չար անօրէն-
 ներուն մէկին մի՛ ողորմիր : Ահա :

6 Իրիկվան ետ կը դառնան , շունի պէս
 կոռնան , ու քաղքին չորս կողմը կը պըտը-
 տին :

7 Ահա իրենց բերնովն կը փսխեն ,

պոկուկքներնուն վրայ սուրբեր կան , ինչու
որ կըսէն ինչ՝ Ո՞վ պիտի լսէ :

8 Ի՛նչո՞ք դուն՝ ո՞վ Տէր , անոնց վրայ
պիտի խնդաս . բոլոր հեթանոսները ծաղր
պիտի քնես :

9 Ո՞վ իմ զօրութիւնս , քեզի պիտի ըս-
պասեմ , վասն զի Աստուած է իմ ապա-
ւէնս :

10 Ողորմութեանս Աստուածը առջև
պիտի առնէ . Աստուած պիտի ցրցունէ ին-
ծի թշնամիներուս վրայօք «-դժ» :

11 Մի՛ մեղցունք անոնք , որ ժողո-
վուրդս չի մոռնայ . թափառական պտրտ-
ցուր անոնք քու զօրութիւնովդ ու վար ձգէ
անոնք՝ ո՞վ Տէր , մեր վահանը :

12 Ի՛նչո՞ք անոնքնուն մեղքին «- պոկուկք-
ներնուն խօսքին համար իրենց ամբարտա-
ւանութիւնովը անոնք թող բռնըվին . ա-
նէծքին ու սուտին համար ալ՝ որ կըխօսին :

13 Կորսնցուր բարկութիւնով , կոր-
սրնցուր անոնք որ ոչնչանան , ու գիտնան
թէ Աստուած կըտիրէ Յակոբին վրայ
մինչև երկրի ծարերը : Ահա :

14 Իրիկվան ետ կըդառնան , շունի պէս
կոռնան , ու քաղքին շորս կողմը կըպըտը-
տին :

15 Անոնք ուտելու համար կըպըտըտին .
թէ որ չի կշտանան կըմոմբուան :

16 Ի՛նչո՞ք ես քու զօրութիւնդ պիտի եր-

գեմ՝ , ու առարվանց քու ողորմութեանդ պիտի ցնծամ . վասն զի դուն ինձի պահապան ու ապաւէն եղար նեղութեան օրս :

17 Մի իմ զօրութիւնս , քեզի պիտի երգեմ . ինչու որ ապաւէնս Մատուած՝ ողորմութեանս Մատուածն է :

ՍԵՂՄՈՍ • Կ :

Գլխաւոր երգեցողին , Շուշան Լաւաբէ Վայ , Գաւելի երգը , սորվելու համար . առաքելն որ ինչու ըրտա Սեղագեղի աւարին՝ ու Սեբայի աւարին , հետ , երբոր Յովակիմ երգարտաւորն Սեղագեղեանքն աւարեցաւ հոգի զարկաւ Մեզն յարին Տեղ :

Սի Մատուած , մեզ ձգեցիր . ցրուեցիր ու բարկացար . մեզի դարձիր :

2 Երկիրը գողացուցիր , անիկա պատուցիր . նորոգէ անոր կտարածները ինչու որ կերերակոր :

3 Խստութիւն ցուցուցիր ժողովուրդիդ , թմրութեան գինի խմցուցիր մեզի :

4 Վրենէ վախցողներուն դրօշակ տըւիր՝ ճշմարտութեան համար վերցունելու . Սեղայ .

5 Որ քու սիրելիներդ փրկըվին , աջ ձեռքովդ ապրեցուր ու պատասխան տուր մեզի :

6 Բ՛ստուած խօսեցաւ իր սրբութիւնովը . Ես պիտի ցնծամ , Սիւքէմ , ապա պիտի բաժնեմ , ու Սուքօթին ձորը պիտի չափեմ .

7 Իմս է Գաղայաթը ու իմս է Ս՛անասէն , Եփրեմը գլխուս ուժն է . Յուդան իմ օրէնք դնողս է .

8 Ս՛ովաբը իմ լուացվելու ամանս է , Եդոմայ վրայ պիտի ձգեմ իմ մուճակս . ո՛վ փղշտացիներ , ինծի համար ձայնով ցրնծացէք :

9 Ս՛ով պիտի տանի իս պարսպաւոր քաղաքը , ո՛վ պիտի առաջնորդէ ինծի մինչև Եդոմ .

10 Չէ՞ որ դուն՝ ո՛վ Բ՛ստուած , «բ՛ ձրգեցիր մեզ ապէն՝ !» , ու մեր զօրքերուն հետը չելար՝ ո՛վ Բ՛ստուած :

11 Եկողութեան մեջէն մեզի օգնութիւն տուր , վասն զի փուճ է մարդուն փրկութիւնը :

12 Բ՛ստուծով քաջութիւն կրնենք , ու ան պիտի կոխէ մեր թշնամիները :

ՍԸՂ Ս՝ՈՍ ԿԸ :

Գլխաւոր երգեցողին , 'Նիկոլէ վրայ (Սաղ-
մա) Գաւլէ :

Ով Աստուած , լսէ՛ աղաղակս , ու միտք
դիր իմ աղօթքիս :

2 Երկրին ծարէն քեզի պիտի կանչեմ
սիրտս մարելու ատենը . ինծմէ բարձր ե-
ղած քարին ինծի առաջնորդէ՛ :

3 Ինչու որ ապաւէն մը՝ ամուր աշտա-
րակ մը եղար ինծի թշնամիին երեսէն :

4 Վու խորանիդ մէջը պիտի բնակիմ
ես յաւիտեան . թե երուդ հովանաւորու-
թեանը տակը պիտի ապաւինիմ : Սէլայ :

5 Ինչու որ դուն՝ ով Աստուած , լսեցիր
իմ ուխտերս . քու անունէդ վախցողներուն
ժառանգութիւնը ինձի տրւիր :

6 Թագաւորին օրերուն վրայ օրեր պի-
տի էվելցունես , անոր տարիները ազգէ
մինչեւ ազգ պիտի ըլլան :

7 Ան պիտի նստի Աստուծոյ առջին յա-
ւիտեանս , ողորմութիւնը ու ճշմարտու-
թիւնը պատրաստէ՛ անիկա պահելու հա-
մար :

8 Ասանկ սաղմոս պիտի երգեմ քու ա-
նունիդ յաւիտեանս , որ ամէն օր ուխտս
կատարեմ :

ԱՐԳ ՄՈՍ . ԿԲ :

Գլխաւոր երգեցողին . իրիշխանին վրայ . Սուրբ
 Կաթիլ :

1 Իրաւցունէ իմ անձս լռիկ կըսպասէ
 Մատուծոյ , անկէ է իմ փրկութիւնս ,

2 Իրաւցունէ ան է իմ ժայռս ու փրկ-
 կութիւնս՝ իմ ապաւէնս , շատ չի պիտի
 սասանիմ :

3 Մինչև երբ մարդու վրայ կըվազէք .
 դուք ամէնքդ պիտի կոտորաիք . ծռած պա-
 տին ու փլած ցանկին պէս պիտի ըլլաք :

4 Ճշմարիտ՝ իր պատիւէն ձգելու խոր-
 հուրդ կընեն , ստութիւն կըսիրեն . իրենց
 բերանովը կօրնեն , բայց իրենց սրտովը
 կանիծեն : Սէլայ :

5 Ո՛վ իմ անձս՝ միայն Մատուծոյ սպա-
 սէ , վասն զի անկէ է իմ յոյսս :

6 Ճշմարիտ ան է իմ ժայռս ու փրկ-
 կութիւնս՝ իմ ապաւէնս , չի պիտի սասա-
 նիմ :

7 Մատուծմէ է իմ փրկութիւնս ու
 փառքս . իմ զօրութեանս ժայռը ու իմ ա-
 պաւէնս Մատուծոյ քովն է :

8 Մէն ժամանակ անոր յուսացէք , ո՛վ
 ժողովուրդ . անոր առջին սիրտերնիդ թա-
 փեցէք . Մատուծ ապաւէն է մեզի : Սէլայ :

9 Ղշմարիտ ռամիկ մարդիկը փուճ են , աղնուական մարդիկը սուտ են . անոնք կշիւին մէջը դրվելու ըլլան նէ՛ ամէնն ալ փուճ բանէն լէ՛լէն են :

10 Հարստահարութեան մի յուսաք , ու յախշտակութեան փուճ յոյս մի գնէք . հարստութիւնը թէ որ շատնայ նէ , անոր զեայ սիրտ մի գնէք :

11 Մէկ անգամ խօսեցաւ Մատուած , երկու անգամ լսեցի ասիկա , թէ զօրութիւնը Մատուծոյ է :

12 Աղորմութիւնն ալ քուկինդ է , ով Տէր , ինչու որ ամէն մէկուն իր գործքին չափովը հատուցում պիտի ընես :

ՄԱՂՍՈՒՍ . ԿԳ :

Սողուն Վառլէ . երբոր Հրէասպանի անուպարին ճշնէ եր :

Ո՛վ Մատուած՝ դուն ես իմ Մատուածս , ես առտրվանց քեզ կրփնտընեմ . հոգիս կը ծարվիկոր քեզի , ու մարմինս քեզի կը փափաքի չոր ու ծարաւ տեղը , ուր տեղ որ ջուր չի կայ .

2 Վառ զօրութիւնդ ու փառքդ տեսնալու համար , ինչպէս որ քեզ տեսայ սուրբ տեղին մէջը :

3 Այսն զի քու ողորմութիւնդ կեան-

քէն աղէկ է , իմ պահունքներս քեզ պիտի գովեն :

4 Մասնկ պիտի գովեմ քեզ իմ կեանքիս մէջը . ու քու անունիդ ձեռքերս վեր պիտի վերցունեմ :

5 Իբր թէ ճարպով ու պարարտութիւնով պիտի կշտանայ իմ անձս , ու ցրնծութեան պահունքներով պիտի գովէ Վեղ իմ բերանս .

6 Երբոր անկողինիս մէջ քեզ կը յիշեմ , գիշերվան պահերուն քու վրայ կը մտածեմ .

7 Ասան զի ինձի օգնական եղար , ու քու թևերուդ հովանաւորութեան տակը պիտի ուրախանամ :

8 Իմ անձս քու ետեւէդ կը հետևի , քու աջ ձեռքդ իս կը պահէ :

9 Իայց անոնք որ կը փնտրուն իմ անձս կորսնցունելու , գետնին խորունկ տեղերը պիտի մտնան :

10 Սուրի պիտի մատնըվին , աղուէսներուն բաժին պիտի ըլլան :

11 Իայց թագաւորը Մատուծմով պիտի սւրախանայ , անով երդում ընողներուն թողորը պիտի պարծին . ստախոսներուն բերանը պիտի պապանծի :

ՍԵՂՆՈՍՆԱՆ ԿՂԻ :

Գլխաւոր երգէցողէն , Սողոմոն Գաւթի :

Ո՛վ Աստուած , լսէ՛ իմ ձայնս իմ դանգատելուս . թշնամիին վախէն իմ կեանքս պաշտպանէ :

2 **Չարերուն ժողովքէն , անօրէնութիւն գործողներուն շատվորութենէն իս ծածկէ :**

3 **Որ իրենց լեզուները թուրի պէս կը սրեն , իրենց նետերը կը քաշեն՝ ո՛ր լեղի խօսքեր են .**

4 **Գաղտուկ տեղէն անմեղին նետելու համար . յանկարծ կը նետեն ու չեն վախնար :**

5 **Ինքըղինքնուն չար խօսքեր կը հատատեն . որոգայթներ դնելու համար կը խօսին , կը սեն թէ՛ Անոնք ո՛վ պիտի տեսնայ :**

6 **Անօրէնութիւն կը փնտրուն . կը լինի լէ՛ , կատարեցինք Տէր փնտռած խորհուրդը . ու մարդուն ներսը և սիրտը խորունկ է :**

7 **Իայց Աստուած անոնց պիտի զարնէ նետով . յանկարծ պիտի վերաւորին անոնք :**

8 **Ու իրենց լեզուն իրենց վրայ պիտի հանդպցունեն , ամէն անոնք տեսնողները պիտի փախչին :**

9 Եւ բոլոր մարդիկ պիտի վախնան , ու Մատուծոյ գործքը պիտի պատմեն . ու անոր ըրածներուն վրայ պիտի մտածեն :

10 Մրդարը Տէրօջմով պիտի ուրախանայ , և անոր պիտի յուսայ . ու ամէն ուղիղ սրտով եղողները պիտի պարծին :

ԱՆՂՄՈՍ ԿԵ :

Գլխաւոր երգեցողէն . Սուգնս Դաւիթի .
երգ 52 :

Քեզի են յոյսը — փառքը՝ ով Մատուած , Աիօնի մէջ , ու քեզի ուխտը պիտի կատարվի :

2 Ա՛վ աղօթքի լսողը , քեզի պիտի դայ ամէն մարմին :

3 Անօրէնութիւնները իմ՝ վրաս զօրացան , մեր մեղքերը դուն պիտի քաւես :

4 Երանի՛ անոր որ կընտրես ու կըմօտեցունես ինչ , որ բնակի քու սրահիդ մէջը . պիտի լցվինք քու տանդ՝ քու սուրբ տաճարիդ բարութենէն :

5 Ա՛խնալու բաներով՝ արդարութիւնով պիտի պատասխանես մեզի ո՛վ մեր փրկութեան Մատուածը , երկրի ամէն ծայրերուն ու ծովին մէջը հեռու եղողներուն յոյսը .

6 Ար ի՞ր զօրութիւնովը լեռները հաս-

տատողը , կարողութիւնով դօտի կապած է .

7 Ար կրցածցունէ ծովուն ձայնը . անոր այլքներուն ձայնը , ու ազգերուն խառնութիւնը :

8 Աւ երկէ ծայրերը բնակողները պիտի վախնան քու նշաններէդ . առտըվան ու իրիկվան ելքը դուն կուրախացունես :

9 Երկրին տես կերթաս ու անիկա կը խմցունես , շատ կը հարստացունես անիկա . Մատուծոյ գետը ջրով լեցուն է . կը պատրաստես անոնց ցորենը , վասն զի ասանկ պատրաստեցիր անիկա :

10 Մնոր ահօսները կը խմցունես , ու անոր փոսերը կը շտկես . անձրևներով կը կակղըցունես անիկա , կօրնես անոր բոյսը :

11 Կը պսակես տարին քու բարութիւնովդ , ու քու շաւիղներդ պարարտութիւն կը կաթեցունեն :

12 Մնապատի արօտներուն ձեռք կը կաթեն , ու բլուրները ուրախութիւնով պատած են :

13 Մրօտները ոչնչութիւն հօտերով հագված են , ու հովիտները ցորենով ծածկված են . կը կանչիր ռատեն ցնծութիւնով , ու կերգեն :

ՄԱՂՍՌՍ . ԿՕ . :

Գլխաւոր երգեցողն , Սաղմոսի երգը :

Ո՛վ բոլոր երկիր , ցնծութիւնով Մատուծոյ աղաղակեցէք :

2 Սաղմոս երգեցէք անոր անուանը փառքին , փառաւոր ըրէք անոր օրհնութիւնը :

3 Մատուծոյ ըսէք Քէ , Ինտոր ահաւոր են քու գործքերդ . քու մեծ զօրութեանդ համար թշնամիներդ քեզի սուտ նազանդութիւն պիտի ընեն :

4 Բոլոր երկիր երկիրպագութիւն պիտի ընեն քեզի . սաղմոս պիտի երգեն քեզի , սաղմոս պիտի երգեն քու անունիդ : Սէլայ :

5 Եկէք ու տեսէք Մատուծոյ գործքերը . մարդոց որդիքներէն զարհուրելի է էր գործքովը :

6 Օ՛տիւն ցամաքի դարձուց , գետէն ոտքով անցան . ան տեղը իրմով ուրախացանք :

7 Իր ուժովը յաւիտեան կըտիրէ , անոր աչիւնները ազգերը կըդիտեն . ապստամբները թող չի բարձրանան : Սէլայ :

8 Ո՛վ ժողովուրդներ , օրհնեցէք մեր Մատուածը , ու լսել տուէք անոր գովութեան ձայնը :

9 Ըն մեր հոգին կենդանի կըպահէ . ու
 ոտփըներնուս երերալ չի տար :

10 Ինչու որ դուն քննեցիր մեզ՝ ո՛վ
 Ըստուած . փորձեցիր մեզ , ինչպէս որ ար-
 ծաթը կըփորձըվի :

11 Որոգայթի մէջ մեզ մտցուցիր , ծանր
 բեռ դրիր մեր մէջքին վրայ :

12 Ս՛եր գլխուն վրայ մարդիկ հեծցու-
 ցիր . կրակը ու ջուրը մտանք , ու մեզ ա-
 ռատու թեան րէդէ հանեցիր :

13 Ողջակէզներով պիտի մոնամ քու
 տունդ , քեզի պիտի կատարեմ իմ ուխ-
 տերս ,

14 Որ պոկունքներս խօստացան , ու նե-
 ղութեանս մէջ բերանս խօսեցաւ :

15 Պարարտ ողջակեզներ պիտի մատու-
 ցանեմ քեզի խոյերուն խունկովը . զուա-
 րակներ մատաղ պիտի ընեմ նոխազներուն
 հետը : Սէլայ :

16 Եկէք լսեցէք՝ ո՛վ ամէն Ըստուածմէ
 վախցողներ , ու պատմեմ ինչ որ ըրաւ իմ
 անձիս :

17 Իներնովս անոր կանչեցի , ու լե-
 զուովս փառարանեցի :

18 Թէ որ սրտիս մէջը մեզք տեսնայի ,
 Տէրը չի պիտի լսեր :

19 Ճ՛ամարիտ լսեց Ըստուած , մտիկ ը-
 րաւ իմ խնդրուածքիս ձայնին :

20 Ըստուած օրհնեալ ըլլայ որ իմ ա-

ղօթքս ու իր ողորմութիւնը ինձմէ ետ
չի դարձուց :

ԱՆՎ ՄՈՍ . ԿԼ : :

Գլխաւոր երգեցողէն , 'Արեւօրէի վրայ Սաղ-
մասի երգը :

1 Ստուած ողորմի մեղի ու օրհնէ մեզ ,
երեսը փայլեցունէ մեր վրայ : Ահլայ :
2 Որ երկրի վրայ քու ճամբադ , ամէն
ազգերուն մէջ քու փրկութիւնդ ճանչ-
ցրվի :

3 Շնորհակալ ըլլան քեզի ժողովուրդ-
ները՝ ո՛վ Մստուած , շնորհակալ ըլլան
քեզի ամէն ժողովուրդները :

4 Ուրախանան ու ցնծան ազգերը ,
վասն զի ժողովուրդները պիտի դատես շի-
տակութիւնով , ու երկրի ազգերուն դուն
պիտի առաջնորդես :

5 Շնորհակալ ըլլան քեզի ժողովուրդ-
ները՝ ո՛վ Մստուած , շնորհակալ ըլլան
քեզի ամէն ժողովուրդները :

6 Երկիր իր պտուղը պիտի տայ , ու
Մստուած՝ մեր Մստուածը մեզ պիտի օրհ-
նէ :

7 Մստուած մեզ պիտի օրհնէ՝ ու պիտի
վախնան անկէ երկրի ամէն ծայրերը :

ՍՇՂՍՊՈՍ ԿԲ :

Գլխաւոր երգեցողէն , Գաւլէ Սաղմսի
երգը :

Թող ելլէ Մատուած՝ անոր թշնամինե-
րը թող ցրուին , ու ինքը ատողները
իր երեսէն թող փախչին :

2 Սուխին փախչելուն պէս փախցուր
անոն , մօմին կրակին առջին հալելուն պէս
թող կորսըվին ամբարիշտները Մատուծոյ
երեսէն :

3 Նայց արդարները թող ուրախանան ,
Մատուծոյ առջին թող ցնծան , և ուրա-
խութիւնով թող զուարճանան :

4 Երգեցէք Մատուծոյ՝ սաղմոս երգե-
ցէք անոր անունին . ճամբայ պատրաստեցէք
անապատներուն մէջէն հեծնողին . անոր
անունը Եազ է . ու ցնծացէք անոր առջին :

5 Որբերուն հայրը ու պրի կնիկներուն
դատաւորն է Մատուած իր սրբութեան
տեղը :

6 Մատուած մինակ եղողները տան մէջ
կրքնակեցունէ , կապվածները , աջողու-
թեան կրհանէ , բայց ապստամբները ցա-
մաք տեղը կրքնակին :

7 Ո՛վ Մատուած , քու ժողովուրդիդ
առջևէն գացած ատենդ , անապատը անց-
նելու ատենդ , Սէլայ .

8 Երկիրը շարժեցաւ, երկինքն ալ շաղ
 թափեց Մատուծոյ երեսէն. առ Սինայ ալ
 շարժեցաւ Մատուծոյ՝ Իսրայէլի Մատուծոյ
 առջին :

9 Ո՛վ Մատուած, առատութիւնով
 անձրեւ ցրցըքնեցիր քու ժառանգութեանդ .
 երբոր հոգնած էր՝ դուն հաստատեցիր ա-
 նիկա :

10 Ի՛նչ ժողովուրդդ անոր մէջը բնա-
 կեցաւ . քու քաղցրութիւնովդ աղքատին
 համար պատրաստեցիր, ի՛վ Մատուած :

11 Տէրը խօսք տուաւ . աւետիս տրւող-
 ները մեծ բազմութիւն են :

12 Օ՞րքերուն թագաւորները կրփախ-
 չին . կրփախչին ու տանը մէջ բնակող Լեւի
 աւարին բաժանորդ կըլլայ :

13 Թէ որ աստուներու մէջ հանգստա-
 նալու ըլլաք՝ աղանիի թւերուն պէս պի-
 տի ըլլաք արծաթով պատած, ու անոր
 փետուրները գեղին ոսկիով :

14 Մենակարողը ան երկին վրայ թա-
 գաւորները ցրուելու ատենը երկրէ Սաղ-
 մոնին մէջի ձունին պէս ճերմըկեցաւ :

15 Մատուծոյ լեռը Բասան լեռն է՝ բազ-
 մազագաթի լեռն է Բասանը :

16 Ո՛վ բազմազագաթի լեռներ, ինչո՞ւ
 նախանձով կընայիք . աս լեռն է որ Մատ-
 ուած հաւնեցաւ անոր մէջ բնակիլ, իրա-
 ւի Տէրը հան պիտի բնակի միշտ :

17 Մտուծոյ կառքերը երկու անգամ տասը հազար են , հազար հազարոց . Տէրը անոնց մէջն է , իբրև Սինայի՝ սուրբ տեղի մէջն է :

18 Նարձր տեղը ելար՝ գերութիւնը գերի ըրիր , պարգևներ առիր մարդոց համար՝ ու ապստամբներուն համար ալ , որ Տէր Մտուածը հոն բնակի :

19 Տէրը օրհնեալ ըլլայ օրէ օր . թէ որ ճշդ բնու մը դնէ մեր վրայ , Մտուած է մեր փրկիչը : Սէլայ :

20 Մտուած մեղի փրկութեան Մտուած է , ու մահուան աղատութիւնները Մտուածմէ Տէրէն է :

21 Սակայն Մտուած իր թշնամիներուն գլուխը՝ իր անօրէնութիւններուն մէջը պարտողին գիսաւոր դադաթր պիտի փշրէ :

22 Տէրը ըսաւ . Մանր Նասանէն ետ դարձունեմ՝ , ծովու անդունդներէն ետ դարձունեմ՝ :

23 Մնանկ որ ոտքդ արիւնին մէջը թաթխըվի , շուներուդ լեզուն թշնամիներէն իր բաժինը տանէ :

24 Քու քալածքներդ տեսան՝ ո՛վ Մտուած , իմ Մտուծոյս իմ թագաւորիս քալածքները սուրբ տեղին մէջը :

25 Մաջ երգեցողները դացին , ետքը նուագարան չալողները , մէջ տեղը դափ չալող աղջիկները :

26 Ժողովուրդներուն մէջը օրհնեցէք Մատուած, Տէրը՝ ո՛վ Իսրայէլի աղբիւրէն եղողներ :

27 Ան տեղն է փոքր Ռենիամինը անոնց տիրապետողը, Յուդայի իշխանները իրենց բազմութիւնովը, Օւրուշի իշխանները ան Սեփթաղէմի իշխանները :

28 Վաւ Մատուածդ քու զօրութիւնդ հաստատեց. ուժուցո՛ւր ո՛վ Մատուած, ան բանը՝ որ մեզի համար ըրիր :

29 Երուսաղէմի տաճարիդ համար թագաւորները քեզի պարգևներ պիտի բերեն :

30 Եղէգի մէջ Բն-ի-ուզ գազանին, ցուլերուն ժողովքին, ժողովուրդներուն զուարակներուն հետը սաստէ՛, որ ինքքզինքնին ցածցունեն արծաթի կտորվանք Բէրէլը, պատերազմ ուզող ազգերը պիտի ցրուէ :

31 Եգիպտոսի ազնուականները պիտի գան. Եթէովպիա իր ձեռքը Մատուծոյ պիտի արտորցունէ :

32 Ո՛վ երկրի թագաւորութիւններ, օրհնեցէ՛ք զՄատուած, սաղմոս երգեցէ՛ք Տէրօջը. Սէլույ .

33 Անոր՝ որ ՚ի յաւիտենից երկինքներուն երկինքին վրայ կընստի, ահա՛ իր ձայնովը զօրաւոր ձայն կուտայ :

34 Օ՞րութիւն տըւէ՛ք Մատուծոյ, իր մեծ վայելչութիւնը Իսրայէլին վրայ

է , ու իր զօրութիւնը ամպերուն մէջն է :

35 Ա՛հաւոր ես ո՛վ Ա՛ստուած՝ Իսրայէլի Ա՛ստուածը , սուրբ տեղերուդ մէջը . ինքը կուտայ իր ժողովուրդին ուժ ու կարողութիւն . Ա՛ստուած օրհնեալ ըլլայ :

ՍԵՂ ՄՈՍ • Կ(Ժ) :

Գլխաւոր երգեցողքն , Շօշանի՛կ Վրայ
(Սողոմոն) Գաւլէ :

Այրեցուր իս ո՛վ Ա՛ստուած , վասն զի ջուրերը իմ անձիս հասան :

2 Խորունկ ցելի մէջ կընկղմիմ , ու կայնելու քէղ չի կայ . ջուրերուն խորունկ տեղերը մտայ , ու հեղեղները իս ընկղմեցին :

3 Հոգնեցայ ես կանչելովս . կոկորդս ցամաքեցաւ . աչվըներս վատուժցան իմ Ա՛ստուծոյս յուսալէն :

4 Փուճ տեղը իս ատողները գլխուս մաղերէն շատ են . իս փուճ տեղը կորսնցունող թշնամիներս զօրացան . ան բանը՝ որ չէի յափշտակեր , ան ատենը վճարեցի :

5 Ա՛վ Ա՛ստուած , իմ յիմարութիւնս դուն գիտես , ու յանցանքներս քենէ ծածկրված չեն :

6 Քեզի համբերողները շամբշնան իմ պատճառովս , ո՛վ Տէր՝ զօրքերուն Տէրը .

քեզ փնտրողները չի խոսիին իմ պատճառովս, ո՞վ Խորայէլին Աստուածը :

7 Այսան զի քեզի համար համբերեցի նախատանքին, ամօթը ծածկեց երեսս :

8 Եղբայրներուս օտար, ու մօրս զաւակներուն անձանաչ եղայ :

9 Ինչու որ քու տանդ նախանձը իս կերու, ու քեզ նախատողներուն նախատինքները իմ վրաս ինկան :

10 Եւ այն իմ անձս ծով պահելով, առաջին ինձի նախատինք սեպւեցաւ :

11 Ու իմ հանդերձս քուրձ ըրի, ու անոնց առակ եղայ :

12 Գուռը նստողները ինձի համար կը խօսին, ու հարբեցողներուն խաղը եղայ :

13 Եւ այն իմ աղօթքս կընեմ քեզի ո՞վ Տէր, ընդունելի ժամանակին. ո՞վ Աստուած, քու մեծ ողորմութիւնովդ՝ քու փրկութեանդ ճշմարտութիւնովը պատասխան տուր :

14 Հանէ իս ցեխէն ու չընկրղմիմ. իս ատողներէն, ու խորունկ ջուրերէն փրկելովիմ :

15 Չջուրերուն հեղեղը թող իս չընկրղմէ, ու անդունդը իս կուլ չի տայ, ու ջրհորը իր բերանը իմ վրաս չի գոցէ :

16 Պատասխան տուր ինձի՝ ո՞վ Տէր, վասն զի քու ողորմութիւնդ քաղցր է. քու շատ գթութեանդ համար նայէ ինձի :

17 Ու երեսդ մի՛ ծածկեր քու ծառայէդ .
վասն զի ես նեղութեան մէջ եմ , շուտով
պատասխան տուր ինձի :

18 Իմ անձիս մօտեցիր «- անիկա փրկէ .
Թշնամիներուս համար իս ազատէ :

19 Գուն գիտես իմ նախատինքս ու իմ
ամօթս ու իմ խայտառակութիւնս . քու
առջիդ են բոլոր իս նեղողները :

20 Ախատինքք սիրտս կտարեց ու հի-
ւանդ եղայ . վշտակից եղողի մը նայեցայ
բայց չի կար , ու մսիթարութիւն տուող-
ներուն՝ բայց չի գտայ :

21 Հապա կերակուրի տեղ Թունաւոր
խոտ տըւին ինձի . ու ծարւրցած ատենս
քացախ խմցուցին ինձի :

22 Անոնց սեղանը իրենց առջին որո-
գայթ , ու անոնց հատուցումները դարան
պիտի ըլլայ :

23 Անոնց աչքները պիտի մթըննան որ չի
տեսնան , ու անոնց մէջքերը միշտ դողացուր :

24 Վրու սրտմտութիւնդ անոնց վրայ
պիտի թափես , ու խիստ բարկութիւնդ ա-
նոնց պիտի հասնի :

25 Անոնց բնակարանը աւերակ պիտի
ըլլայ , «- անոնց վերաններուն մէջ բնա-
կող չի պիտի ըլլայ :

26 Ասան զի անոր որ գուն զարկիր՝ ա-
նոնք կը հալածեն , ու քու խոցածիդ
ցաւին վրայ կը խօսին :

27 Անոնց մեղքին վրայ մերք պիտի դընես, ու քու արդարութեանդ չի պիտի հասնին :

28 Կենաց գրքէն պիտի ջնջուվին, ու արդարներուն հետ չի պիտի գրվին :

29 Բայց աղքատ ու վշտացած եմ ես. քու փրկութիւնդ՝ ո՛վ Աստուած, պիտի պաշտպանէ իս :

30 Աստուծոյ անունը պիտի գովեմ երգով, ու պիտի բարձրացունեմ անիկա գոհութիւնով :

31 Աւստիկա եղջիւրաւոր ու պճղնաւոր եզէն ու զուարակէն էվէլ ընդունելի պիտի ըլլայ Աստուծոյ :

32 Հիշած սիրտերը պիտի տեսնան և ուրախանան, ո՛վ Աստուած փնտրողներ, ձեր սիրտն ալ պիտի ապրի :

33 Այսն զի Տէրը տնանկններուն կըլսէ, ու իր կապվածները շանարգեր :

34 Թող գովեն անիկա երկինքը ու երկիրը՝ ծովը ու ամէն անոնց մէջը շարժողները :

35 Ինչու որ Աստուած Սիօնը պիտի փրկէ, ու Հրէաստանի քաղաքները պիտի շինէ, ու հոն պիտի բնակին և ժառանգեն անիկա :

36 Աւ իր ծառաներուն զաւակը պիտի ժառանգէ անիկա, ու իր անունը սիրողները անոր մէջը պիտի բնակին :

ՍԵՂՍՈՍ . Հ :

Գլխաւոր երգեցողէն , (Սաղմոս) Գաւլէն յէ-
շարտալէ համար :

Ո՛վ Մատուած՝ իս փրկելու , ո՛վ Տէր
ինծի օգնելու արտորցի՛ր :

2 Թող ամբշնան ու խպնին իմ անձս
փնտրողները . ետ դառնան ու ամբշնան
ինծի չարութիւն ուզողները :

3 Իրենց ամօթին պատճառովը թող ետ
դառնան՝ որոնք որ ինծի վաշ վաշ կրսեն :

4 Թող ցնծան և ուրախանան քեզմով՝
ամէն քեզ փնտրողները , և քու փրկու-
թիւնդ սիրողները ամէն ժամանակ թող
ըսեն , թէ՛ Մատուած մեծնայ :

5 Իայց ես աղքատ ու տնանկ եմ , ո՛վ
Մատուած , շուտով հասի՛ր ինծի . իմ օգ-
նականս ու փրկիչս դուն ես՝ ո՛վ Տէր , մի՛
ուշանար :

ՍԵՂՍՈՍ . ՀԸ :

Ո՛վ Տէր՝ քեզի յուսացայ , չամբշնամ յա-
ւիտեան :

2 Ի ու արդարութեամբդ իս ապրեցուր
ու ազատէ իս . ականջդ ծռէ ինծի , ու փրկ-
կէ իս :

3 Ինծի ապաւինելու վէճ՝ եղիր , որ հոն միշտ երթամ . դուն հրաման տրւիր իս փրկելու , ինչու որ իմ վէճս ու բերդս դուն ես :

4 Ո՛վ իմ Մատուածս , մեղաւորին ձեռքէն իս փրկէ , անօրէնին ու բռնաւորին ձեռքէն :

5 Ա՛սան զի իմ ակնկալութիւնս դուն ես՝ ո՛վ Տէր՝ Մատուած , մանկութենէս ՚ի վեր իմ յոյսս դուն ես :

6 Ես քեզի հաստատվեցայ արգանդէն , մօրս փորէն իմ պաշտպանս դուն ես , իմ գովութիւնս քու վրայ է :

7 Օ՛արմանալի բանի մը պէս եղայ շատերուն , բայց իմ զօրաւոր ապաւէնս դուն ես :

8 Ի՛երանս քու գովութիւնովդ լցվի , ամէն օր քու փառաբանութիւնովդ :

9 Օ՛երութեան ատենս իս մի՛ ձգեր , ուժս պակասած ատենը իս մի՛ թողուր :

10 Ինչու որ թշնամիներս ինծի համար կրիսօսին , ու իմ անձս դիտողները մէկ տեղ խորհուրդ կընեն՝

11 Ի՛սելով , Մատուած թողուց անիկա՝ հալածեցէք ու բռնեցէք անիկա . վասն զի ազատող մը չի կայ :

12 Ո՛վ Մատուած , ինծմէ հեռու մըլլար . ո՛վ իմ Մատուածս , ինծի օգնելու արտորցիր :

13 Պիտի ամբշնան ու կորսրվին իմ ան-
ձիս թշնամիները . նախատինքով ու ամօ-
թով պիտի ծածկրվին ինծի շար ուղողնե-
րը :

14 Բայց ես ամէն ատեն պիտի յուսամ ,
և քու ամէն փառաբանութիւնդ պիտի է-
վեցունեմ :

15 Բերանս պիտի պատմէ քու արդա-
րութիւնդ , ամէն օր քու փրկութիւնդ .
ինչու որ ես անոնց համբանքը չեմ գի-
տեր :

16 Պիտի քալեմ Տէր Աստուծոյ զօ-
րութիւնովը , պիտի յիշեմ քու արդարու-
թիւնդ՝ միայն քու կինդ :

17 Ո՛վ Աստուած , մանկութենէս ՚ի
վեր սորվեցուցիր ինծի . ու մինչև հիմայ
քու հրաշալի գործքերդ պատմեցի :

18 Ու հիմայ մինչև ծերութեան ու
հարկորութեան ատենս իս մի ձգեր՝ ո՛վ
Աստուած , մինչև որ պատմեմ քու կարո-
ղութիւնդ աս ազգին , և քու զօրութիւնդ
ամէնուն որ պիտի գան :

19 Ու քու արդարութիւնդ շատ բարձր
է՛ ո՛վ Աստուած , որ դուն մեծամեծ բաներ
բրիւ . քեզի պէս Աստուած ո՛վ կայ :

20 Դուն որ շատ նեղութիւններ ու
չարչարանքներ ցուցուցիր ինծի , կրկին իս
պիտի կենդանացունես , ու երկրի ան-
դունդներէն կրկին իս պիտի հանես :

21 Իմ մեծութիւնս պիտի շատցունես ,
 ու կրկին իս պիտի մտիթարես :

22 Ուստի ես ալ պիտի գովեմ քեզ
 սաղմոսարանի գործիքով քու ճշմարտու-
 թեանդ համար՝ ո՛վ իմ Մատուածս . սաղմոս
 պիտի երգեմ քեզի քնարով՝ ո՛վ Խորայէլին
 սուրբը :

23 Վեղի սաղմոս երգած ատենս՝ պըռ-
 կունքներս ու փրկած հոգիդ պիտի ցնծան :

24 Ու իմ լեզուս ալ ամէն օր քու ար-
 դարութիւնդ պիտի խօսի . ինչու որ ինծի
 չարութիւն ու զոհները ամբլջցան ու խըպ-
 նեցան :

ՄԱՂ ՄՈՍ . ՀԻ :

Սողոմոնի Համար :

Ո՛վ Մատուած , դատաստանդ թագաւո-
 րին տուր , ու արդարութիւնդ թա-
 գաւորին տղին :

2 Վե՛ու ժողովուրդդ արդարութիւնով
 պիտի դատէ , ու ազքատդ իրաւունքով :

3 Եւաները խաղաղութիւն պիտի բուս-
 ցունեն ժողովուրդին՝ ու բլուրները ար-
 դարութիւն :

4 Ժողովուրդին ազքատներուն իրա-
 ւունք պիտի ընէ , տնանկին զաւակները
 պիտի ազատէ , ու բռնաւորը պիտի ջարդէ :

5 Վենէ պիտի վախնան քանի որ արեգակը և լուսինը կը մնան ազգէ մինչև ազգ :

6 Ընծրեի պէս շնծած խոտին վրայ պիտի իջնայ , շաղերուն պէս ոչ երկիրը կը թրչէ :

7 Ընոր օրերուն մէջ արդարը պիտի ծաղկի . ու շատ խաղաղութիւն պիտի ըլլայ՝ մինչև լուսինը ալ չըլլայ :

8 Ու ծովէն մինչև ծովը պիտի տիրէ անիկա , ու գետէն մինչև աշխարհի ծայրերը :

9 Ընոր առջին անապատին բնակիչները ծունկ պիտի չոգեն , ու անոր թշնամիները փոշի պիտի լան :

10 Թարսիսի ու կղզիներուն թագաւորները ընծայ պիտի մատուցանեն . Շաբայի ու Սաբայի թագաւորները պարգև պիտի բերեն :

11 Ու ամէն թագաւորները երկրպագութիւն պիտի ընեն անոր , ամէն ազգերը պիտի ծառայեն անոր :

12 Ասան զի աղքատը պիտի փրկէ աղաղակելու ատենը , խեղճն ալ ու անիկա ալ որ օգնու թիւն չունի :

13 Պիտի խղճայ աղքատին ու տնանկին , և տնակներուն անձերը պիտի աղատէ :

14 Վենգութենէ ու բռնութենէ պիտի փրկէ անոնց անձը , ու պատուական պիտի ըլլայ անոնց արիւնը անոր առջին :

15 Ու պիտի ապրի և Շաբայի ոսկիէն

անոր պիտի տրբւի , ու ամէն ատեն աղօթք
պիտի ըլլըվի անոր համար . ամէն օր պիտի
օրհնեն անիկա :

16 Հորենի առատութիւն պիտի ըլլայ երկ-
րի վրայ լեռներուն գլուխը . անոր պտուղը
լիբանանին պէս պիտի շարժի . ու գետնի
խոտին պէս պիտի ծաղկին քաղաքացիները :

17 Անոր անունը պիտի մնայ յաւի-
տեան , քանի որ արեգակը մայ անոր ա-
նունն ալ պիտի մնայ . ու անով պիտի օրհ-
նըվին ամէն ազգերը , երանութիւն պիտի
տան անոր :

18 Օրհնեալ ըլլայ Տէր Աստուած՝ Իս-
րայէլին Աստուածը . մինակ ինքն է հրաշք-
ներ ընողը :

19 Աւ օրհնեալ ըլլայ յաւիտեան անոր
փառաւոր անունը , ու բոլոր երկիր թող
լցվի անոր փառքովը . ամէն ու ամէն :

20 Հեսսէի որդի Գաւթի աղօթքները
լըմընցան :

ՍԵՂ ՄՈՍ . ՀԳ . :

Աստուծոյ Սուղնուր :

Իրաւ որ Աստուած բարի է Իսրայէլին՝
ու ուղիղ սրտով եղողներուն :

2 Իայց քիչ մնաց որ իմ ոտմըներս պի-
տի ծռէին , ու մաղ մնաց որ իմ գնացք-
ներս պիտի գայթակղէին :

3 Պատճառն որ նախանձեցայ հպարտ-
ներուն , երբ որ ամբարիշտներուն խաղա-
ղութիւնը տեսայ :

4 Ինչու որ՝ մինչև իրենց մահը ցաւ չի
կայ . մարմիննին ալ պարարտ է :

5 Անոնք՝ մարդոց նեղութեանը մէջը
չեն , եւ որչա՛ մարդոց հետ ալ չեն տանջու-
վիր :

6 Անոր համար վիզնոցի պէս ամբարտա-
ւանութիւնը անոնք կը շրջապատէ . բռնու-
թիւնը հանդերձի պէս անոնք կը ծածկէ :

7 Անոնց աշխրները պարարտութենէն
դուրս կելլեն . սրտի խորհուրդներէն կանց-
նին :

8 Օտարը կրնեն ու շարութիւնով կը
խօսին բռնութեան համար , հպարտութիւ-
նով կը խօսին :

9 Իներաննին երկինքին դէմ կը դնեն , ու
լեզուննին երկրին մէջը կը պտրտի :

10 Անոր համար անոր ժողովուրդը հոս
պիտի դառնայ , ու առատութիւնով ջուր
պիտի քամվի անոնց :

11 Ու կըսեն , Աստուած ինտո՞ր գիտէ .
ու Բարձրելոյն քովը գիտութիւն կայ մի :

12 Ահա ասոնք են ամբարիշտները որ
միշտ յաջողութիւն ունին , եւ որչա՛ հա-
րստութիւնը կէվելցունեն :

13 Իրաւ որ զուր տեղը իմ սիրտս մաք-
րեցի , ու իմ ձեռնալներս անմեղութիւնով
լուացի :

14 Ու ամէն օր կըտանջըզիմ , ու ամէն առտու կըպատժըզիմ :

15 Թէ որ ըսէի՝ թէ ես ասանկ խօսիմ , ահա՛ քու զաւակներուդ աղգին նենդու-
թիւն ըրած պիտի ըլլայի :

16 Երբոր խորհեցայ ասիկա իմանալու , դժուար եկաւ իմ աչիւններուս :

17 Մինչև որ Աստուծոյ Արքութեան տեղը մտայ , — անոնց վերջը իմացայ :

18 Իրաւ որ դուն անոնք սահելու տեղերը դրեր ես . կործանման մէջը պիտի իջնուեն անոնք :

19 Ինչպէս յանկարծակի աւերմունքի մէջ ինկան . հատան , ու վախերով կորսը-
վեցան :

20 Ինչպէս որ երազէ արթննալէն ետև : Ո՛վ Տէր , քաղքին մէջը անոնց պատկերը պիտի անարգես :

21 Վասն զի իմ սիրտս ցաւեցաւ , ու իմ երկամունքներէս խոցվեցայ :

22 Ու ես յիմար եղայ ու չիմացայ , քու առջիդ անասուններու պէս եղայ :

23 Իայց միշտ ես քեզի հետ էի . դձու իմ աջ ձեռքէս բռնեցիր :

24 Դուն պիտի առաջնորդես ինձի քու խորհուրդովդ , ու վերջը փառքով պիտի ընդունես իս :

25 Ո՛վ ունիմ՝ ես երկինքը . երկրի վրայ ալ քենէ ուրիշը չեմ ուզեր :

26 Իմ մարմինս ու սիրտս կրմաշին .
 Բայց Աստուած իմ սրտիս զըրութիւնը ու
 իմ բաժինս է յաւիտեան :

27 Ասան զի ահա՛ անոնք որ հեռացեր
 են քեզմէ՝ կրկորսը վին . դուն կըսատկեցու-
 նես ամէնը որ շնութիւն կընեն քենէ՛ իշխե-
 լով :

28 Իայց Աստուծոյ մօտենալս բարի է
 ինծի . յոյսս զրեր եմ Տէր Աստուծոյ
 վրայ , որ քու ամէն գործքերդ պատմեմ :

ՍԵՂՍՈՍ . ՀԳ :

Աստիճի երգը :

Ով Աստուած , ինչո՞ւ մեզ միշտ կըմեք-
 ժես , « բարկութիւնդ կըմխայ քու ա-
 րօտիդ ոչխարներուն վրայ :

2 Յիշէ՛ քու ժողովուրդդ « ի սկիզբէն
 ստացեր ես , քու ժառանգութեանդ վե-
 ճակը « ի փրկեր ես , « աս Սիօն լեռը ուր
 որ բնակեր ես :

3 Իարձրացուր քու ոտվըներդ գէպի բո-
 լորովին աւրբվածներուն , « թշնամիին
 սուրբ տեղին մէջի ըրած բոլոր գէշ գործ-
 քերուն :

4 Ի՞նչ թշնամիներդ կըստուան ժողո-
 վուրդիդ մէջը . իրենց նշանները՝ նշանի
 « էդ կըրդենն :

5 Ըն՝ անտառին մէջը կացիններ վեր-
ցունողի մը պէս գիտցրվեցաւ :

6 Ու հիմայ անոր զարդարանքները , ա-
մէնը մէկ տեղ կացիններով ու մուրճերով
կրկտորանն :

7 Կրակ ձգեցին քու սուրբ տեղիդ մէջը
մինչև գետինը կործանեցին քու անունի
բընակարանը :

8 Իրենց սրտերնուն մէջը ըսին , թէ՛
Կորսընցունենք ասոնք ամէնքը մէկ տեղ
երկրի մէջը Ըստուծոյ բոլոր ժողովարան-
ները էրեցին :

9 Սեր նշանները չենք տեսնար . ալ
մարգարէ չի կայ . ու քովերնիս մէկն
ալ չի կայ՝ որ գիտնայ թէ՛ աս մինչև ե՞րբ
պիտի ըլլայ :

10 Ով Ըստուած , մինչև ե՞րբ նախա-
տինք պիտի ընէ նեղացունողը , թշնամին
մինչև յաւիտեան քու անունդ պիտի անար-
գէ՞մի :

11 Ինչո՞ւ ետ կը դարձունես քու ձեռքդ՝
ու աջ ձեռքդ . հան՛է՛ ան քու ծոցէդ — կոր-
սընցուր անոնք :

12 Իայց սկիզբէն իմ թագաւորս Ըս-
տուած է , փրկութիւններ ընելով երկրին
մէջը :

13 Գուն քու ղորու թիւնովդ ծովը պատ-
ռեցիր , ծովու գազաններուն գլուխները՝
ջուրերուն մէջը փշթեցիր :

14 Գու՛ն ջարդեցիր ծովու գազաններուն գլուխները . անիկա կերակուրի տեղ տրւիր անասպատին մէջի ժողովուրդին :

15 Գու՛ն ճեղքեցիր աղբիւրը ու վտակը , դուն չորցուցիր միշտ բխացող գետերը :

16 Քուկդ է ցորենկը , և քուկդ է գիշերը . լոյսը ու արևը դուն պատրաստեցիր :

17 Գու՛ն հաստատեցիր երկրին ամէն սահմանները , դուն ստեղծեցիր ամառը ու ձմեռը :

18 Մ'իտքդ բեր ասիկա՝ որ թշնամին նախատինք տրւաւ Տէրօջը . ու յիմար ժողովուրդը անարգեց քու անունդ :

19 Մ'ի՛ մտոնք գազանին քու տատրակիդ անձը . մի՛ մոռնար յաւիտեան քու աղքատներուդ անձը :

20 'Այէ՛՜ + ու ուխտիդ , ինչու որ երկրին խաւար տեղիւնքը բռնութեան բնակարաններով լցված են :

21 Թող խեղճը ետ չի դառնայ ամօթով . Թող խեղճը ու աղքատը օրհնեն քու անունդ :

22 Ելի՛ր ո՛վ Աստուած , դատէ՛ քու դատաստանդ . յիշէ՛ ամէն օրվան յիմարէն քեզի եղած նախատինքը :

23 Մ'ի՛ մոռնար քու թշնամիներուդ ձայները . քեզի դէմ կեցողներուն խռովութիւնը ամէն ժամանակ կը բարձրանալոր :

ԱՆՎ ՍՏՈՍ . ՀԵ :

Գլխաւոր երգեցողեն , Աւետիկէն Վարդ ,
 Աստուծոյ Ստորագրէն երգը :

Արգովենք քեզ՝ ո՛վ Աստուած , կրգովենք ,
 և քու անունդ մօտ է . քու ճշրաշ
 քներդ կրպատմըլին :

2 Երբոր որոշեալ ժամանակ ունենամ ,
 ուղիղ դատաստան պիտի տեսնամ :

3 Երկիրը՝ ու անոր ամէն բնակիչներն
 ալ մաշեցան . անոր սիւները ես կը հաստա-
 տեմ : Սէլայ :

4 Րսի յիմարներուն , լի՛ Յիմարու-
 թիւն մի՛ ընէք . ու ամբարիշտներուն , լի՛
 Եղջուր մի՛ վերցունէք :

5 Չեր եղջուրները վեր մի՛ վերցունէք .
 ամբարտաւան վիզով մի՛ խօսիք :

6 Ինչու որ բարձրանալը ո՛չ արևելքէն՝
 ու ո՛չ արևմուտքէն՝ և ո՛չ ալ անապատէն
 է ,

7 Հասպա դատաւորը Աստուած է . մէկը
 կը ցածցունէ՛ և միւսը կը բարձրացունէ :

8 Ինչու որ Տէրօջը ձեռքը բաժակ կայ ,
 ու գինին կարմիր է . խառնըվածով լե-
 ցուն է ան , ու անկէ կը թափէ . և իրաւ-
 երկրին բոլոր ամբարիշտները անոր մրուր-
 ները քամելով պիտի խմեն :

9 Իայց ես յաւիտեան պիտի պատմեմ Յակոբին Մատուծուն սաղմոս պիտի երգեմ :

10 Ու ամբարիշտներուն բոլոր եղջուրները պիտի փչընեմ . արդարին եղջուրները պիտի բարձրանան :

ՍՆՂՄՈՍ . ՀՕ :

Գլխաւոր երգեցողն , Նիկեոսէ Վրայ , Մատին Սողմոսն երգը :

Մատուած Յուդային մէջը յայտնի է , անոր անունը Իսրայէլին մէջը մեծ է :

2 Ու անոր խորանը՝ Սաղէմին մէջն է , և անոր բնակարանը՝ Սիօնին մէջն է :

3 Են տեղը ջարդեց աղեղին նետերը , վաճանք՝ ու սուրը՝ և կռիւր : Մէլայ :

4 Դուն լուսաւոր ես , յափշտակութեան լիւններէն աւելի զօրաւոր ես :

5 Սրտով զօրաւորները յափշտակվեցան , քուներնին քնացան . ու բոլոր զօրեղ մարդիկները ձեռվոնին չի գտան :

6 Ով Յակոբին Մատուածը , քու շնորհակցող կառքը ու ձին անզգայ պառկեցան :

7 Դուն աճաւոր ես՝ և ով կրնայ կայնիլ քու առջիգ՝ բարկութեանդ ատենը :

8 Դուն երկինքէն լսել տրւիր դատաստանը . երկիրը վախոցաւ ու լսեց ,

9 Երբոր Աստուած դատաստան ընելու ելաւ՝ երկրին ամէն խեղճերը փրկելու համար : Սէլոյ :

10 Իրաւցունէ մարդուն բարկութիւնք քեզ պիտի դուլէ , — մնացած բարկութիւնք դուն պիտի պատես :

11 Ուխտ ըրէք , ու կատարեցէք ձեր Տէր Աստուծուն . ամէնքը՝ որ անոր չորս կողմն են , ընծաներ թող բերեն Ահաւորին :

12 Իշխաններուն հոգին պիտի կտրէ ան . ինքը ահաւոր է երկրի թագաւորներուն :

ՍԱՂ ՄՈՍ . ՀԻ :

Գլխաւոր երգեցողին , Իսրէլուսին զԵսայ , Աստուծոյ Սաղմոսը :

1 Իմ ձայնս Աստուծոյ է , ու ես կաշաղակեմ . իմ ձայնս Աստուծոյ է , ու ան ինծի պիտի լսէ :

2 Իմ նեղութեանս օրվանը մէջը Տէրը փնտրեցի . գիշերը տարածված էր իմ ձեռքս՝ ու չէր թուլնար . իմ անձս չէր ուզէր մսիթարվիլ :

3 Աստուած յիշեցի ու անհանգիստ եղայ . մամրտացի՝ ու իմ հոգիս մաշեցաւ : Սէլոյ :

4 Իմ աչքներս արթուն պահեցիր , խոսվեցայ ու չի կրցայ խօսիլ :

5 Առջի օրերը հին ժամանակներուն տարիները միտքս բերի :

6 Գիշերվան մէջը կը յիշեմ իմ երգս , իմ սրտիս հետ կը խօսիմ , ու իմ հոգիս ալ քննութիւն կընէ :

7 Արգեօք Տէրը յաւիտեան կը մերժէ՞ մի , ու բնաւ չի պիտի՞ մի հաճի :

8 Սի թէ յաւիտեան կը պակսի՞ մի անոր ողորմութիւնը , — էր խոստումը կը վերջանայ՞ մի ազգէ մինչև ազգ :

9 Սի թէ գթութիւն ընելը կը մոռնայ՞ մի Աստուած , մի թէ բարկութիւնով կարգիկէ՞ մի իր ողորմութիւնը : Ահա :

10 Նայց կըսեմ՝ Աս է իմ հիւանդութիւնս . փոփոխութիւնը Նարձրեալին աջ ձեռքին Տէ՛ջն է :

11 Տէրոջը գործքերը պիտի պատմեմ , ինչու որ՝ քու առջի հրաշքներդ կը յիշեմ :

12 Նոյր գործքիդ վրայ պիտի մտըտամ , ու քու ըրածներդ միտքս բերեմ :

13 Ո՛վ Աստուած , քու ճանապարհդ սրբութեան մէջ է . Աստուծոյ պէս մեծ Աստուած ո՛վ կայ :

14 Հրաշքներ ընող Աստուածը դուն ես . քու զօրութիւնդ ժողովուրդներուն մէջը ցուցուցիր :

15 Նազուկովդ փրկեցիր քու ժողովուրդ՝ Նախորին ու Նոյսէփին զաւակները : Ահա :

16 Ջուրերը քեզ տեսան՝ ո՛վ Աստուած , ջուրերը քեզ տեսան «- դողացին . անդունդներն ալ սարսափեցան :

17 Ամպերը ջուր թափեցին՝ երկինքները ձայն հանեցին , նետերդ ալ գացին :

18 Քու որոտմունքիդ ձայնը երկինքն էր , փայլակները լոյս տուին աշխարքին , երկիրը սասանեցաւ ու դողաց :

19 Քու ճանապարհդ ծովուն մէջն է , և քու հետքերդ մեծ ջուրերուն մէջն է , ու քու շաւիղներդ չեն գիտցըվիր :

20 Ոչխարի հօտին պէս առաջնորդեցիր քու ժողովուրդիդ , Սուսէսին ու Ահարօնին ձեռքովը :

ՍԱՂՄՈՍ . ԶԸ :

Աստուծոյ երգը :

Ո՛վ իմ ժողովուրդս , ազանջ գրէք իմ օրէնքիս , խոնարհեցուցէք ազանջներնիդ իմ բերանիս խօսքերուն :

2 Առակով պիտի բանամ իմ բերանս . «- հին ժամանակի առակները պիտի պատմեմ .

3 Անոնք որ լսեցինք ու գիտցանք , և մեր հայրերը մեզի պատմեցին :

4 Սենք չի պիտի պահենք անոնց զակըներէն , ետքի եկող ազգերուն պիտի

պատմենք Տէրոջը գովութիւնները ու անոր զօրութիւնը , և անոր ըրած հրաշքները :

5 Այս ասն զի վկայութիւն հաստատեց Յակոբին մէջը , ու օրէնք դրաւ Խորայէլին մէջը . որոնք պատուիրեց մեր հայրերուն որ սորվեցունեն իրենց զաւկրներուն .

6 Ար գալու ազգը՝ ծնելու տղաքը անոնք իմանան , ու ելլան իրենց զաւկրներուն պատմեն .

7 Ար իրենց յոյսը Լստուծոյ վրայ դրնեն , ու չի մոռնան Լստուծոյ գործքերը , և անոր պատուիրանքները պահեն .

8 Աւ իրենց հայրերնուն պէս կամակոր ու ապստամբ ազգ մը չըլլան . անոնք ազգ մը որ իրենց սիրտը չեն շտկած , ու իրենց հոգին չեն հաստատած Լստուծոյ վրայ :

9 Եփրեմին զաւկրները՝ ուր զէնքեր հագած ու ազեղ նետողներ են , պատերազմին օրը ետ դարձան :

10 Լստուծոյ ուխտը չի պահեցին , ու անոր օրէնքին պէս չուղեցին երթալ :

11 Աւ մոռցան անոր գործքերը , և անոր հրաշքները որ իրենց ցուցուցեր էր :

12 Լստուծոյ հայրերնուն առջին հրաշք ըրաւ Եգիպտոսի երկրին՝ Յոան գաշտին մէջը :

13 Օտովը պատուեց , ու անոնք անցուց . և ջուրերն ալ դէզի պէս կանգնեցուց :

14 Ու անոնց ցորեկը ամպով , ու բոլոր գիշերը կրակի լուսով առաջնորդեց :

15 Ս էմերը պատուեց անապատին մէջը , ու խմցուց անոնց իբր մեծ անդունդէն :

16 Ու առուններ հանեց վէմէն , ու ջուրերը գետերու պէս բխեցուց :

17 Բայց անոնք կրկին մեղքը շատցուցին անոր դէմ , ու սրդողցուցին Բարձրեալը անապատին մէջը :

18 Ու փորձեցին զՄատուած իրենց սրբաբուն մէջը , կերակուր ուղելով իրենց անձերնուն համար :

19 Ու Մատուծոյ դէմ խօսեցան Եւրսէն . Սիժէ կրնայ Մատուած սեղան պատրաստել անապատին մէջը .

20 Մհա՛ վէմին զարկաւ՝ ու ջուրերը դուրս բխեցան , ու առուններ վազեց . արդեօք հաց ալ կրնայ մի տալ , արդեօք միս կրպատրաստէ՞ մի իր ժողովուրդին համար :

21 Մտոր համար Տէրը լսեց ու բարկացաւ , ու կրակ բորբոքեցաւ Յակոբին մէջը , ու նաև բարկութիւն ելաւ Իսրայէլին մէջը .

22 Ս ասն զի Մատուծոյ չի հաւատացին , ու յոյսերնին անոր փրկութեանը վրայ չի դրին :

23 Թէպէտ ինքը վերէն հրաման ըրեր էր ամպերուն , ու երկինքին դուռները բացեր էր ,

24 Ու անձրևի պէս մանանայ իջեցուցեր էր անոնց վրայ կերակուրի համար , ու երկինքի ցորենը տըւեր էր անոնց :

25 Մարդիկ աղնուականներուն հացը կերան , կերակուր խրկեց անոնց լիութիւնով :

26 Երկինքը արեւելեան հովը հանեց , ու իր զօրութիւնովը հարաւային հովը բերաւ :

27 Ու անոնց վրայ փոշիի պէս միս թափեց , ու ծովի աւաղի պէս թեւաւոր թըռչուններ .

28 Ու անոնց բանակին մէջը՝ բնակարաններնուն չորս կողմը իջեցուց :

29 Ու կերան , և աղէկ կշտացան . ու իրենց ցանկութիւնը իրենց տըւաւ :

30 Ու իրենց ցանկութենէն ետ չի դարձան , և քանի որ անոնց կերակուրը իրենց բերանն էր ,

31 Ըստուծոյ բարկութիւնը անոնց վրայ եկաւ , ու սպաննեց անոնց պարարտներէն . ու գետինը զարկաւ Խորայէլին ընտիրները :

32 Իողոր աս բաներուն վրայ կրկին մշտանչեցին , ու չի հաւատացին անոր հրաշքներուն :

33 Եւ ունայնութեան մէջ պակսեցուց անոնց օրերը , ու ահի մէջ անոնց տարիները :

34 Երբոր կըսպաննէր անոնք, ան կը խնդրէին. ու ետ կըդառնային, և Աստուած կանուխ կըրինտըռէին:

35 Ու կըյիշէին, որ Աստուած իրենց վէճն է. ու Նարձրեալ Աստուածը իրենց փրկիչն է:

36 Նայց կեղծաւորութիւն կընէին անոր իրենց բերնովը, ու իրենց լեզուովը սուտ կըսէին անոր:

37 Եւ անոնց սիրտը ուղիղ չէր անոր առջևը, ու հաւատարիմ չէին անոր ուխտին:

38 Նայց ինքը ողորմած ըլլալուն՝ անոնց անօրէնութիւնը կըքաւէր, չէր կորսընցունէր անոնք. ու շատ անգամ կըդարձունէր իր բարկութիւնը, ու չէր բորբոքեցունէր իր բոլոր սրտմտութիւնը:

39 Ինչու որ կըյիշէր՝ թէ մարմին են, հովին ո՞ր գացող ու ետ չի դարձող:

40 Վանի՞ր անգամ անիկա սրդողցունցին անապատին մէջը, ու բարկացունցին անիկա անջուր տեղին մէջ:

41 Ու դարձան Աստուած փորձեցին, և Իսրայէլին սուրբը նեղացունցին:

42 Զի յիշեցին անոր զօրութիւնը, ու թշնամիէն զիրենք փրկած օրը.

43 Որ իր նշանները ըրաւ Եգիպտոսին մէջը, ու իր հրաշքները Յոան դաշտին մէջը.

44 Ու արիւն դարձուց անոնց գետերը.

և անոնց առուները , որ չի կրցան խմել :

45 Եւ անաճանճեր խրկեց անոնց վրայ . որ կերան անոնք . ու գորտեր՝ որ կորսնցուցին անոնք :

46 Աւ անոնց բերքը թրթուրին տըւաւ , և անոնց վաստակը մարախին :

47 Անոնց որթերը փճացուց կարկուտով , ու անոնց ժանտաթղենի ծառերը խոշոր կարկուտով :

48 Աւ անոնց անասունները կարկուտին մատնեց , ու անոնց ոչխարէ հօտերը փայլակին :

49 Իր բարկութեան բոցը խրկեց անոնց վրայ , սրտմտութիւն՝ ու բարկութիւն՝ ու նեղութիւն խրկելով չար հրեշտակներուն յետոյ :

50 Ճանապարհ պատրաստեց իրեն բարկութեանը համար . անոնց անձը չի պահեց մահէն , ու անոնց անասունները կոտորումի մատնեց :

51 Աւ ամէն անդրանիկը սպաննեց Եգիպտոսի մէջ . և առջի զաւակները Վամայ բնակարաններուն մէջ :

52 Աւ իր ժողովուրդը ոչխարներու պէս հանեց , ու անոնք անապատը տարաւ ոչխարէ հօտի պէս :

53 Աւ անոնց ապահովութիւնով առաջնորդեց , և չի վախցան . ու անոնց թշնամիները ծովը ծածկեց :

54 Ու անոնք իր սրբութեան սահմանը
— աս լեռանը վրայ տարաւ , որ իր ձեռքը
ստացեր էր :

55 Ու հեթանոսները անոնց առջևէն
վնասեց , և վիճակով ժառանգութիւն
բաժնեց անոնց , ու Խորայէլին ցեղերը ի-
րենց խորաններուն մէջը բնակեցուց :

56 Բայց անոնք փորձեցին ու սրդողջու-
ցին Բարձրեալ Ըստուածը , ու չի պա-
հեցին անոր վկայութիւնները .

57 Ու ետ դարձան և նենգութիւն ըրին
իրենց հայրերնուն պէս , խաբերայ աղեղի
պէս ետ դարձան :

58 Ինչու որ անիկա սրդողջուցին իրենց
կուռքի սեղաններովը , ու նախանձի շարժե-
ցին անիկա իրենց փորած պատկերներովը :

59 Ըստուած լսեց ու բարկացաւ , ու
շատ անարգեց Խորայէլը :

60 Ու Սելուլայ բնակարանը՝ մարդոց մե-
ջի դրած խորանը մերժեց :

61 Եւ անոր զօրութիւնը գերութեան
մատնեց , ու անոր փառքը թշնամիներուն
ձեռքը :

62 Ու իր ժողովուրդը սուրի մատնեց ,
և իր ժառանգութեանը վրայ բարկացաւ :

63 Արակը անոր երիտասարդները կե-
րաւ , ու անոր աղջիկները սուգ չըրին :

64 Ընոր քահանաները սրով ինկան , ու
անոր որբեարիները չի լացին :

65 Բայց Տէրը արթնցաւ որպէս թէ քունէն , գինիէն սթափուլած զօրաւոր մարդու մը պէս :

66 Աւ իր թշնամիները ետենուն զարկաւ , յաւիտեան նախատինք ըրաւ անոնց :

67 Աւ Յովսէփին բնակարանը անարգեց , ու Եփրեմին ցեղը ընտրեց :

68 Բայց Յուդային ցեղը ընտրեց , « Սիօնին լեռը՝ որ կըսիրէ :

69 Աւ իր սրբութիւնը շինեց բարձր տեղերուն պէս , երկրին պէս՝ որ յաւիտեան հաստատեց :

70 Աւ իր Ղաւիթ ծառան ընտրեց , ու առաւ անիկա ոչխարի փարախներէն :

71 Օփծ տըւող ոչխարներուն ետէն տարաւ անիկա , որ իր Հակոբ ժողովուրդը ու իր Խորայէլ ժառանգութիւնը արածէ :

72 Ընալ արածեց անոնք իր սրտին անմեղութիւնովը , ու իր ձեռքին հանճարներովը առաջնորդեց անոնց :

ՍՆԳՍՈՍ . ՀԹ :

Ըստփին Ստղոսը :

Ո՛վ Ըստուած , հեթանոսները քու ժառանգութեանդ մէջը մտան . քու սուրբ տաճարդ պղծեցին . Երուսաղէմը աւերակներու դարձուցին :

2 Վրու ծառաներուդ դիերը կերակուր տրւին երկինքի թռչուններուն . քու սուրբերուդ մարմինը երկրի գաղաններուն :

3 Ընոնց արիւնը ջուրի պէս թափեցին Երուսաղէմին չորս կողմը , ու թաղող մը չի կար :

4 Ախտափնք եղանք մենք մեր դրացիներուն առջին , ծաղը ու անարգանք մեր չորս կողմը եղողներուն :

5 Մինչև ե՛րբ՝ Տէ՛ր , միշտ պիտի բարկանաս մի . ու քու նախանձդ կրակի պէս պիտի բորբոքի՞ մի :

6 Թափէ քու բարկութիւնդ ան ազգերուն վրայ՝ որ քեզ չեն ճանչնար , ու ան թաղաւորութիւններուն վրայ՝ որ քու անունդ չեն կանչեր :

7 Ինչու որ՝ Յակորը կերան , ու անոր բնակութիւնը աւրեցին :

8 Մի՛ յիշեր մեզի դէմ առջի անօրէնութիւնները . թող շուտով հասնի մեզի քու ողորմութիւններդ , ինչու որ շատ տկարացանք :

9 ()գնէ՛ մեզի մեր փրկութեան Աստտուածը քու անունիդ փառքին համար . ու փրկէ՛ մեզ , և քաւէ մեր մեղքերը քու անունիդ համար :

10 Ինչո՞ւ պիտի ըսեն հեթանոսները , թէ՛ Ա՛ր է անոնց Աստուածը . հեթանոսներուն մէջը մեր աչիքներուն առջևը յայտ-

15 Տէրը ատողները շողաքորդութիւն պիտի ընէին իրեն , ու անոնց ժամանակը յաւիտեան պիտի ըլլար :

16 Ըն պիտի կերակրէր անոնք պարարտ ցորենով , ու վեմէն ձուլած մեղրովը քեզ պիտի կշտացունէի :

ՍԱՂ ՄՈՍ ԶԻ :

Ըստփին Սողոսը :

Ըստուած կայնած է Ըստուծոյ ժողովուրդին մէջը , աստուածներուն մէջը դատաստան կրտսենայ :

2 Մինչև ե՞րբ անիրաւութիւնով կը դատէք , ու ամբարիշտներուն ակնառութիւն կրնէք : Ահլայ :

3 Իրաւունք ըրէք աղքատին ու որբին . արդարացուցէք խեղճը ու աղքատը :

4 Փրկեցէք աղքատը ու տնանկը , անստամբարիշտներուն ձեռքէն ազատեցէք :

5 Չեն խմանար ու միտք չեն առներ , խաւարի մէջ կը սպտըտին . երկրին բոլոր սիւնները շարժեցան :

6 Ես ըսի թէ՛ Գուք աստուածներ էք , ու դուք բոլորդ Ռարձրեալին զակրններն էք :

7 Բայց մարդոց պէս պիտի մեռնիք , ու իշխաններուն մէկին պէս պիտի իյնաք :

8 Ելի՛ր ս'վ Աստուած , ու դատէ՛ երկիրը . ինչու որ բոլոր հեթանոսները դուն պիտի ժառանգես :

ՍԵՂ ՄՈՍ . 2Գ . :

Աստի՛ն երգին՝ Սաղմսը :

Ո՛վ Աստուած , լուռ մի՛ կենար . անձայն մի՛ ըլլար ու մի՛ դադարիր՝ ս'վ Աստուած :

2 Պատճառն որ ահա քու թշնամիներդ կրգոռանկոր , ու քեզ ատողները գլուխ վերցուցին :

3 Խորամանկ նարք կրգտնանկոր քու ժողովուրդիդ դէմ , ու խորհուրդ կրնեն կոր . քու պահպանածներուդ դէմ :

4 Ըսին թէ , Եկէք կորսնցունենք անոնք որ աղգ չըլան , ու ալ չի յիշի Խորայէլին անունը :

5 Ինչու որ միտքան սրտով խորհուրդ ըրին , ու քեզի դէմ ուխտ ըրին :

6 Եդօմայ բնակարանները ու Խորայէլացիները , Մովարը ու Հադարացիները ,

7 Գերաղ ու Ըմօն և Ըմաղէկ , Փղշտացիները Տիւրոսի բնակիչներուն հետ .

8 Ասուր ալ միտքանեցաւ անոնց հետ , օգնութիւն ըրին Գովտին զաւկրներուն : Սէլայ :

9 Ըրէ անոնց ինչպէս Սաղիամին , ինչպէս Սիսերային՝ ինչպէս Յարինին՝ Աիսօն գեաին վրայ լրէր :

10 Որ անոնք Ենդորի մէջ սատկեցան ,
 «- երկրի աղբի ուէ» եղան :

11 Ընոնց իշխանները ()րէրին ու ()էրին պէս , ու անոնց բոլոր երևելիները ()էրէէին ու Սաղմանային պէս ըրէ :

12 Որ ըսին թէ , Ըստուծոյ բնակարանները մենք ժառանգենք մեզի համար :

13 Ո՛վ իմ Ըստուածս , անոնք մղեղի պէս , «- հովին առջևը յարդին փոշին պէս ըրէ :

14 Ինչպէս որ կրակը անտառը կերէ ու բոցը լեռները կրփռնեցունէ :

15 Ընանկ ալ հալածէ անոնք քու մրրիկովդ , ու վախցուր անոնք քու փոթորիկովդ :

16 Լեցուր անոնց երեսները անարգանքով , որ քու անունդ խնդրեն՝ ո՛վ Տէր :

17 Թող ամենան ու շփոթին յաւիտեանս յաւիտենից , ու խպնին և կորսրվին :

18 Որ գիտնան թէ դուն մինակ ես «ըստ» անունդ Տէր է , Ըարծրեալ ես բոլոր երկրի վրայ :

ՍԵՂ ՄՈՍ 2Գ :

Գլխաւոր երգեցողէն , ԿԵՆԵՆԵՆԵ ՎՅԱՅ ,
Կորեւոյ որդոցը Սաղմոսը :

1 Անչպէս սիրելի են քու բնակարաններդ ,
ո՛վ զօրաց Տէրը :

2 Իմ անձս կրփափագի ու կրմարիկոր
Տէրօջը սրաններուն համար . իմ սիրտս
ու մարմինս կը ցնծան կենդանի Լստու-
ծուն :

3 Ղնճղուկն ալ տուն գտաւ ու ծիծեռ-
նիկն ալ բոյն՝ իրեն ու իր ձագերը դնելու
համար , քու սեղաններուդ քովը՝ ո՛վ զօրաց
Տէրը , իմ թագաւորս ու Լստուածս :

4 Երանի՛ անոնց որ քու տանդ մէջը
կըրնակին , անոնք անդադար քեզ պիտի
օրհնեն : Ահլայ :

5 Երանի՛ ան մարդոցը որ իրենց զօրու-
թիւնը քենէ է . ու իրենց սրտին մէջը հաս-
տատ ձամբաներ կան :

6 Լրտասութիւն ձորին մէջէն անցնողնե-
րը՝ աղբիւրի պէս կը շինեն անիկա . ժամա-
նակին անձրևն ալ օրհնութիւնով պիտի
ծածկէ անիկա :

7 Լնոնք զօրութենէ զօրութիւն կեր-
թան , քիչն որ Սիօնին մէջը Լստուծոյ առ-
ջին տեսնովին :

8 Ո՛վ Տէր՝ զօրաց Մատուածը , լսէ իմ
աղօթքիս . ահանջ դիր ո՛վ Յակօբայ Մա-
տուածը : Սէլայ :

9 Ո՛վ մեր վահանը Մատուած՝ տե՛ս , ու
քու օժեպիդ երեսը նայէ՛ :

10 Ինչու որ՝ քու սրահներուդ մէջը մէկ
օրը հաղարէն աղէկ է . աւելի ընտրեցի իմ
Մատուածոյս տանը շէմին վրայ ըլլալ , քան
թէ ամբարիշտներուն մէջը բնակիլ :

11 Ինչու որ , Տէր Մատուած արև ու
վահան է . Տէրը շնորհք ու փառք պիտի
տայ . աղէկութիւնը չի պիտի պակսեցունէ
չիտակութիւնով քալողներէն :

12 Ո՛վ զօրաց Տէրը , երանի՛ քեզի յու-
սացող մարդուն :

ՍՄԴՄՈՍ . ԶԵ :

Գլխաւոր երգեցողէն . Կրեւոյ որդոցը
Սաղմոսը :

Ո՛վ Տէր , դուն հաւնեցար քու երկրիդ .
Յակօբին գերութիւնը դարձուցիր .

2 Քու ժողովուրդիդ անօրէնութիւնը
ներեցիր , անոնց բոլոր մեղքերը ծածկեցիր :
Սէլայ :

3 Հեռացուցիր քու բոլոր սրամտու-
թիւնդ . ետ դարձար քու բարկութեանդ
բորբոքելէն :

4 Ս'եզ դարձուր՝ ո՛վ մեր փրկիչ Աստուածը . ու քու բարկութիւնդ՝ որ մեր վրայ է, թող դադարի :

5 Ս'իժէ յաւիտեան կրքարկանան մեր վրայ . քու բարկութիւնդ ազգէ մինչև ա՛զգ մի կերկրնցունես :

6 Ս'իժէ ետ չն՛ս դառնար, ու մեզ կենդանացուներ . որ քու ժողովուրդդ ուրախ ըլլայ քեզմով :

7 Յուցուր մեզի՝ ո՛վ Տէր, քու ողորմութիւնդ . ու տուր մեզի քու փրկութիւնդ :

8 Պիտի լսեմ՝ ինչ որ կրխօսի Տէր Աստուած . ինչու որ խաղաղութիւն կրխօսի իր ժողովուրդին չետ ու իր սուրբերուն չետ . ու յիմարութեան չի պիտի դառնան անոնք :

9 Իրաւ որ իր փրկութիւնը մօտ է իրմէն վախցողներուն . որ մեր երկրին մէջը փառք բնակի :

10 Աղորմութիւն ու ճշմարտութիւն իրարու պատահեցան . արդարութիւն ու խաղաղութիւն իբրև չամբուրեցին :

11 Ճշմարտութիւնը երկրէն պիտի բուսնի, ու արդարութիւնը երկինքէն վար պիտի նայի :

12 Տէրը բարութիւն պիտի տայ . ու մեր երկիրը իր պտուղը պիտի տայ :

13 Արդարութիւնը անոր առջևէն պիտի

երթայ . ու իր գնացքները ճամբու պիտի
դնէ :

ՍԵՂՍՐԱՍ ԶՕ :

Պատելի աղօթիչ :

Ո՛վ Տէր , խոնարհեցուր քու ականջդ .
պատասխան տուր ինձի , ինչու որ աղ-
քատու խեղճ եմ :

2 Պահէ իմ անձս , ինչու որ ես սուրբ
եմ . դուն՝ ո՛վ իմ Մատուածս , քեզի յու-
սացող ծառայի փրկէ :

3 Աղորմէ ինձի՝ ո՛վ Տէր , ինչու որ քե-
զի կրկանչեմ ամէն օր :

4 Աւրախացուր քու ծառայիդ անձը ,
ինչու որ գէպի քեզի կրվերցունեմ իմ
անձս ո՛վ Տէր :

5 Ասն զի դուն՝ ո՛վ Տէր , բարի ու
ներող ես , և ողորմութիւնով հարուստ
ես ան ամէնուն որ քեզի կրկանչեն :

6 Մկանջ դիր իմ աղօթքիս՝ ո՛վ Տէր ,
ու մտիկ ըրէ իմ աղաչանքիս ձայնին :

7 Իմ նեղութեանս օրը քեզի կրկան-
չեմ , ինչու որ դուն ինձի կրպատասխա-
նես :

8 Մատուածներուն մէջը քեզի նման չի
կայ՝ ո՛վ Տէր , ու քու գործքերուդ պէս չի
կայ :

9 Ի՞նչո՞ր ստեղծած աղգերդ պիտի գան
ու երկրպագութիւն ընեն քու առջիդ՝
ո՞վ Տէր, ու քու անունիդ փառք պիտի
տան :

10 Ա՛յն զի դուն մեծ՝ ու հրաշքներ
գործող նս, Աստուած մինակ դուն ես :

11 Ո՞վ Տէր, ցուցուր ինձի քու ճամ-
բադ, «Ի քու ճշմարտութեանդ մէջը պտը-
տիմ՝ միացուր իմ սիրտս, որ քու անու-
նէդ վախնայ :

12 Պիտի դո՛հանամ քենէ՞ ո՞վ Տէր իմ
Աստուածս, բոլոր սրտովս. ու յաւիտեան
պիտի փառաւորեմ քու անունդ :

13 Ինչու որ քու ողորմութիւնդ մեծ է
ինձի, ու դուն փրկեցիր իմ անձս խորունկ
դժոխքէն :

14 Ո՞վ Աստուած, ամբարտաւանները
ինձի դէմ՝ ելան, ու բռնաւորներուն ժո-
ղովքը իմ անձս փնտուեցին, ու քեզ իրենց
առջևը չի դրին :

15 Ի՞նչո՞ր դուն՝ ո՞վ Տէր, գթած ու ո-
ղորմած Աստուած ես, երկայնամիտ՝ ու ո-
ղորմութիւնով և ճշմարտութիւնով հա-
րուստ ես :

16 Ե՛րայէ ինձի ու ողորմէ ինձի, քու
զօրութիւնդ տուր քու ծառայիդ, ու քու
աղախինիդ զաւակը փրկէ :

17 Մէկ բարութեան նշան մը բրէ ինձի,
որ իս առողները տեսնեն ու ամչնան. ին-

չու որ դուն՝ ո՛վ Տէր , ինձի օգնեցիր ու
իս մտիթարեցիր :

ՍԵՂՄՈՍ ԶԼ :

Կրեւոյ սրբոցը երգին Սաղմոսը :

Մնոր հիմերը սուրբ լեռներուն վրայ
նն :

2 Տէրը Սիօնին դուռները Յակոբին
բոլոր բնակարաններէն էլելի կըսիրէ :

8 Փառաւոր բաներ կը պատմըվին քեզի
համար , ո՛վ Աստուծոյ քաղաքը : Սէլոյ :

4 Ուստի ու Ռարելոնը պիտի յիշեմ
իս ճանչցողներուն . ահա՛ փղշտացիք ու
Օուրը Վուշին հետ . ասոնք ու հոն
ծնան :

5 Ու Սիօնին համար պիտի ըսվի , թէ՛
Աս մարդը ու ան մարդը հոն ծնաւ . ու
ինքը Ռարձրեալը պիտի հաստատէ անիկա :

6 Տէրը ազգերը դրած ժամանակը պիտի
ըսէ , թէ՛ Աս հոն ծնաւ : Սէլոյ :

7 Ու երգողները ինչպէս որ պար ցաթ-
կելու առաջնորդողները պիտի ըսեն , թէ՛
Ի՞մ բոլոր աղբիւրներս քենէ են :

ԱՆՎ ՄՈՍ · ԶԲ :

Կորիտայ սրբոցը երգին Սաղմոսը , Գլխաւոր
երգեցողին , Սահակաբէ Իեանօբէ Վրայ ,
Ե՛հան Եղբահայրին երգը :

Ո՛վ Տէր՝ իմ փրկութեանս Նստուածը ,
ցորեկը կըկանչեմ , — գիշերը քու առ-
ջիդ եմ :

2 Իմ աղօթքս քու առջիդ թող ելլէ .
խոնարհեցուր քու ականջդ իմ աղաղա-
կիս :

3 Ինչու որ՝ իմ անձս չարչարանքներով
լեցված է , ու իմ կեանքս գերեզմանին մօ-
տեցաւ :

4 Գերեզմանը իջնողներուն հետ սեպ-
վեցայ . ուժ չունեցող մարդու մը պէս ե-
ղայ :

5 Սեռելներուն մէջը ինկած եմ . գե-
րեզմանին մէջը պառկող մեռածներուն պէս
որ չես յիշեր անոնք , ու քու ձեռքէդ ելած
են :

6 Կուն իս ամէնէն խորունկ փոսին մէջը
դրիր , մութ — խորունկ տեղերուն մէջը :

7 Քու սրամտութիւնդ ծանրրցաւ իմ
վրաս , ու բոլոր քու ալիքներովդ ինձի չար-
չարանք տրւիր : Սէլայ :

8 Իմ ճանչվորներս ինձմէ հեռացուցիր .

իս գարշելի ըրիր անոնց առջին . գոց-
վեցայ , ու դուրս չեմ ելլեր :

9 Չարչարանքէն աշխուներս վատեցան .
ամէն օր քեզի աղաղակեցի՝ ո՛վ Տէր . ձեռ-
վըներս քեզի երկնցուցի :

10 Մի՛թէ մեռելներո՞ւն հրաշք պիտի ը-
նես . մի՛թէ մեռածներ՞ը պիտի ելլեն ու քե-
նէ գոհանան : Սէլայ :

11 Մի՛թէ կըպատմըվի՞ քու ողորմու-
թիւնդ գերեզմանին մէջը , ու քու ճշմար-
տութիւնդ աւերմունքին մէջը :

12 Մի՛թէ կըճանչցըվի՞ն քու հրաշքներդ
խաւարին մէջը , ու քու արդարութիւնդ
մոռացման երկրին մէջը :

13 Ի՛այց ես՝ ո՛վ Տէր , քեզի աղաղակե-
ցի . ու իմ աղօթքս առտըվանց քեզի պիտի
հասնի :

14 Ո՛վ Տէր , ինչո՞ւ իմ անձս կը
մերժես , ու քու երեսդ կըպահես ինձ-
մէ :

15 Ես խեղճ եմ ու մանկութենէս հետէ
կըմեռնիմկօր . քու ահերդ քաշեցի ու խոռ-
վեցայ :

16 Վ՛ու սրտմտութիւնդ իմ վրաս ան-
ցաւ , ու քու զարհուրանքներդ իս կօրսըն-
ցուցին :

17 Լ՛մէն օր ջուրի պէս իս պատեցին , մէկ
տեղ չորս կողմս առին :

18 Հեռացուցիր ինձմէ իմ սիրելիս ու

բարեկամս . իմ ճանչվորներս խաւարին
մէջն են :

ՍԵՂՍՐԱՍ · ԶԹ · :

Լէւան Եղեակացիին երգը :

Տէրոջը ողորմութիւններուն յաւիտեան
պիտի երգեմ . քու հաւատարմութիւնդ
իմ բերնովս ազգէ ազգ պիտի պատ-
մեմ :

2 Ա՛յն զի ըսի թէ՛ Ողորմութիւնը յա-
ւիտեան պիտի շինվի . երկինքին մէջը պիտի
հաստատես քու հաւատարմութիւնդ :

3 Ես իմ ընտրածիս հետը ուխտ ըրի .
իմ Գաւիթ ծառայիս երգում ըրի , Է՛

4 Հաւիտեան պիտի հաստատեմ քու զա-
ւակդ , ու ազգէ ազգ պիտի շինեմ քու ա-
թող :

5 Ու երկինքը կրփառաւորէ քու հրաշք-
ներդ՝ ո՛վ Տէր , ու քու հաւատարմութիւնդ
սուրբերուն ժողովքին մէջը :

6 Ա՛յն զի ո՛վ կայ երկինքին մէջը .
Տէրոջը հաւասար . ու Լստուծոյ զաւկը-
նեքէն ո՞վ կընմանի Տէրոջը :

7 Լստուած զարհուրելի է սուրբերուն
ժողովքին մէջը , ու ահաւոր է իր բոլոր
չորս կողմի եղողներուն :

8 Ո՛վ Տէր՝ զօրաց Լստուածը , ո՛վ է

քեզի պէս զօրաւոր Տէր . ու քու հաւատարմութիւնդ քու շորս կողմդ է :

9 Գու՛ն կըտիրապետես ծովուն բարձրութեանը վրայ . երբոր անոր ալիքները կըբարձրանան , դուն կըցածցունես անոնք :

10 Գու՛ն փշրեցիր Սահարը խոցվածի պէս , քու զօրութեանդ բազուկովը ցրվեցիր քու թշնամիներդ :

11 Վու՛կդ է երկինքը , ու քուկդ է երկիրը . դուն հիմնեցիր աշխարհքը ու անոր լիութիւնը :

12 Հիւսիսը ու Հարաւը դուն ստեղծեցիր . (Ժաբօր ու Հերմօն քու անունովդ կըցնծան :

13 Վու՛կդ է բազուկը իր զօրութիւնովը . քու ձեռքդ զօրաւոր է , քու աջ ձեռքդ բարձրացած է :

14 Արդարութիւնը ու իրաւունքը քու ասթուիդ հիմն է , ողորմութիւնը ու ճշմարտութիւնը քու երեսիդ առջևէն կերթան :

15 Երանի՛ ան ժողովուրդին , որ գիտեն Իողէրուն ձայնը . ո՛վ Տէր , անոնք քու երեսիդ լուսովը պիտի քայլեն :

16 Բու՛ անունովդ ամէն օր պիտի ցընծան , ու քու արդարութիւնովդ պիտի բարձրանան :

17 Ա՛սան զի դուն ես անոնց զօրու-

Թեան փառքը , ու քու հաճութիւնովդ կը
բարձրանայ մեր եղջիւրը :

18 Ինչու որ մեր վահանը Տէրոջն է ,
ու մեր թագաւորը Իսրայէլին սուրբինն
է :

19 Ըն ժամանակը տեսիլքով խօսեցար
քու սուրբիդ հետ ու ըսիր՝ ()գնութիւն
դրի զօրաւորին վրայ , ժողովուրդէն ընտ-
րովածը բարձրացուցի :

20 Իմ ծառաս Վաւիթը գտայ , իմ
սուրբ եղովս անիկա օծեցի :

21 Որ անոր իմ ձեռքս պիտի հաստատ-
վի , ու իմ բազուկս պիտի զօրացունէ անի-
կա :

22 Թշնամին չի պիտի հարստահարէ ան-
իկա , ու անօրէնին զաւակը չի պիտի շար-
շարէ անիկա :

23 Ու իր թշնամիները իր առջևէն պի-
տի զարնեմ , ու ինքը ատողները պիտի
զարնեմ :

24 Ու իմ հաւատարմութիւնս ու ողոր-
մութիւնս անոր հետ պիտի ըլլայ , ու անոր
եղջիւրը իմ անունովս պիտի բարձրանայ :

25 Ընոր ձեռքը ծովուն մէջը պիտի
դնեմ , ու անոր աջ ձեռքը գետերուն մէ-
ջը :

26 Ընիկա ինձի պիտի կանչէ , թէ՛
Վուն ես իմ հայրս՝ իմ Վստուածս՝ ու իմ
փրկիչութեանս վէմը :

27 Ու ես առջիննեկ պիտի ընեմ անիկա՝
երկրի թագաւորներէն բարձր :

28 Յաւիտեան պիտի պահեմ անոր հա-
մար իմ ողորմութիւնս , ու անոր հետ իմ
ուխտս հաւատարիմ պիտի ըլլայ :

29 Ու անոր զաւակը յաւիտեան , ու
անոր աթոռը երկինքի օրերուն չափ պիտի
ընեմ :

30 Թէ որ անոր զաւկըները իմ օրէնքս
թողուն , ու իմ իրաւունքիս մէջը չեր-
թան ,

31 Թէ որ իմ հրամաններս անարգեն .
ու իմ պատուիրաններս չի պահեն :

32 Ըն ժամանակը գաւազանով պիտի
պատժեմ անոնց անօրէնութիւնները , ու
ծեծերով՝ անոնց անիրաւութիւնները :

33 Եւայց իմ ողորմութիւնս չի պիտի
արգիլեմ անկէ , ու իմ հաւատարմութիւնս
սուտ չի պիտի հանեմ :

34 Իմ ուխտս չի պիտի անարգեմ , ու
պոկունքներէս ելածը չի պիտի փոխեմ :

35 Ընգամ մը երդում ըրի իմ սրբու-
թիւնովս , որ սուտ չի պիտի ըսեմ՝ Եւա-
րթի :

36 Ընոր զաւակը յաւիտեան , ու անոր
աթոռը իմ առջիս արեգակին չափ պիտի
մնայ :

37 Ըստինի պէս յաւիտեան , ու երկին-
քին մէջը հաւատարիմ վկայի պէս պիտի
հաստատուի : Աւարտ :

38 Բայց դուն երեսէ ձգեցիր ու անար-
դեցիր, օճեալիդ բարկացար :

39 Վու ծառայիդ ուխտը փճացուցիր .
անոր թագը գետնին հաւասար պղծեցիր :

40 Ընոր բոլոր պարիսպները փլցուցիր .
անոր ամուր տեղերը աւերակ բրիր :

41 Բոլոր ճամբէն անցնողները յափշ-
տակեցին անիկա . նախատինք եղաւ իր
դրացիներուն :

42 Ընիկա նեղացունողներուն աջ ձեռ-
քը բարձրացուցիր . անոր բոլոր թշնամի-
ները ուրախացուցիր :

43 Ընոր սուրին բերանը ևս զարձու-
ցիր, ու ինքը պատերազմին մէջ չի կայնե-
ցուցիր :

44 Ընոր փառաւորութիւնը դաղարե-
ցուցիր, ու անոր աթոռը գետինը զարկիր :

45 Ընոր երիտասարդութեան օրերը
կարճըցուցիր, անիկա ամօթով ծածկեցիր :
Սէլայ :

46 Սիլ Տէր, մինչև երբ քու անձդ իս-
պառ կրպահես . բու սրտմտու թիւնդ կրակի
պէս կրբորբոքի՞ մի :

47 Յիշէ՛ իմ կեանքիս ինչ բլլալը . ին-
չո՞ւ համար զուր տեղ ստեղծեցիր մարդոց
բոլոր զաւկրները :

48 Սիլ է ան մարդը որ ապրի ու մահ
չի տեսնէ, ու իր անձը դժօրբին ձեռքէն
փրկէ : Սէլայ :

49 Ո՛վ Տէր՝ ո՞ւր են քու առջի ողորմութիւններդ , որ երդում ըրիր Վաւիթին քու հաւատարմութիւնովդ :

50 Ո՛վ Տէր՝ յիշէ՛ քու ծառաներուդ նախատինքը , որ իմ ծոցիս մէջը կը կրեմ բոլոր մեծ ազգերէն .

51 Ար անով քու թշնամիներդ անարգեցին՝ ո՛վ Տէր , որ անով քու օծեալիդ գնացքները անարգեցին :

52 () ր՛նեալ ըլլայ Տէրը յաւիտեան .
ամէն ու ամէն :

ՍԵՂՍՈՍ Գ :

Լսա՛ս ձոյ հարդուն Սո՛վեհսին ազօնքը :

Ո՛վ Տէր , դուն մեր ապաւէնն ես ազգէ մինչև ազգ :

2 Ի նոներուն ծնանկէն առաջ , ու երկրի և՛ աշխարհի ստեղծվելէն առաջ , յաւիտենից մինչև յաւիտեանս դուն ես Լսաւուած :

3 Գուն մարդը փոշի կը դարձունես , ու կըսես՝ Ետ դարձէք մարդոց զաւկրները :

4 Ասն զի՛ հազար տարին քու առջիդ էրէկվան անցնող օրին պէս է , կամ գիշերվան պահուն պէս է :

5 Արնկղմես անոնք , երազի պէս կը ըլլան , առտրվան կանչըցող խոտին պէս կը ըլլան :

6 Լ՛ատրվանց կըծաղկի ու կրկանչոնայ ,
իրիկունը կըկտրվի ու կըչորնայ :

7 Ինչու որ՝ քու բարկութիւնովդ կըմա-
չինք , ու քու սրտատութիւնովդ կըխոռ-
վինք :

8 Ս՛եր անօրէնութիւնները քու առջիդ ,
« մեր ծածուկ մեղքերը՝ քու երեսիդ լու-
սին մէջ դրիր :

9 Ինչու որ՝ մեր ամէն օրերը քու բար-
կութիւնովդ կանցնին . մեր տարիները խոր-
հուրդի մը պէս կանցունենք :

10 Ս՛եր տարիներուն օրերը եօթանա-
սուն տարի են . ու թէ որ զօրութիւնով
ու թսուն տարի ըլլալու ըլլան , տակաւին
անոնց փառքը աշխատանք ու ցաւ է . ին-
չու որ՝ անոնք շուտով կանցնին՝ ու մենք
կըթըռչինք :

11 Ո՞վ գիտէ քու բարկութեանդ զօ-
րութիւնը . ու քու սրտատութիւնդ որ դուն
ահաւոր ես :

12 Լ՛նանկ սորվեցուր մեզի մեր օրերը
համրելու , որ սրտի իմաստութիւն վաստը-
կինք :

13 Դարձիր Տէր՝ մինչև ե՞րբ . ու
գթութիւն ըրէ՝ քու ծառաներուդ վրայ :

14 Աշտացուր մեզ կանուխ քու ողոր-
մութիւնովդ , որ ցնծանք և ուրախ ըլլանք
մեր բոլոր օրերուն մէջը :

15 Աւրախացուր մեզ ան օրերուն շա-

փոփը , «Կ տրամեցուցիր մեզ . ան տարինե-
րուն չափովը , «Կ չարիք տեսանք :

16 Թող երևայ քու գործքդ քու ծառա-
ներուդ . ու քու փառքդ անոնց զաւկրնե-
րուն :

17 Ու մեր Տէր Աստուծոյ շնորհքը մեր
վրայ ըլլայ . ու ձեռվըներնուս գործքը հաս-
տատէ մեր վրայ , ու մեր ձեռվըներուն
գործքը հաստատէ :

ԱՇՊՄՈՍ ԳՆ :

Քարձրեալին ծածկոցին տակը նստողը
Ամենակարողին շուքին տակը պիտի
բնակի :

2 Պիտի ըսեմ Տէրոջը . Իմ ապաւէնս
ու իմ ամբոցս . իմ Աստուածս՝ որուն կը
յուսամ :

3 Ասան զի՛ ան պիտի փրկէ քեզ որսո-
ղին որոգայթէն , ապականիչ ժանտամա-
հէն :

4 Քեզ իր փետուրներովը պիտի ծած-
կէ՛ ու իր թևերուն տակը պիտի պաշտպան-
վիս . անոր ճշմարտութիւնը ասպար մը ու-
վահան մը պիտի ըլլայ խեղէ :

5 Գիշերվան զարհուրանքէն՝ «- ցորեկ-
վան թռչող նետէն ,

6 Սութ տեղը ժուռ եկող ժանտամա-
հէն՝ «- կէս օրվան սատկըցունող ապակա-
նութենէն չի պիտի վախնաս :

7 Հաղար հոգի քու քովէդ , ու տասը հաղար քու աջ կողմէդ պիտի իյնան . Բայց ան քեզի չի պիտի մօտենայ :

8 Միայն քու աչվըններովդ պիտի նայիս , ու ամբարիշտներուն հատուցումը պիտի տեսնես :

9 Որովհետև դուն Տէրը՝ իմ պատրաստարանս՝ Բարձրեալը քեզի ապաւէն ըրիր ,

10 Քեզի չարութիւն չի պիտի հասնի . ու քու բնակարանիդ նեղութիւն չի պիտի մօտենայ :

11 Ինչու որ՝ իր հրեշտակներուն պիտի ապսպրէ քեզի համար , որ քեզ քու բոլոր ճամբաներուդ մէջ պահեն :

12 Ընոնք ձեռվըններնուն վրայ պիտի վերցունեն քեզ , որ չըլլայ թէ ոտքդ քարի զարնես :

13 Ըռիւծին ու իծին վրայ պիտի քալես . առիւծի լակոտը ու վիշապը պիտի կոխկրուտես :

14 Այսն զի ինծի կրցանկայ՝ անոր համար ես պիտի փրկեմ անիկա . պիտի բարձրացունեմ անիկա , ինչու որ ան իմ անունս գիտցաւ :

15 Ինծի պիտի կանչէ , ու ես անոր պատասխան պիտի տամ . նեղութեան մէջ անոր հետ պիտի ըլլամ , պիտի ապրեցունեմ ու փառաւորեմ անիկա :

16 Երկայն օրերով պիտի կշտացունեմ

անիկա , ու իմ փրկութիւնս պիտի ցուցընեմ անոր :

ՍԵՂ ՍՈՍ . Գ Բ :

Շաբաթ օրվան համար երգի Սաղմոսը :

Քարի է գոհանալ Տէրոջմէն , ու սաղմոս ըսել քու անունիդ՝ ո՛վ Քարձրեալ .

2 Առաջվանց քու ողորմութիւնդ , ու գիշերը՝ քու հաւատարմութիւնդ պատմել ,

3 Տասը թելէ նուագարանով ու սաղմոսարանով , Կ քնարի ձայնով :

4 Ա՛սն զի դուն՝ ո՛վ Տէր , քու գործքովդ իս ուրախացուցիր . քու ձեռվըներուդ գործքերովը պիտի ցնծամ :

5 Ա՛վ Տէր , ի՛նչ մեծ են քու գործքերդ . շատ խորունկ են քու խորհուրդներդ :

6 Թանձրամիտ մարդը ասիկա չիմանար , ու անմիտը չի հասկընար :

7 Ա՛մբարիշտներուն խոտի պէս բուսնիլը , ու ամէն անօրէնութիւն գործողներուն ծաղկիլը , իրենց յաւիտեանս յաւիտենից սատկելնուն համար է :

8 Քայց դուն՝ ո՛վ Տէր , յաւիտեանս բարձր ես :

9 Ա՛սն զի ահա՛ քու թշնամիներդ՝ ո՛վ Տէր , վ՛ասն զի ահա՛ քու թշնամիներդ պի-

տի կորնչին . ան ամէն անօրէնութիւն գործողները պիտի ցրվին :

10 Իսայց իմ եղջուրս վայրի ցուլին էլ զլուրին պէս պիտի բարձրացունես . ես նոր իւղով օծվեցայ :

11 Աւ իմ աչքներս թշնամիներուս վրայ ուզածս պիտի տեսնան , իմ ականջներս ինծի դէմ ելլող շարագործներուն վրայ ուզածս պիտի լսեն :

12 Երգարը արմաւենիին պէս պիտի ծաղկի , ի բանանի մայր ծառին պէս պիտի մեծնայ :

13 Տէրօջը տանը մէջ տնկրվածները , մեր Լստուծոյ սրահներուն մէջը պիտի ծաղկին :

14 Օներութեան մէջն ալ պտուղ պիտի տան պարարտ ու կանանչ պիտի մնան .

15 Ար պատմեն թէ՛ Տէրը իմ վէմս ուղիղ է , ու անիրաւութիւն չի կայ անոր մէջը :

ՍԵՂՍՈՍ ԳԼԽԹԻ :

Տէրը կը թագաւորէ , մեծախառութիւն հագած է . Տէրը զօրութիւնով հագված ու գօտի կապած է . աշխարհքն ալ հաստատ է և չի շարժիր :

2 Վու աթոռդ հին ժամանակէն հաստատ է . 'ի յաւիտենից ես դուն :

3 Ո՛վ Տէր , գետերը բարձրացուցին՝
գետերը բարձրացուցին իրենց ձայները .
գետերը բարձրացուցին իրենց աղաղակնե-
րը :

4 Տէրը շատ ջուրերուն ձայնէն «- ծո-
վուն մեծ ալիքներէն աւելի զօրաւոր է վե-
րը :

5 Քու վկայութիւններդ շատ հաւա-
տարիմ են . ո՛վ Տէր , քու տանդ կը վայլէ
սրբութիւնը երկան օրերով :

ՍՇԳ ՍՈՍ ԳՆԳ:

Ո՛վ Տէր՝ վրէժխնդրութիւններուն Մս-
տուածը , ո՛վ վրէժխնդրութիւններուն
Մստուածը , յայտնըվէ :

2 Ելի՛ր ո՛վ երկրին դատաւորը , հա-
տուցումն ըրէ ամբարտաւաններուն :

3 Ո՛վ Տէր՝ մինչև ե՞րբ ամբարիշտները ,
մինչև երբ ամբարիշտները պարծենան .

4 Գողողութեամբ բարբառելով խօսին ,
բողոք անօրէնութիւն գործողները պար-
ծենան :

5 Ո՛վ Տէր , անոնք քու ժողովուրդդ
կը կոտորտեն , ու քու ժառանգութիւնդ կը
նեղացունեն :

6 Արբեւարին ու պանդուխտը կը սպան-
նեն , և որբերը կը մեռցունեն :

7 Աւ կը սեն՝ Տէրը չի տեսնար , և Յա-
կոբին Մստուածը չի մանար :

8 Իմացէք՝ ո՛վ ժողովուրդին յիմարնե-
րը , ու դուք՝ ո՛վ անմիտներ , ե՛րբ միտք
պիտի առնէք :

9 Մի՛թէ ականջը տնկողը չի՞ լսեր , կամ
թէ աչքը ստեղծողը չի՞ տեսներ :

10 Մի՛թէ ազգերը խրատողը չի՞ յան-
դիմաներ , մի՛թէ մարդու գիտութիւն սոր-
վեցունողը չի՞ գէտեր :

11 Տէրը մարդոց խորհուրդները գիտե-
որ ունայն են :

12 Երանի՛ ան մարդուն , որ դուն անի-
կա կրնարատես ո՛վ Տէր . ու քու օրէնքդ ա-
նոր կըսորվեցունես .

13 Ար չարութեան օրերուն մէջը անի-
կա հանգչեցունես , մինչև որ ամբարիշտին
հորը փորվի :

14 Ս ասն զի՛ Տէրը իր ժողովուրդը՝ ե-
րեսէ չի ձգեր , ու իր ժառանգութիւնը չի
թողուր :

15 Ինչու որ՝ դատաստանը իրաւունքի
կըդառնայ . ու ամէն սրտով ուղիղ եղող-
ները անոր ետեւէն կերթան :

16 Ինծի համար չարերուն դէմ ո՛վ
կեցէ , ինծի համար անօրէնութիւն գոր-
ծողներուն դէմ ո՛վ կրկայնի :

17 Թէ որ Տէրը ինծի օգնելու չըլլար ,
քիչ կըմնար որ իմ անձս լուութեան տեղը
պիտի բնակէր :

18 Երբոր ըսէի , թէ՛ Իմ՝ ոտքս կըսասա-

նի, ու Տէր՝ քու ողորմութիւնդ իս կը հաստատէր :

19 Իմ ներսիդ իս մեծ նեղութիւններուն մէջ քու մխիթարութիւններդ իմ անձս կուրախացունէին :

20 Մի՞թէ քեզի կը հաւասարի՞ անօրէնութեան աթոռը, որ կաշխատի օրէնքին դէմ :

21 Ըրդարին անձին դէմ ժողովրդեցան, ու անմեղին արիւնը կը դատապարտեն :

22 Իայց Տէրը ինծի ապաւէն, ու իմ Ըստուածս իմ յուսացած վէմն եղաւ :

23 Ու ան՝ անոնց անօրէնութիւնը իրենց վրայ պիտի դարձունէ, ու իրենց չարութիւնովը պիտի ջնջէ անոնք. մեր Տէր Ըստուածը պիտի ջնջէ անոնք :

ՍՇՆ ՍՈՍ ԳԵ :

Լ կէ՛ք ցնծութիւն ընենք Տէրոջը, աղաղակենք մեր փրկութեան վէմին :

2 Գոհութիւն տալով իրեն երեսին առջևը գանք, սաղմոսներով աղաղակենք իրեն :

3 Ինչու որ՝ Տէրը մեծ Ըստուած է, ու բոլոր աստուածներուն վրայ մեծ թագաւոր է :

4 Որ անոր ձևքին մէջն է երկրի խո-

բունկ տեղերը , ու լեռներուն գանձերը
անորն են :

5 Ինչու որ ծովը իրն է , ու ինքք շի-
նեց անիկա . և անոր ձեռքները ստեղծե-
ցին ցամաքը :

6 Եկէք երկրպագու թիւն ընենք , ու
ծռինք՝ ծունկ չոքենք մեր ստեղծող Տէրո-
ջը առջին :

7 Ինչու որ ան է մեր Մատուածը , ու
մենք անոր արօտին ժողովուրդը՝ և անոր
ձեռքի ոչխարներն ենք . այսօր՝ թէ որ ա-
նոր ձայնը լսելու ըլլաք ,

8 Մի պինտցունէք ձեր սիրտերը Մե-
րիպային մէջին պէս . անապատին մէջի
փորձու թեան օրվանը պէս .

9 Աւր տեղ ձեր հարերը իս փորձեցին ,
« Է » քննեցին ու իմ գործքերս տեսան :

10 Քառսուն տարի զգուեցայ ան ազգէն ,
ու ըսի . Սրտով մտորած ժողովուրդներ
են անոնք , իմ ճանապարհներս չի ճանչ-
ցան .

11 Որ անոնց համար երդում ըրի իմ
բարկութեանս մէջը՝ թէ չի մտնան իմ
հանգստութեանս մէջը :

ԱՇԳՄՈՍ · Գ, Գ, :

Նոր երգ երգեցէք Տէրոջը . ո՛վ բոլոր
երկիր երգեցէք Տէրոջը :

2 Երգեցէք Տէրոջը , օր^նեցէք անոր ա-
նունը . քարոզեցէք օրէ օր անոր փրկու-
թիւնը :

3 Պատմեցէք հեթանոսներուն մէջը անոր
փառքը . ամէն ժողովուրդներուն մէջը ա-
նոր հրաշքները :

4 Ինչու որ՝ Տէրը մեծ է ու շատ օր^նելու
է , ամէն աստուածներուն վրայ ահաւոր է :

5 Ինչու որ՝ հեթանոսներուն ամէն աս-
տուածները ոչինչ են . բայց Տէրը ստեղծեց
երկինքը :

6 Փառք ու վայելութիւն կայ անոր
առջին , զօրութիւն և գեղեցկութիւն անոր
սրբութեանը մէջ :

7 Տէրոջը տրւէք ո՛վ ազգերուն ցեղերը՝
Տէրոջը տրւէք փառք ու զօրութիւն :

8 Տէրոջը տրւէք իր անունին փառքը .
ընծայ բերէք՝ ու անոր սրա՛ններուն մէջը
մտէք :

9 Երկրպագութիւն բրէք Տէրոջը սուրբ
զարդարանքով . վախցէք անոր երեսէն ո՛վ
բոլոր երկիր :

10 Հեթանոսներուն մէջը ըսէք թէ՛ Տէ-
րը կըթագաւորէ . ու աշխարհքը հաստա-

տեց «բ չի շարժի. ան կըդատէ ժողովուրդները ուղղութիւնով :

11 Երկինքը թող ուրախանայ, ու երկիրը ցնծայ. ծովը ու իր լիութիւնը թող գոռան :

12 Դաշտը, ու բոլոր անոր մէջը եղողները թող ուրախանան. ան ատենը անտառին բոլոր ծառերը թող ցնծան :

13 Տէրօջը առջին, ինչու որ ան կուգակոր՝ ինչու որ ան կուգակոր երկիրը դատելու. աշխարհքը արդարութիւնով, ու ժողովուրդները իր ճշմարտութիւնովը պիտի դատէ :

ՍԱԳՄՈՍ ԳԼԻ:

Տէրը կըթագաւորէ, երկիրը թող ցրնծայ. շատ կղզիներ թող ուրախանան :

2 Ընոր չորս զին ամպ ու մառախուղէ, արդարութիւնը ու իրաւունքը անոր ամբողջին հիմերն են :

3 Կրակը անոր առջևէն կերթայ, ու իր չորս կողմի թշնամիները կերէ :

4 Ընոր փայլակները աշխարհքը կըլուսաւորեն. երկիրը կըտեսնայ ու կըդողայ :

5 Տէրօջը առջին՝ բոլոր երկրին Տէրօջը առջին լեռները մոմի պէս կըհալին :

6 Երկինքը կըպատմէ անոր արդարութիւնը, ու բոլոր ժողովուրդները կըտեսնան անոր փառքը :

7 Թող ամբշնան ան ամէնքը որ կուս-
քերուն կըծառայեն , որ փուճ բաներով
կըպարծենան . թող բոլոր աստուածները
անոր երկրպագութիւն ընեն :

8 Սիօնը լսեց և ուրախացաւ , ու Յու-
դային աղջիկները ցնծացին քու իրաւունք-
ներուդ համար՝ ո՛վ Տէր :

9 Այս ան զի դուն՝ ո՛վ Տէր , բարձրեալ
ես բոլոր երկրի վրայ . շատ բարձրացար
բոլոր աստուածներուն վրայ :

10 Ա՛վ Տէրը սիրողներ , չարութիւնը
ատեցէք . ան իր սուրբերուն անձերը կը
պահէ , ամբարիշտներուն ձեռքէն կըփրկէ
անոնք :

11 Արդարին համար լոյս ցանվեցաւ , ու
սրտով ուղիղ եղողներուն համար ուրա-
խութիւն :

12 Տէրոջմով ուրախացէք՝ ո՛վ արդար-
ներ , ու անոր սրբութիւնը յիշելնուդ
շնորհակալ եղէք :

ՍԱԳՍՈՍ Գ Ը :

Սողոմոն :

Տէրօջը նոր էրգ երգեցէք՝ ինչու որ
հրաշքներ ըրաւ . իր աջ ձեռքը ու իր
սուրբ բազուկը իրեն փրկութիւն տրւաւ :

2 Տէրը ճանչցուց իր փրկութիւնը , ու

ազգերուն աչքներուն առջին յայտնեց իր արդարութիւնը :

3 Յիշեց իր ողորմութիւնը ու իր հաւատարմութիւնը Խորայէլին տանը համար . երկրին ամէն ծայրերը տեսան մեր Աստուծոյ փրկութիւնը :

4 Զնծացէք Տէրոջը ո՛վ ամէն երկիր . ուրախութեան ձայնով աղաղակեցէ՛ք , երգեցէ՛ք ու սաղմոս ըսէ՛ք :

5 Սաղմոս երգեցէ՛ք Տէրոջը քնարով . քնարով ու սաղմոսի ձայնով :

6 Փողերով ու շեփորի ձայնով աղաղակեցէ՛ք Տէր թագաւորին առջին :

7 Թող գոռայ ծովը ու իր լիութիւնը . աշխարհքը , ու անոր մէջի բնակողները :

8 Գետերը թող ծափ զարնեն , լեռները մէկ տեղ թող ցնծան :

9 Տէրոջը առջին , ինչու որ՝ ան կուգակոր երկիրը դատելու . աշխարհքը արդարութիւնով , ու ժողովուրդները ուղղութիւնով պիտի դատէ :

ԱՆՎՈՐԱՍ ԳՆԹԻ :

Տէրը կը թագաւորէ , ժողովուրդները թող սարսափին . ինքը քերովբէից վճայ կընստի , երկիրը թող շարժի :

2 Տէրը մեծ է Սիօնին մէջը , ու մարձրըցած է բոլոր ժողովուրդներուն վրայ :

3 Թող օրհնեն քու մեծ ու ահաւոր անունդ . անիկա սուրբ է :

4 Ու ո՛վ իրաւունք սիրող զօրաւոր թագաւոր , ուղղութիւն հաստատեցիր . իրաւունք ու արդարութիւն ըրիր Յակոբին մէջը :

5 Բարձրացուցէք Տէրը մեր Մատուածը , ու երկրպագութիւն ըրէք անոր ոտքի պատուանդանին . անիկա սուրբ է :

6 Սոսկաւ ու Մարտիոն անոր քահանաներուն մէջը , և Սամուէլ անոնց մէջը որ անոր անունը կրկանչէին . Տէրօջը կանչեցին , ու ան անոնց պատասխան տրւաւ :

7 Մային սիւնին մէջէն կրխօսէր անոնց հետ . անոր վկայութիւնները , ու անոր տրւած հրամանը անոնք կրպահէին :

8 Ո՛վ Տէր՝ մեր Մատուածը , դուն կըլցսէիր անոնց . դուն անոնց քաւիչ Մատուած էիր , թէպէտ վրէժխնդիր եղար անոնց դորձքերուն վրայ :

9 Բարձրացուցէք Տէրը մեր Մատուածը , ու երկրպագութիւն ըրէք անոր սուրբ լիւանը վրայ . ինչու որ՝ Տէրը մեր Մատուածը սուրբ է :

ՍԵՂ ՄՈՍ · Ճ' :

Գաւո-Էէան Սաղմուք :

1 Ղաղակեցէք Տէրոջը ո՛վ բոլոր երկիր :

2 Օտուայեցէք Տէրոջը ուրախութիւնով . անոր առջին եկէք ցնծութիւնով :

3 Ճ'անչցէք որ Տէրն է Աստուած . ան ստեղծեց մեզ , ու չէ թէ մենք . անոր ժողովուրդը ու անոր արօտին ոչխարներն ենք մենք :

4 Ստէք անոր դռները գոհութիւնով , — անոր սրահները շնորհակալութիւնով . գոհացէք անկէ — օրհնեցէք անոր անունը :

5 Սասն զի Տէրը բարի է . անոր ողորմութիւնը յաւիտեան է , ու անոր հաւատարմութիւնը ազգէ մինչև ազգ :

ՍԵՂ ՄՈՍ · ՃԸ :

Սաղմու Գաւ-Էէ :

1 Ողորմութիւն ու իրաւունք պիտի երգեմ . ո՛վ Տէր , քեզի սաղմոս պիտի կարդամ :

2 Իմաստութիւնով պիտի երթամ ան-

մեղ ճամբուն մէջը . ե՛րբ ինձի պիտի գաս .
իմ սրտիս անմեղու թիւնովը պիտի երթամ
իմ տանս մէջը :

3 Իմ աչքներուս առջին չար բան մը
չի պիտի դնեմ . մոլորածներուն գործքերը
պիտի ատեմ «չ ինձի չի մօտենայ :

4 Օ՛ուռ սիրտը թող զատվի ինձմէ .
չարը չի պիտի ճանչնամ :

5 Ան որ ծածուկ կըխօսի իր ընկերին
դէմ , պիտի ջնջեմ . ան որ աչքներով
բարձր է ու սրտով ամբարտաւան է , ա-
նոր չի պիտի համբերեմ :

6 Իմ աչքներս երկրի հաւատարիմնե-
րուն վրայ պիտի ըլլան , որ ինձի հետ բնա-
կին . անմեղ ճամբուն մէջ քալողը ինձի
ծառայութիւն պիտի ընէ :

7 Անգաւորը չի պիտի բնակի իմ տա-
նըս մէջը . սուտ խօսողը աչքներուս առջին
չի պիտի հաստատվի :

8 Ատրվանց կանուխ պիտի ջնջեմ երկ-
րին բոլոր ամբարիշտները , որ Տէրօջը քա-
ղաքէն բոլոր անօրէնութիւն գործողները
կորսընցունեմ :

ՍՇՂ ՄՌՍ ՆՐ :

11 շարժելն աղօթել՝ երբոր եր «երբը ինձորը՝
« եր գանգաբը Տերոջը աղօթելն ինձորը :

12 Վ Տեր , լսէ իմ աղօթքս . ու իմ աղա-
ղակս թող քեզի հասնի :

2 Վ ու երեսդ մի ծածկեր ինձմէ իմ նե-
ղութեանս օրը . խոնարհեցուր քու ականջդ
դէպի ինձի . որ օր կանչելու ըլլամ շուտով
պատասխան տուր :

3 Ինչու որ՝ իմ օրերս մութի պէս փը-
ճացան , ու իմ ոսկորներս շոր խուրձի պէս
էրեցան :

4 Սիրտս զարնըվեցաւ ու խոտի պէս
չորցաւ , անանկ որ իմ հացս ուտելու մոռ-
ցայ :

5 Հառաչանքիս ձայնէն ոսկորս մարմի-
նիս փակաւ :

6 Ընապատին մեջի հաւալուսին նմանե-
ցայ , աւերակներուն բուին պէս եղայ :

7 Ըթթուն մնացի , ու յարկին վրայի
մինակ ճնճղուկին պէս եղայ :

8 Ըմէն օր իմ թշնամիներս իս կընա-
խատեն , իմ վրաս բարկացողները ինձմով
երդում կընեն :

9 Ինչու որ մոխիրը հացի պէս կերայ ,
ու խմելիքս արցունքիս հետ խառնեցի ,

10 Վառ բարկութեանդ ու սրտմտութեանդ պատճառովը, ինչու որ իս վերցուցիր ու նետեցիր :

11 Իմ օրերս՝ երկնցած ստուերին պէս են, ու ես խոտի պէս չորցայ :

12 Իայց դուն Տէր՝ յաւիտեան կաս, ու քու յիշատակդ ազգէ մինչև ազգ :

13 Գուն պիտի ելլես — Սիօնին ողորմիս . ինչու որ՝ ժամանակ է անոր ողորմելու՝ ինչու որ՝ որոշված ժամանակը հասաւ :

14 Ասան զի քու ծառաներդ անոր քարերուն կը հաւնին . ու անոր հողին կը գըթան :

15 Աւ հեթանոսները պիտի վախնան Տէրոջը անունէն, ու երկրի բոլոր թագաւորները քու փառքէդ :

16 Ինչու որ՝ Տէրը պիտի շինէ Սիօնը՝ իր փառքովը պիտի երևայ :

17 Ստիկ պիտի ընէ տնանկներուն աղօթքը . ու անոնց աղօթքը չի պիտի անարդէ :

18 Ես պիտի գրվի նոր եկող ազգին համար . ու ստեղծվելու ժողովուրդը Տէրոջը գոհութիւն պիտի տայ :

19 Ասան զի իր սրբութեանը բարձրութենէն միտք դրաւ . Տէրը երկինքէն երկրին վրայ նայեցաւ ,

20 Ար կապվածին հառաչանքը լսէ, ու մահուան զաւկրները արձակէ ,

21 Որ Սիօնին մէջը Տէրոջը անուներ պատմեն , ու անոր գովութիւնը Երուսաղէմին մէջ ,

22 Երբոր ժողովուրդները մէկ տեղ կը ժողովուրդանան , ու թագաւորութիւնները՝ Տէրոջը ծառայելու համար :

23 Ըն իմ զօրութիւնս տկարացուց ճամբուն մէջը , ու իմ օրերս կարճացուց :

24 Ես ըսի . Ո՛վ իմ Լստուածս՝ իս մի վերցուներ իմ օրերուս կէսին մէջը . քու տարիներդ ազգէ մինչև ազգ են :

25 Ակիզբէն երկիրը հաստատեցիր . ու երկինքը քու ձեռններուդ գործքն է :

26 Ընոնք պիտի կորնչին բայց դուն պիտի կենաս . ու անոնց ամէնը լաթի պէս պիտի մաշին . հագուստի պէս պիտի փոխես անոնք , ու պիտի փոխվին :

27 Բայց դուն նոյն ես , ու քու տարիներդ չի պիտի վերջանան :

28 Քու ծառաներուդ զաւկները պիտի բնակին , ու անոնց զաւակը հաստատ պիտի մնայ քու առջիդ :

ԱՆՂ ՍՈՍ . ՆՂ . :

(Սաղմոս) Գաւլի :

Ո՛վ իմ անձս , օրէնէ Տէրը , ու ան ամէնքը որ իմ ներսիդիս է՝ անոր սուրբ անունը :

2 Ա՛վ իմ անձս , օրհնէ՛ Տէրը , ու մի՛ մոռնար անոր ամէն բարիքները .

3 Ար ան կըքաւէ քու բոլոր մեղքերդ .
— կըբժշկէ քու բոլոր ցաւերդ .

4 Ար ան կըբիրկէ քու կեանքդ ապակա-
նութենէն , ու կըստակէ քեզ շնորհքով ու
ողորմութիւնով .

5 Ար ան կըլեցունէ քու ծերութիւնդ
բարութիւնով , ու քու մանկութիւնդ ար-
ժիւին պէս կըճորոգվի :

6 Տէրը արդարութիւններ ու իրաւունք-
ներ կընէ բոլոր զրկւածներուն :

7 Ը՛ն իր ճամբաները Ս՛ովսէսին ճանչ-
ցուց , — իր գործքերը՝ Իսրայէլին զաւկը-
ներուն :

8 Իսրայէլութիւն ուղորմած է Տէրը . բար-
կութեան ծանր է ու ողորմութիւնով մեծ
է :

9 Ը՛ն իսպառ չի հակառակիր , ու յա-
ւիտեան ռիս չի պահեր :

10 Ը՛ն՝ մեր մեղքերուն չափ չըբաւ մե-
զի , ու մեր անօրէնութիւններուն չափ չի
հատուց մեզի :

11 Հապա որչափ որ երկինքը երկրիս
բարձր է , այնչափ իր ողորմութիւնը իրմէն
վախճողներուն վրայ զօրաւոր է :

12 Արչափ որ արեւելքը արեւմուտքէն
հեռու է , այնչափ հեռացուց մեզմէ մեր ա-
նօրէնութիւնները :

13 Ինչպէս որ մէկ հայր մը կը գթայ իր զաւկըններուն վրայ, անանկ ալ Տէրը կը գթայ իրմէն վախցողներուն վրայ :

14 Այսին զի ան գիտէ մեր կազմը վաճառքը, կը յիշէ որ մենք հող ենք :

15 Մարդուն օրերը խոտի պէս են. ինչպէս վայրի ծաղիկը, անանկ կը ծաղկի :

16 Այսին զի հովը անոր վրայէն կանցնի ու ան կը ոչնչանայ, ու ալ իր տեղը չի ձանձնար անիկա :

17 Իսկ Տէրոջը ողորմութիւնը յաւիտեանս յաւիտենից իրմէն վախցողներուն վրայ է, ու անոր արդարութիւնը զաւկըններէ զաւկըններու է .

18 Անոնց վրայ է որոնք կը պահեն անոր ուխտը, ու կը յիշեն անոր պատուիրանքները, որ անոնք կատարեն :

19 Տէրը իր աթոռը երկինքը հաստատեց, ու անոր թագաւորութիւնը ամենուն վրայ կը տիրէ :

20 Օրհնեցէք Տէրը՝ ո՛վ իր հրեշտակները՝ որ ուժով զօրաւոր էք, որ իր խօսքին ձայնը լսելով իր հրամանը կը կատարէք :

21 Օրհնեցէք Տէրը՝ ո՛վ իր բոլոր զօրքերը, իր կամքը կատարող պաշտօնեաները :

22 Օրհնեցէք Տէրը՝ ո՛վ իր տէրութեանը ամէն տեղերուն մէջի եղող բոլոր գործքերը, օրհնէ՛ք Տէրը՝ ո՛վ իմ անձս :

ՍԵՂ ՄՈՍ . ՆՊԻ :

(Րէնէ Տէրը՝ ո՛վ իմ անձս . ո՛վ Տէր՝ իմ
 Ըստոսածս , դուն շատ մեծ ես . գե-
 ղեցկու թիւն ու վայելչու թիւն հագած ես .

2 Երայր լաթի պէս կը հագնիս , երկին-
 քը վարագուրի պէս կը տարածես :

3 Ըն իր վերնատունները ջուրերուն
 վրայ կը շինէ . ամպերը իրեն կառք կընէ .
 հովին թևերուն վրայ կ'երթայ .

4 Իր հրեշտակները հոգիներ կընէ , ու
 իր պաշտօնեաները կրակի բոց :

5 Ըն հաստատեց երկինքը իր հիմերուն
 վրայ , որ յաւիտեանս յաւիտենից չի շար-
 ժի :

6 Ըն իկա անդունդով՝ լաթի պէս ծած-
 կեցիր . ջուրերը լեռներուն վրայ կայնե-
 ցան :

7 Բու սաստելէդ փախան . քու որոտ-
 մունքիդ ձայնէն արտորալով փախան :

8 Լեռները ելան , ու ձորերը իջան ան
 տեղը որ դուն հաստատեցիր անոնց համար :

9 Սահման դրիր , որ չանցնին . ու կըր-
 կին երկիրը չի ծածկեն :

10 Չորերուն մէջը ազբիւրներ կը խրկէ ,
 ու լեռներուն մէջէն կ'երթան :

11 Ընոնք բոլոր վայրի գաղաններուն
 կը խմցունեն . ու վայրի էշերը իրենց ծա-
 րաւու թիւնը կ'անցունեն :

12 Լնոնց քովը երկինքի թռչունները կը բնակին, ճիւղերուն մէջէն ձայն կուտան :

13 Լնիկա իր վերնատուններէն լեռները կը ջրէ . քու գործքերուդ պտուղէն երկիրը կը կշտանայ :

14 Լնիկա անասուններուն համար խոտ կը բուսցունէ, ու մարդուն ծառայութեանը համար՝ բոյս, որ հաց հանէ երկրէն,

15 Ու գինի ո՞ր կուրախացունէ մարդուն սիրտը, ու անոր երեսը կը փայլեցունէ քան թէ իւղը, ու հաց ո՞ր կը հաստատէ մարդուն սիրտը :

16 Տէրոջը ծառերը Վիբանանին մայրերը որ ինքը տնկեց՝ կուշտ են :

17 Ըն թռչունները բոյներնին կը շինեն, ու արագիլին բնակարանը եղևիններուն վրայ է :

18 Խարձր լեռները վայրի այծերուն համար ապաւէն են, ու վէմերը նապաստակներուն համար :

19 Եամանակներու համար լուսինը ստեղծեց, արեգակը իր մարը մտնելը կը ճանչնայ :

20 Խաւարը կը դնես ու գիշեր կը լլայ, որուն մէջը անտառին բոլոր գաղանները կը սողան :

21 Լոսիւծներուն լակոտները կը մռնչեն յափշտակութեան համար, ու Լստուծմէ իրենց կերակուրը կը խնդրեն :

22 Արեգակը ծագելուն պէս կը ժող-
վելին , ու իրենց ծակերուն մէջը կը պառ-
կին :

23 Սարդը մինչև իրիկուն իր գործքին
ու իր ծառայութեանը կերթայ :

24 Ո՛վ Տէր՝ ո՞րչափ շատ են քու գործ-
քերդ , անոնց բոլորը իմաստութիւնով ը-
րիր . երկիրը լցված է քու ստեղծածներու
վըդ :

25 Ա՛ս ծովը մեծ ու խիստ լայն է . հոն
անթիւ սողացողներ , պզտիկ ու մեծ կեն-
դանիներ կան :

26 Ա՛ն տեղ նաւերը կը քայլեն . ան քու
ստեղծած Վէհաթանդ անոր մէջը կը խա-
ղայ :

27 Ա՛սոնք բոլորը քեզի կը սպասեն , որ
իրենց կերակուրը ժամանակին տաս :

28 Դուն անոնց կուտաս , « անոնք կը
ժողովեն . ձեռքդ կը բանաս , « քարու-
թիւնով կը կշտանան :

29 Արծաձկես քու երեսդ « կը խոսովին .
կառնես անոնց հոգին « կը մեռնին , ու ի-
րենց հողը կը դառնան :

30 Հոգիդ կը խրկես « կը ստեղծվին , ու
երկրիս երեսը կը նորոգես :

31 Տէրոջը փառքը յաւիտեան ըլլայ ,
ու բախ ըլլայ Տէրը իր գործքերովը :

32 Երկրիս վտայ կը նայի , ու ան կը դո-
ղայ . լեռներուն կը դաչի , ու անոնք կը մը-
խան :

33 Տէրոջը պիտի երգեմ իմ կեանքիս մէջը . սաղմոս պիտի ըսեմ իմ Աստուծուս քանի որ ողջ եմ :

34 Անոր վրայով իմ մտածութիւնս անոր քաղցր պիտի ըլլայ , ուրախ պիտի ըլլամ Տէրոջմով :

35 Սեղաւորները աշխարհքէն պիտի պակսին , ու ամբարիշտները ոչնչանան . օրէնէ Տէրը՝ ո՛վ իմ անձս : Այլուիա :

ՄԱՂՍՈՍ . ՂԵ :

Ղոհացէ՛ք Տէրոջմէն՝ կանչեցէ՛ք անոր անունը . պատմեցէ՛ք անոր դործքերը հեթանոսներուն մէջը :

2 Երգեցէ՛ք անոր . սաղմոս ըսէ՛ք անոր . պատմեցէ՛ք անոր բոլոր հրաշքները :

3 Պարծենցէ՛ք անոր սուրբ անունովը , Տէրը խնդրողներուն սիրտերը թող ուրախ ըլլան :

4 Տէրը՝ ու անոր զօրութիւնը խնդրեցէ՛ք . ամէն ժամանակ անոր երեսը փնտրուեցէ՛ք :

5 Յիշեցէ՛ք անոր ըրած հրաշքները , անոր նշանները ու անոր բերնին իրաւունքները :

6 Ո՛վ անոր Արրահամ ծառային զաւակը , անոր ընտրոված Յակոբին զաւակըները :

7 Աս Տէրը մեր Աստուածն է . անոր իրաւունքները բոլոր երկրին մէջն են :

8 Իր ուխտը յաւիտեան՝ իբր պատուիրած խօսքը մինչև հազար ազգ կը յիշէ ,

9 Արահամին հետ ըրած ուխտը , ու Իսահակին ըրած իր երդումը ,

10 Աւ հաստատեց անիկա Հակոբին օրէնք ըլլալու համար . յաւիտենական ուխտ Իսրայէլին համար ,

11 Բսելով . Քնդի կուտամ Քանանին երկիրը , ձեր ժառանգութեան վիճակը ,

12 Երբոր անոնք քիչ էին թուով , նրւազ ու պանդուխտ անոր մէջը :

13 Աւ ազգէ ազգ գացին , թագաւորութենէ՝ ուրիշ ժողովուրդի մէջ .

14 Բնաւ մարդու թող չի տրւաւ անոնք նեղացունելու . ու թագաւորներ պատժեց անոնց համար .

15 Բեւել , թէ՛ Իմ օժեալներուս մի գպչիք . ու իմ մարգարէներուս գէշութիւն մի՛ ընէք :

16 Աւ սով կանչեց երկրին վրայ . հացին ամէն զօրութիւնը կտարեց :

17 Անոնց աւջին մարդ խրկեց . Յովսէփը՝ իբր ծառայութեան ծախվեցաւ :

18 Անոր ոտվըները կապանքով չարչարեցին . անոր անձը երկաթը զարնըվեցաւ .

19 Մինչև ան ժամանակը որ անոր խօսքը եկաւ . Տէրօջը խօսքը փորձեց անիկա :

20 Թագաւորը խրկեց ու արձրկեց անիկա . ժողովուրդներուն տիրապետը ազատեց անիկա :

21 Տէր ըրաւ անիկա իր տանը վրայ . ու իշխան իր բոլոր ունեցածին վրայ .

22 Որ անոր իշխանները իր ուզածին պէս կապէ , ու անոր ծերերը իմաստուն ընէ :

23 Ու Իսրայէլը Եգիպտոս եկաւ , ու Յակոբը պանդուխտ եղաւ Վամայ երկրին մէջ :

24 Ու ան իր ժողովուրդը շատ պտղաբեր ըրաւ . ու անոնք իրենց թշնամիներէն աւելի զօրաւոր ըրաւ :

25 Ընոնց սիրտերը փոխվեցան որ իր ժողովուրդը ատեն , ու իր ծառաներուն նենգութիւն ընեն :

26 Իր ծառան Սոխսը , ու իր ընտրած Ըհարօնը խրկեց :

27 Ընոնք անոնց մէջը իր նշանները ու Վամայ երկրին մէջը հրաշքներ ըրին :

28 Խաւար խրկեց ու խաւարեցուց ու անոր խօսքին դէմ չի կեցան :

29 Ընոնց ջուրերը արունի դարձուց . ու անոնց ձուկերը սպաննեց :

30 Ընոնց երկիրը գորտեր դուրս բերաւ լիութիւնով , թագաւորներուն ներսի սենեակներուն մէջը :

31 Ըսաւ ու շանաճանճը՝ և անիծները անոնց բոլոր սահմաններուն մէջը եկան :

32 Անձրևի տեղ կարկուտ տրւաւ անոնց , «- բոցեղէն կրակ անոնց երկրին մէջը :

33 Անոնց որթերը ու թուղի ծառերը զարկաւ , և անոնց սահմաններուն ծառերը կտորտեց :

34 Տաւ՝ ու եկաւ մարտիք և թրթուրը , ու ան առանց համբանքի :

35 Աւ անոնց երկրին մէջի բոլոր խոտը կերան . ու անոնց հողերուն պտուղը կերան :

36 Աւ անոնց երկրին մէջի բոլոր առջինեկները , «- անոնց բոլոր զօրութեանը առաջինը զարկաւ :

37 Աւ անոնք արծաթով ու ոսկիով հանեց . և անոնց ցեղերուն մէջ տկար մարդ չի կար :

38 Եգիպտոս ուրախացաւ անոնց դուրս ելլելուն . ինչու որ ասոնց ահը անոնց վրայ ինկած էր :

39 Օստիոցի համար ամպը՝ ու գիշերը լոյս տալու համար կրակը փռեց :

40 Խնդրեցին , ու լորերը եկան , ու երկինքի հացով կշտացուց անոնք :

41 Աւ էմը պատուեց ու ջուրերը վազեցին . գետի պէս քալեցին չոր տեղերուն մէջ :

42 Ինչու որ իր Աբրահամ ծառային եղած սուրբ խօսքը յիշեց :

43 Աւ իր ժողովուրդը ցնծութիւնով

հանեց, — իր ընտրածները ուրախութիւնով :

44 Աւ հեթանոսներուն երկիրները տրւաւ անոնց, և ժողովուրդներուն վաստակները ժառանգեցին անոնք :

45 Ար անոր պատուիրանքները պահեն, ու անոր օրէնքը կատարեն : Աւելուիա :

ԱՐԳ ՄՈՍ ԴՂՕ :

Աւելուիա . Տէրօջը շնորհակալութիւն ըրէք ինչու որ բարի է . ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

2 Ա՛յլ կը պատմէ Տէրօջը մեծ գործքերը .
 « Ա՛յլ կիմացունէ անոր ամէն գովութիւնը :

3 Երանի՛ իրաւունք պահողներուն, — ամէն ժամանակ արդարութիւն ընողներուն :

4 Յիշէ՛ ինծի՛ ո՛վ Տէր, քու ժողովուրդիդ հաճութեանը պէս, ինծի տես եկուր քու փրկութիւնովդ .

5 Ար քու ընտրվածներուդ աղէկութիւնը տեսնամ, քու ազգիդ ուրախութիւնովը ուրախանամ . քու ժառանգութիւնովդ պարծենամ :

6 Մեր հայրերուն հետ մեղանչեցինք . անօրէնութիւն ըրինք, ամբարշտութիւն գործեցինք :

7 Մեր հայրերը Եգիպտոսին մէջ չի

Հասկըցանքու հրաշքներդ . չի յիշեցինքու
ողորմութեանդ շատութիւնը , ու հակա-
ռակեցան ծովին քովը , կարմիր ծովին քո-
վը :

8 Բայց անոնք իր անունին համար
փրկեց , որ իր զօրութիւնը ցըցունէ :

9 Ու կարմիր ծովը սաստեց ու ցամքե-
ցաւ , ու անոնք անդունդներուն մէջը ա-
նապատին մէջին պէս քալել տրւաւ :

10 Ու անոնք փրկեց ատողին ձեռքէն ,
ու ազատեց անոնք թշնամիին ձեռքէն :

11 Ու ջուրերը անոնց թշնամիները
ծածկեցին , ու անոնցմէ մէկը չի մնաց :

12 Ու հաւատացին անոր խօսքին , և
անոր օրհնութիւն երգեցին :

13 Եւ տով մոռցան անոր գործքերը ,
ու անոր խրատին չսպասեցին :

14 Ու անապատին մէջը մեծ ցանկու-
թեան մէջ ինկան , ու Աստուած փորձեցին
անջուր տեղին մէջը :

15 Ու անոնց իրենց ուղածը տրւաւ ,
թէպէտ վատուժութիւն մը խրկեց անոնց
անձին վրայ :

16 Ու նախանձեցան բանակին մէջը
Մովսէսին վրայ , ու Տէրոջը սուրբին Ա-
հարօնին վրայ :

17 Երկիրը բացվեցաւ ու կրլկեց Վա-
ղանը , ու Արիօնին ժողովքը ծածկեց :

18 Կրակ բորբոքեցաւ անոնց ժողովքին
մէջը , բոցը էրեց ամբարիշտները :

19 Հորթ շինեցին Վորերին մէջ , ու
երկրպագութիւն ըրին թափցու պատկե-
րին :

20 Աւ իրենց փառքը՝ խոտ ուտող հոր-
թին պատկերին փոխեցին :

21 Մոռցան իրենց փրկիչ Մատուածը ,
որ մեծամեծ գործքեր ըրաւ Եգիպտոսին
մէջը :

22 Ա- հրաշքներ՝ Վամայ երկրին մէ-
ջը , «- ահաւոր բաներ՝ Կարմիր ծովին մէ-
ջը :

23 Աւ ըսաւ որ անոնք սատկեցունէ , թէ
որ անոր ընտրեալ Մովսէսը մէջ տեղը անոր
առջին կայնած չըլլար անոր բարկութիւնը
ես դարձունելու , որ չի սատկեցունէ :

24 Աւ ան ցանկալի երկիրը անարգե-
ցին , «- անոր խօսքին չի հաւատացին :

25 Աւ տրտնջեցին իրենց վրաններուն
մէջը , Տէրոջը ձայնը չի լսեցին :

26 Աւ իր ձեռքը անոնց վրայ վերցուց ,
որ անոնք անապատին մէջը ձգէ .

27 Աւ անոնց զաւակը ազգերու մէջ
ձգէ , ու երկիրներու մէջ անոնք ցրվէ :

28 Աւ անոնք Մահաղ փէորին հետ մի-
աւորեցան , ու մեռածներուն զոհերը կե-
րան :

29 Աւ բարկացուցին անիկա իրենց գործ-
քերովը , ու անոնց վրայ ժանտամահ հա-
սաւ :

30 Ետքը փէնէհէս ելաւ ու իրաւունք ըրաւ , և մահը դադարեցաւ :

31 Ու ասիկա անոր արդարութիւն սեպ-
վեցաւ ազգէ մինչև ազգ յաւիտեան :

32 Ու բարկացուցին անկէ Սէրիպա-
յին ջուրերուն վրայ , ու անոնց համար
Սոփսէսին գէշ եղաւ :

33 Ինչու որ կրտսերծցուցին անոր հո-
գին , ան ալ խենթութիւնով խօսեցաւ իր
պրոկունքներովը :

34 Չի սատկըցուցին ան ազգերը , որ
Տէրը ըսեր էր անոնց :

35 Հապա ան հեթանոսներուն հետ
խառնըվեցան , ու անոնց գործքերը սորվե-
ցան ,

36 Ու անոնց կուռքերուն ծառայեցին ,
ու անոնք իրենց որոգայթ եղան :

37 Ու իրենց մանչերը և աղջիկները
մատաղ ըրին գեներուն :

38 Ու անմեղ արիւն թափեցին՝ իրենց
մանչերուն ու աղջիկներուն արիւնը , որ
անոնք մատաղ ըրին Վանանին կուռքե-
րուն . ու գետինը պղծըվեցաւ արիւնով :

39 Ու իրենց գործքերովը պղծը-
վեցան , ու իրենց շարժմունքներովը պոռ-
կութիւն ըրին :

40 Ու Տէրոջը բարկութիւնը բորբոքեցաւ
իր ժողովուրդին վրայ , ու զգուեցաւ իր
ժառանգութենէն :

41 Աւանտնք հեթանոսներուն ձեռքը մատնեց, ու անտնք ատողները տիրեցին անտնց վրայ :

42 Աւանտնց թշնամիները նեղացուցին անտնք, ու անտնց ձեռքին տակը խոնարհեցան :

43 Եւ ատ անգամ փրկեց անտնք, բայց անտնք դառնացուցին անտնք իրենց խորհուրդներովը, ու փճացան իրենց անօրէնութիւններուն համար :

44 Սակայն ան նայեցաւ անտնց նեղութեանը, երբոր անտնց աղաղակը լսեց :

45 Աւ իր անտնց ըրած ուխտը յիշեց, ու իր մեծ ողորմութիւնովը ողորմեցաւ :

46 Աւ ըստ անտնք գերի ընողներուն առջին գթութիւն տրւաւ անտնց :

47 Փրկէ՛ մեզ ո՛վ Տէր՝ մեր Աստուածը, ու ժողովէ՛ մեզ հեթանոսներուն մէջէն, որ գոհանանքքու սուրբ անունէդ, ու քու օրհնութիւնովդ պարծենանք :

48 Օրհնեալ ըլլայ Տէրը Իսրայէլին Աստուածը յաւիտեանս յաւիտենից, ու ամէն ժողովուրդ թող ըսէ՛ Ամէն . Ալէլուիա :

ՍԵՂ ՄՈՍ . ՆԴ :

Գոհացէ՛ք Տէրոջմէն՝ ինչու որ՝ բարի է . ինչու որ իր ողորմութիւնը յաւիտեան է :

2 Թող սասնի ըսեն Տէրոջը փրկածները, որ թշնամիին ձեռքէն փրկեց անոնք:

3 Որ ժողովեց անոնք երկիրներէն. արևելքէն ու արևմուտքէն, հիւսիսէն և ծովէն:

4 Անոնք մոլորեցան անապատին մէջը անջուր ճամբուն մէջ, բնակելու քաղաք չի գտան:

5 Անօթի ու ծարաւ ըլլալով, հոգիներն իրենց մէջը կրմարէր:

6 Աւ Տէրոջը աղաղակեցին իրենց նեղութեան մէջը, «ան փրկեց անոնք իրենց տառապանքներէն:

7 Աւ անոնց ուղիղ ճամբուն մէջը առաջնորդեց, որ բնակելու քաղաքը երթան:

8 Թող գոհանան Տէրոջմէն անոր ողորմութեանը համար, ու մարդոց զակընթացութեամբ հրաշքներուն համար:

9 Ինչու որ՝ ան ծարաւը կարբեցունէ, ու անօթին բարութիւնով կրլեցունէ:

10 Անոնք խաւարին ու մահուան շուքին մէջը կրնատէին՝ տառապանքով ու երկաթով կապված էին:

11 Ինչու որ՝ Աստուծոյ խօսքերուն հակառակ կեցան, ու Քարձրեալին խորհուրդները անարգեցին:

12 Անոր համար ան աւ անոնց սիրտը նեղութիւնով ցածցուց. ինկան, ու օգնական մը չի կար:

13 Ու Տէրոջը աղաղակեցին իրենց նեղութեանը մէջ , — փրկեց անոնք իրենց տառապանքներէն :

14 Անոնք խաւարէն ու մահուան շուքէն հանեց , ու անոնց կապանքները կտարտեց :

15 Թող գոհանան Տէրոջմէն անոր ողորմութեանը համար , ու մարդոց զաւկրներուն ըրած հրաշքներուն համար .

16 Ինչու որ պղնձէ դռները փշրեց , ու երկրթէ նիգերը կտարտեց :

17 Յիմարները իրենց անօրէնութեան ճանապարհին համար ու իրենց անիրաւութեանը համար նեղութիւն կըքաշեն :

18 Անոնց անձերը ամէն կերակուրէն կըզգուին , ու մինչև մահուան դռներուն կըմտնան :

19 Ու Տէրոջը աղաղակեցին իրենց նեղութեանը մէջ , — փրկեց անոնք իրենց տառապանքներէն :

20 Իր խօսքը խրկեց ու բժշկեց անոնք , ու աղատեց անոնք իրենց աւերմունքներէն ,

21 Թող գոհանան Տէրոջմէն անոր ողորմութեանը համար , ու մարդոց զաւկրներուն ըրած հրաշքներուն համար .

22 Ու գոհութեան պատարագներ մատուցանեն , ու անոր գործքերը ցնծութիւնով պատմեն :

23 Կաւերով ծովը իջնողները , — մեծ ջուրերու մէջ գործ գործողները ,

24 Տէրոջը գործքերը ու անոր հրաշքները՝ անդունդներուն մէջը կրտսնան :

25 Այս ան զի ան կրսէ՝ ու մրրկալից հովը կը հանէ , կը բարձրացունէ անոր ալիքները :

26 Երկինքը կելլեն — անդունդը կիջնան , — անոնց անձերը նեղութենէն կը հալին :

27 Գինով մարդու պէս կը գողգղան ու կերերան , ու անոնց բոլոր իմաստութիւնը կը կործանի :

28 Ու Տէրոջը աղաղակեցին իրենց նեղութեանը մէջ , ու փրկեց անոնք իրենց տառապանքներէն :

29 Մըրիկը հանդարտութեան կը դարձունէ , ու անոր ալիքները կը դադարին :

30 Ու անոնք կուրախանան որ դադարեցան . ու կառաջնորդէ անոնց իրենց ուղած նաւահանգիստը :

31 Թող գոհանան Տէրոջմէն անոր ողորմութեանը համար , ու մարդոց զակներուն ըրած հրաշքներուն համար .

32 Ու թող բարձրացունեն անիկա ժողովուրդին ժողովքին մէջը , ու ձերերուն աթոռներուն մէջը գովեն անիկա :

33 Գետերը անապատի կը դարձունէ , ու ջուրերուն գնացքները չոր երկրի ,

34 Ու պտղաբեր երկիրը աղէ հողի , անոր մէջի բնակիչներուն չարութեանը համար :

35 Ընապատը ջուրերու լճի կը փոխէ , ու չոր երկիրը ջուրերու գնացքի :

36 Ու անօթիները հոն կը բնակեցունէ , որ բնակելու համար քաղաք հաստատեն :

37 Ու արտեր կը ցանեն , և այգիներ կը տնկեն , ու անոնք արմատիքի պտուղ կը բերեն :

38 Ու ան կօրնէ անոնք , և անոնք շատ կը բազմանան . ու անոնց անասունները չի պակսեցուներ :

39 Կրկին կը պակսին ու կը ցածնան բրոնութենէն , նեղութենէն ու տրամութենէն :

40 Ընարգանք կը թափէ իշխաններուն վրայ , ու անոնք ճամբայ չունեցող անապատին մէջը կը մոլորեցունէ :

41 Բայց աղքատը խեղճութենէն կը բարձրացունէ , ու անոք ցեղերը ոչխարներու հօտին պէս կընէ :

42 Ուղիղները պիտի տեսնեն և ուրախանան , ու ամէն անօրէնութիւն իր բերանը պիտի գոցէ :

43 Ո՛վ է իմաստուն , որ աս բանը պահէ . ու Տէրոջը ողորմութիւնները հասկընայ :

ՄԵՂՍՈՍ ԸՆՆՆԱԿ

ԳԼՈՒԽ ԸՆՆՆԱԿ ՍՊՈՒՆԱԿ

1 Իմ սիրտս պատրաստ է՝ ո՛վ Լ՛ստուած ,
պիտի երգեմ ու սաղմոս ըսեմ իմ սրբ-
տովս ալ :

2 Լ՛րթնցիր ո՛վ սաղմոսարան ու քնար ,
ես կանուխ պիտի արթննամ :

3 Շ՛նորհակալ պիտի ըլլամ քեզի՝ ո՛վ
Տէր , ժողովուրդներուն մէջը , ու սաղմոս
պիտի երգեմ քեզի աղգերուն մէջը :

4 Ա՛սն զի մեծ է քու ողորմութիւնդ
մինչև երկինքը , ու քու ճշմարտութիւնդ
մինչև ամպերը :

5 Երկինքին վրայ բարձրացի՛ր՝ ո՛վ Լ՛ս-
տուած , ու քու փառքդ ամէն երկրի վրայ
ըլլայ :

6 Ար քու սիրելիներդ փրկելին . աջ ձեռ-
քովդ ապրեցուր ու պատասխան տուր ինձի :

7 Լ՛ստուած խօսեցաւ իր սրբութիւնովը ,
Բէ Ես պիտի ցնծամ , Սիւքէմ շողա՛լ պի-
տի բաժնեմ ու Սուքօթին ձորը պիտի չա-
փեմ .

8 Իմն է Գաղայաթը ու իմն է Ս՛անա-
սէն . Եփրեմը գլխուս ուժն է . Յուդան
իմ օրէնք գնողս է .

9 Ս՛ովաբը իմ լուացվելու ամանս է .

Եղովմայ վրայ պիտի ձգեմ իմ մուճակս .
 Փղշտացիներուն վրայ ձայնով պիտի ցըն-
 ծամ :

10 Ո՛վ պիտի տանի իս պարսպաւոր քա-
 ղաքը . ո՛վ պիտի առաջնորդէ ինձի մինչև
 Եղով :

11 Չէ՞ որ դուն՝ ո՛վ Մատուած , որ
 ձգեցիր մեղ արէն իջ . ու մեր զօրքերուն
 հետը չեղար՝ ո՛վ Մատուած :

12 Եւեղուժեան մէջէն մեզի օգնութիւն
 տուր , վասն զի փուճ է մարդու փրկու-
 թիւնը :

13 Մատուծով քաջութիւն կրնենք , ու
 ան պիտի կոխէ մեր թշնամիները :

ԱՄՂԱՌԱՍ ՇԹԻ :

Գլխաւոր երգեցողին , Սաղմոս Գաւլէ :

Ո՛վ իմ օրհնութեանս Մատուածը , լուռ
 մի կենար :

2 Ինչու որ ամբարիշտին բերանը ու
 նենգաւորին բերանը բացվեցաւ իմ վրաս ,
 ինձի դէմ սուտ լեզուով խօսեցան :

3 Մտելութեան խօսքերով իս պատեցին
 ու ինձի հետ զուր տեղը կովեցան :

4 Իմ սիրոյս փոխարէն հակառակու-
 թիւն ըրին ինձի , բայց ես աղօթք ինձի :

5 Աւ բարիին տեղ չար հատուցին ին-
 ձի , ու իմ սիրոյս տեղ ատելութիւն :

6 Ընդհանուր մարդը վերակացու դիր ա-
նոր վրայ, ու Սատանան թող կայնի ա-
նոր աջ կողմը:

7 Երբոր դատվի՝ յանցաւոր պիտի ել-
լայ, ու անոր աղօթքը մեղք պիտի ըլլայ:

8 Ընոր օրերը պիտի պակսի, «- անոր
պաշտօնը ուրիշը պիտի առնէ:

9 Ընոր զաւկըները որք պիտի ըլլան,
ու անոր կնիկը որքեարի:

10 Աւ անոր զաւկըները աս գին ան գին
ժուռ պիտի գան՝ ու մուրան, և իրենց
աւերակներէն էլած՝ պիտի փնտռեն:

11 Փոխ տրուողը պիտի առնէ անոր բոլոր
ունեցածը, ու օտարները պիտի յափշտա-
կեն անոր վաստակը:

12 Ինչաւ մէկը գթութիւն չի պիտի ը-
նէ անոր, ու մէկը չի պիտի ողորմի անոր
որբերուն:

13 Ընոր զաւկըները սատկըվելու պիտի
տրվին. անոնց անունը գալու աղգին մէջ
պիտի ջնջուի:

14 Ընոր հարերուն անօրէնութիւնը
Տէրօջը առջին պիտի յիշվի, ու անոր մօրը
մեղքը չի պիտի ջնջուի:

15 Ընոնք ամէն ժամանակ Տէրօջը առ-
ջին պիտի ըլլան, ու անոնց յիշատակը
երկրէն պիտի վերցունէ:

16 Ինչու որ՝ ան ողորմութիւն ընելը
չի յիշեց, հապա՛ խեղճը ու աղքատը հա-
լածեց, որ սիրտը կտորածը սպաննէ:

17 Ընէծքը սիրեց՝ ու իր վրայ պիտի գայ , ու օրհնութիւնը չուզեց՝ ու ան անկէ հետու պիտի ըլլայ :

18 Ընէծքը լաթի պէս պիտի հագնի . ու ան ջուրի պէս անոր փորին մէջը պիտի մտնայ , ու ձէթի պէս անոր ոսկորներուն մէջը .

19 Հագնելու հանդերձի պէս , ու միշտ մէջքը կապելու գօտիի պէս պիտի ըլլայ անոր :

20 Ինծի՛ հակառակ կեցողներուն , ու իմ՛ անձիս համար չար խօսողներուն վարձքը աս պիտի ըլլայ Տէրոջմէն :

21 Իայց դուն՝ ո՛վ Տէր՝ Տէր , օգնէ՛ ինծի քու անունիդ համար . փրկէ՛ իս՛ քու ողորմութիւնդ բարի ըլլալուն համար :

22 Ինչու որ՝ ես խեղճ ու աղքատ եմ . ու իմ՛ սիրտս ներսիդիս խոցված է :

23 Ես երկնցող ստուերին պէս անցայ . մարախի պէս թօթվեցայ :

24 Դուն կերս ծովէն գողացին , ու մարմինս պարարտութենէն մաշեցաւ :

25 Աւ նախատինք եղայ անոնց . իս որ կրտսնան , գլուխնին կը շարժեն :

26 Դունէ՛ ինծի ո՛վ Տէր՝ իմ՛ Վստուածս . փրկէ՛ իս քու ողորմութեանդ նախելով :

27 Աւ գիտնան թէ քու ձեռքդ աս է , որ դուն բրիր ասիկա՝ ո՛վ Տէր :

28 Անոնք թող անիծեն՝ բայց դուն օրհնէ . անոնք ինչի՞ դէ՞յ ելլալնուն թող ամբընան , բայց քու ծառայ ուրախ թող ըլլայ :

29 Ամօթ թող հագնին իմ թշնամիներս , ու իրենց ամօթը վերարկուի պէս վրանին թող առնեն :

30 Հատ պիտի գոհանամ Տէրօջմէն իմ բերնովս , ու շատերուն մէջը պիտի օրհնեմ անիկա :

31 Ինչու որ՝ ինքը աղքատին աջ կողմը կրկայնի , որ անոր անձը դատապարտողներէն փրկէ :

ՍՇՂ ՍՊԱ ԸՎ :

Սաղմս Դաւիթ :

Տէրը իմ Տէրօջս ըսաւ . ‘Աստէ՛ իմ աջ կողմս , մինչև քու թշնամիներդ ոտվըններուդ կոխելիք ընեմ :

2 Տէրը քու զօրութեանդ գաւազանը Սիօնէն պիտի խրկէ . քու թշնամիներուդ մէջը տիրէ :

3 Դողովուրդդ քու զօրութեանդ օրը յօժարակամ պիտի ըլլայ սուրբ զարդարանքով . քու երիտասարդներդ արշալուսին արգանդի շաղէն էվել պիտի ըլլան քեզի :

4 Տէրը երգում ըրաւ ու չի պիտի զըզջայ . Դուն յաւիտեան Սելֆիսեդեկի կարգին պէս քահանայ ես :

5 Տէրը քու աջ կողմդ է . ան իր բարկութեան օրը թագաւորները պիտի ճզմէ :

6 Ան հեթանոսներուն մէջը դատաստան պիտի ընէ . մեռելներով պիտի լեցունէ , շատ երկիրներու վրայ գլուխ եղողները պիտի ճզմէ :

7 Ղամբուն մէջց գետէն պիտի խմէ , անոր համար գլուխ պիտի վերցունէ :

ԱՆՂ ՄՈՍ . ՂԺԸ :

1 Լէլուիա . Բոլոր սրտով Տէրոջմէն պիտի գոհանամ ուղիղներուն ժողովքին ու ժողովուրդին մէջը :

2 Տէրոջը գործքերը մեծ են . անոնք սիրողներուն բոլորէն կրփնտովին :

3 Անոր գործքը փառք ու վայելչութիւն է , և անոր արդարութիւնը յաւիտեան կրմնայ :

4 Յիշատակ ըրաւ իր հրաշքներուն համար . Տէրը ողորմած ու գթած է :

5 Կերակուր տըւաւ իրմէն վախցողներուն , իր ուխտը յաւիտեան կը յիշէ :

6 Իր գործքերուն զօրութիւնը ցուցուց իր ժողովուրդին , որ ազգերուն ժառանգութիւնը տայ անոնց :

7 Անոր ձեռվըներուն գործքերը ճշմարտութիւն ու իրաւունք են , անոր բոլոր պատուիրանքները հաւատարիմ են :

8 Հաւիտեանս յաւիտենից հաստատված են . ճշմարտութիւնով և ուղղութիւնով շինված են :

9 Փրկութիւն խրկեց իր ժողովուրդին . իր ուխտը յաւիտեան պատուիրեց , սուրբ աստուծոյ է անոր անունը :

10 Իմաստութեան սկիզբը Տէրօջը վախն է . բարի խոհեմութիւն՝ առ ամէնուն , որ անոնք կրնեն . անոր օրհնութիւնը յաւիտեան կը մնայ :

ՍԱՂՍՈՍ ԾՃԻԿ :

1 Լէւուիա . Երանի՛ է մարդուն , « Ե Տէրօջմէն կը վախնայ . » անոր պատուիրանքներուն շատ հաճութիւն ունի :

2 Անոր զաւակը զօրաւոր պիտի ըլլայ երկրին մէջը . ուղիղներուն ցեղը պիտի օրհնելի :

3 Ստացուածք ու հարստութիւն պիտի ըլլայ անոր տանը մէջը , ու անոր արդարութիւնը յաւիտեան պիտի մնայ :

4 Իրաւարին մէջը լոյս կը ծագէ ուղիղներուն . ողորմած՝ ու գթած՝ ու արդար է :

5 Ինչպէ՛ս մարդը կողորմի՛ ու փոխ կուտայ . իր բաները իրաւունքով կը կատարէ :

6 Սասն զի՛ ան յաւիտեան տեղէն չի շարժիր . արդարին յիշատակը յաւիտեան կըմնայ :

7 Գէշ լուրէն չի վախնար . անոր սիրտը հաստատ է , — Տէրոջը կը յուսայ :

8 Անոր սիրտը հաստատված է՝ չի վախնար , մինչև որ իր թշնամիներուն վրայ էր «—դ»-ը տեսնայ :

9 Կըտարածէ , աղքատներուն կուտայ . անոր արդարութիւնը յաւիտեան կըմնայ , անոր եղջիւրը փառքով կը բարձրանայ :

10 Ամբարիշտը պիտի տեսնէ ու բարկանայ , իր ակռաները պիտի կճրտացունէ ու հալի . ամբարիշտներուն ցանկութիւնը պիտի կորնչի :

ԱՆՎ ՄՈՍ . ՆՃԳԻ :

Մէլուիա . Օրհնեցէք ո՛վ Տէրոջը ծառաները՝ օրհնեցէք Տէրոջը անունը :

2 Տէրոջը անունը ասկէ ետև մինչև յաւիտեան օրհնեալ ըլլայ :

3 Արևելքէն մինչև արևմուտքը օրհնեալ ըլլայ Տէրոջը անունը :

4 Տէրը բարձր է բոլոր ազգերուն վրայ , անոր փառքը երկինքին վրայ է :

5 Սեր Աստուծուն պէս Տէր ո՛վ կայ վերերը բնակած ,

6 Ար կըխոնարհի երկինքի ու երկրի մէջի եղածը տեսնալու ,

7 Որ աղքատը փոշիէն վեր կը վերցունէ ,
 «- խեղճը աղբանոցէն կը բարձրացունէ ,

8 Որ անիկա իշխաններուն հետ իր ժողովուրդին իշխաններուն հետ նստեցունէ .

9 Որ ամուլ կնիկը տունը կը բնակեցունէ , ու զաւկըներու ուրախ մայր էնէ ,
 Լէլուիա :

ՍԵՂ ՄՈՍ ՆՃԻԳ :

Երբոր Իսրայէլը դուրս ելաւ Եգիպտոսէն , «- Հակօրին տունը օտար լեզուով ժողովուրդին մէջէն ,

2 Հուդան անոր սրբութիւն՝ ու Իսրայէլը անոր իշխանութիւնն եղաւ :

3 Կօյլը տեսաւ ու փախաւ . Հորդանանը ետ դարձաւ :

4 Լեռները խոյերուն պէս ցաթկուտեցին , «- բլուրները գառերուն պէս :

5 Ինչ եղաւ քեզի ո՛վ ծով՝ որ փախար , ու դուն Հորդանան՝ որ ետ դարձար :

6 Դուք՝ ո՛վ լեռներ , Ինչ խոյերուն պէս ցաթկուտեցիք . «- բլուրներ՝ գառերու պէս :

7 Սարսրիէ՛ ո՛վ երկիր Տէրօջը երեսէն . Հակօրին Լստուծուն երեսէն :

8 Որ վեճը ջուրերու լիճ դարձուց . ու գայլախաղ ջուրերու աղբիւր :

ՍՆՂ ՄՈՍ · ՆՃԵ :

1) Եթէ մեղի ուլ Տէր՝ չէ թէ մեղի , հա-
պա քու անունիդ փառք տուր քու ո-
ղորմութեանդ «- ճշմարտութեանդ հա-
մար :

2) Ինչո՞ւ համար հեթանոսները ըսնն ,
թէ՛ Ո՞ւր է հիմայ անոնց Մտուածը :

3) Իայց մեր Մտուածը երկինքն է , ան՝
բոլոր ինչ որ ուզեց ըրաւ :

4) Ընոնց կուռքերը արծաթ ու ոսկի են ,
մարդու ձեռքի գործքեր են :

5) Իերան ունին բայց չեն խօսիր . աչք
ունին բայց չեն տեսներ .

6) Ըկանջ ունին բայց չեն լսեր . քիթ
ունին բայց հոտ չեն առներ .

7) Չեռք ունին բայց Էան չեն բռներ .
ոտք ունին բայց չեն քայլեր . «- իրենց կո-
կորդուլը ձայն չեն հաներ :

8) Ընոնք շինողները անոնց նման պիտի
ըլլան , «- բոլոր անոնց յուսացողները :

9) Ո՞վ Իսրայէլ՝ Տէրոջը յուսա՛ , ան է
անոնց օգնութիւնը ու վահանը :

10) Ո՞վ Ըհարօնի տունը՝ Տէրոջը յու-
սացէ՛ք . ան է անոնց օգնութիւնը ու վա-
հանը :

11) Ո՞վ Տէրոջմէն վախցողներ՝ Տէրոջը
յուսացէ՛ք . ան է անոնց օգնութիւնը ու
վահանը :

12 Տէրը մեզ պիտի յիշէ ու օրհնէ՝ Իսրայէլին տունը պիտի օրհնէ, Մշարօնին տունը պիտի օրհնէ:

13 Տէրօջմէն վախցողները պիտի օրհնէ, պղտիկները մեծերուն հետ:

14 Տէրը պիտի շատցունէ ձեզ, ձեզ ու ձեր զաւկրները:

15 Օրհնեալ ըլլաք դուք Տէրօջմէն, որ երկինքը ու երկիրը ստեղծեց:

16 Երկինքին երկինքը Տէրօջն է, բայց երկիրը մարդոց զաւկրներուն տրւաւ:

17 Մեռելները Տէրը շնն օրհներ, ու ոչ ան ամէնքը, որ գերեզմանը կիջնան:

18 Իայց մենք Տէրը պիտի օրհներք ասկէ ետեւ մինչև յաւիտեան. Վշխուիա:

ՍՇՂ ՄՈՍ ԾՃԻՑ:

Ուրախ եմ ես, ինչու որ Տէրը իմ ձայնս ու իմ աղաչանքս լսեց:

2 Ինչու որ ան իր ականջը ինձի խոնարհեցուց, ու իմ օրերուս մէջ անող պիտի կանչեմ:

3 Մ'ահուան ցաւերը իս պատեցին, ու գերեզմանին վիշտերը իս գտան. նեղութիւն ու տրտմութիւն գտայ:

4 Իայց ես Տէրօջը անունը կանչեցի, կաղաչեմ՝ ո՛վ Տէր, փրկէ իմ անձս:

5 Ազորմած ու արդար է Տէրը, ու մեր Մտուածը գթած է:

6 Տէրը միամիտները կըպահէ . ես խեղճ եղայ , ու ան իս ապրեցուց :

7 Ո՛վ իմ անձս՝ դարձիր քու հանգրստու թեանդ , ինչու որ՝ Տէրը բարի ըրաւ քեզի :

8 Ասան զի դուն իմ անձս մահէն ապրեցուցիր , իմ աչքս արցունքէն , ու իմ ոտիմներս իյնալէն :

9 Ժուռ պիտի դամ Տէրոջը առջին , կենդանիներուն մէջը :

10 Հաւատացի ան որ խօսեցայ , ես շատ չարչարվեցայ :

11 Իմ շիտթութեանս մէջ ըսի , թէ՛ Մէն մարդ սուտ է :

12 Ի՞նչ պիտի հատուցանեմ Տէրոջը անոր բոլոր ինծի ըսած բարութեանը փոխարէն :

13 Փրկութեան բաժակը պիտի առնեմ , ու Տէրոջը անունը պիտի կանչեմ :

14 Իմ ուխտերս Տէրոջը պիտի վճարեմ , իր բոլոր ժողովուրդին առջին :

15 Պատուական է Տէրոջը առջին իր սուրբերուն մահը :

16 Կաղաչեմ՝ ո՛վ Տէր , ինչու որ ես քու ծառայեմ , ես քու ծառայեմ , ու քու աղախինիդ զաւակն եմ . դուն իմ կապերս արձակեցիր :

17 Գոհութեան պատարագ պիտի մատուցանեմ քեզի , ու Տէրոջը անունը պիտի կանչեմ :

18 Իմ ուխտերս Տէրոջը պիտի վճարեմ՝ իր բոլոր ժողովուրդին առջին ,

19 Տէրոջը տանը սրահներուն մէջը , քու մէջդ՝ ո՛վ Երուսաղէմ : Աւելուիա :

ՍԵՂ ՍՌՍ ԸՃԻՐ :

Պովեցէք Տէրը ո՛վ բոլոր ազգեր , օրհնեցէք անիկա ո՛վ բոլոր ժողովուրդներ :

2 Ա՛սան զի՛ անոր ողորմութիւնը մեր վրայ մեծ է , ու Տէրոջը ճշմարտութիւնը յաւիտեան է : Աւելուիա :

ՍԵՂ ՍՌՍ ԸՃԻՐ :

Պահագէք Տէրոջմէն , ինչու որ՝ բարի է . ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

2 Հիմայ թող Իսրայէլը ըսէ , թէ՛ Անոր ողորմութիւնը յաւիտեան է :

3 Հիմայ թող Ահարօնին տունը ըսէ , թէ՛ Անոր ողորմութիւնը յաւիտեան է :

4 Հիմայ թող Տէրոջմէն վախցողները ըսեն , թէ՛ Անոր ողորմութիւնը յաւիտեան է :

5 Աեղութեան մէջ Տէրոջը կանչեցի՛ր՝ Տէրը պատասխան տրւաւ ինձի , լայնարձակ տեղ մը հանելով :

6 Տէրը ինձի հետ է, չեմ վախնար .
մարդը ինձի ինչ կրնայ ընել :

7 Տէրը ինձի օգնողներուն հետ Բէլ Կեղ
ինձի հետ է, ու ես իմ թշնամիներուն
վրայ «-դժ» պիտի տեսնամ :

8 Եւ է Տէրօջը յուսալ՝ քան թէ մար-
դոց ապաւինիլ :

9 Եւ է Տէրօջը յուսալ՝ քան թէ իշ-
խաններուն ապաւինիլ :

10 Եւ չորս կողմն պատեցին ,
բայց Տէրօջը անունովը պիտի ջարդեմ ա-
նոնք :

11 Եւ չորս կողմն պատեցին , իրաւցու-
նէ իս պաշարեցին . բայց Տէրօջը անունովը
պիտի ջարդեմ անոնք :

12 Մեղուներու պէս իմ չորս կողմն
պատեցին , փուշերուն կրակին պէս մարե-
ցան . բայց Տէրօջը անունովը պիտի ջար-
դեմ անոնք :

13 Գուն իս հրեցիր , որ վար իյնամ .
բայց Տէրը օգնեց ինձի :

14 Տէրը իմ զօրութիւնս ու սաղմոսս է .
ու իմ փրկութիւնս եղաւ :

15 Երգարներուն բնակարաններուն
մէջը ցնծութեան ու փրկութեան ձայն
կայ . Տէրօջը աջ ձեռքը զօրութիւն կը
գործէ :

16 Տէրօջը աջ ձեռքը բարձր է . Տէրօ-
ջը աջ ձեռքը զօրութիւն կը գործէ :

17 Չի պիտի մեռնիմ , հապա պիտի ապրիմ ու Տէրոջը գործքերը պատմեմ :

18 Տէրը իս շատ խրատեց , բայց մահուան չի մատնեց իս :

19 Արդարութեան դռները բացէ՛ք ինձի . անոնց մէջը պիտի մտնամ , ու Տէրոջմէն գոհանամ :

20 Աս է Տէրոջը դուռը , արդարները ասկէ պիտի մտնան :

21 Արգոհանամ քենէ որ ինձի պատասխան տրւիր , ու իմ փրկութիւնս եղար :

22 Ան քարը՝ որ շինողները անարգեցին , անկիւնին գլուխը եղաւ :

23 Ասիկա Տէրոջմէն եղաւ . զարմանալի է ասիկա մեր աչիւններուն :

24 Աս ան օրն է , որ Տէրը ստեղծեց . ցնծանք և ուրախ ըլլանք անոր մէջը :

25 Հիմայ կաղաչեմ ո՛վ Տէր՝ փրկէ , հիմայ կաղաչեմ ո՛վ Տէր՝ յաջողէ :

26 Օրհնեալ ըլլայ ան որ Տէրոջը անունովը կուգայ . օրհնեցինք ձեզ Տէրոջը տունէն :

27 Տէրը Աստուած է ու լոյս կրցուցունէ մեզի , մատաղները չուաններով սեղանին եղջուրներուն կապեցէք :

28 Գունես իմ Աստուածս , ու պիտի գոհանամ քենէ . ո՛վ իմ Աստուածս , քեզ պիտի բարձրացունեմ :

29 Գոհացէք Տէրոջմէն՝ ինչու որ բարի

է, ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

ՄԱՂՄՈՍ · ՆՃԻԹ :

× ԸԼԷՔ :

1 Երանի՛ ճամբով անմեղներուն, «- Տէրոջը օրէնքին մէջը քալողներուն :

2 Երանի՛ անոր վկայութիւնները պահողներուն, «- բոլոր սրտով անիկա խնդրողներուն :

3 Աւանօրէնութիւն չընողներուն, «- անոր ճամբաներուն մէջը քալողներուն :

4 Դուն պատուիրեցիր, որ շատ զգուշութեամբ քու պատուիրանքներդ պահենք :

5 Երանի՛ թէ իմ ճամբաներս յաջողվէին, քու օրէնքներդ պահելու համար :

6 Ընտաննը չի պիտի ամչնամ, երբոր քու բոլոր պատուիրանքներդ մտիկ ընեմ :

7 Պիտի գոհանամ քենէ ուղիղ սրտով, երբոր քու արդար իրաւունքներդ սորվիմ :

8 Վու օրէնքներդ պիտի պահեմ, իսբոլորովին մի թողուր :

՝ ՊԷԸ :

9 Երիտասարդը ինչո՞վ մաքրէ իր ճամբան . քու խօսքիդ պէս զգուշութիւն ընելով :

10 Ի՞մ բոլոր սրտովս խնդրեցի քեզ , թող մի տար որ քու պատուիրանքներէդ մոլորիմ :

11 Ի՞մ սրտիս մէջը պահեցի քու խօսքերդ , որ չի մեղանչեմ քեզի դէմ :

12 () Բնեալ ես դուն ո՞վ Տէր , սորվեցուր ինձի քու օրէնքներդ :

13 Ի՞մ շրթունքներովս պատմեցի քու բերնիդ բոլոր իրաւունքները :

14 Վու վկայութիւններուդ ճամբովը ուրախացայ որպէս թէ ամէն կերպ հարստութիւնով :

15 Վու պատուիրանքներուդ վրայ պիտի մտմտամ , ու քու ճամբաններուդ պիտի նայիմ :

16 Վու օրէնքներովդ պիտի ուրախանամ , ու քու խօսքդ չի պիտի մոռնամ :

՝ ԿԷԸ :

17 Լարի ըրէ քու ծառայիդ , «Կ ապրիմ ու քու խօսքդ պահեմ» :

18 Լացիմ աչվըներս , որ քու օրէնքներէդ հրաշքներ տեսնամ :

19 Պանդուխտ եմ ես երկրի վրայ, մի՛ ծածկեր ինձմէքու պատուիրանքներդ :

20 Իմ անձս կրճղմըվի ամէն ժամանակ քու իրաւունքներուդ ցանկանալով :

21 Գուն սաստեցիր անիծած ամբարտաւանները, քու պատուիրանքներէդ մոլորողները :

22 Ասխատինքը ու անարգանքը ետ դարձուր ինձմէ, ինչու որ քու վկայութիւններդ պահեցի :

23 Իշխաններ ալ կրնստէին ու ինձի դէմ կրխօսէին. Բայց քու ծառայ՝ քու պատուիրանքներուդ վրայ կրմտմտար :

24 Վ՛ու վկայութիւններդ ալ իմ ուրախութիւնս, ու ինձի խորհուրդ տրւողներն են :

Դ Տ՝ԷԷ :

25 Իմ անձս հողին կրփակչի. ապրեցուր իս քու խօսքիդ պէս :

26 Իմ ճամբաներս պատմեցի, ու դուն ինձի պատասխան տրւիր. սորվեցուր ինձի քու օրէնքներդ :

27 Վ՛ու պատուիրանքներուդ ճամբան ինձի իմացուր, ու քու սքանչելիքներուդ վրայ պիտի մտմտամ :

28 Իմ անձս տրտմութիւնով կը հալի, քու խօսքիդ պէս հաստատէ իս :

29 Ստուծեան ճամբան հեռացուր ինծ-
մէ , ու քու օրէնքդ շնորհէ ինծի :

30 Նշմարտուծեան ճամբան ընտրե-
ցի , ու քու իրաւունքներդ ի՞նչպէս դրի :

31 Վու վկայութիւններուդ փակայ ,
ո՛վ Տէր , իս մի՛ ամչցուներ :

32 Վու պատուիրանքներուդ ճամբէն
պիտի վազեմ . ինչու որ դուն իմ սիրտս
լանցուցիր :

Ի շէ :

33 Ո՛վ Տէր , ցուցուր ինծի քու օրէնք-
ներուդ ճամբան . ու մինչև վերջը պիտի
պահեմ անիկա :

34 Իմաստուն ըրէ իս , որ քու օրէնքդ
պահեմ . ու բոլոր սրտով անոր միտք դը-
նեմ :

35 Լուսաջնորդէ ինծի քու պատուի-
րանքներուդ շաւիղին մէջ . ինչու որ անոր
հաւնեցայ :

36 Իմ սիրտս դէպի քու վկայութիւննե-
րուդ խոնարհեցուր , ու չէ՛ թէ ազահու-
ծեան :

37 Ետ դարձուր իմ աչքներս , որ սնո-
տի բան չի տեսնան . ու իս քու ճամբուդ
մէջը ապրեցուր :

38 Հաստատէ քու խօսքդ քենէ վախցող
ծառայիդ վրայ :

39 Ետ դարձուր ինծմէ իմ նախատինքս ,
ուսկից որ կը վախնամ . ինչու որ քու իրա-
ւունքներիդ բարի են :

40 Ահա ցանկացայ քու պատու իրանքնե-
րուդ , քու արդարութեանդ մէջը իս ապրե-
ցուր :

7 Ա . Ե . Լ :

41 Ա՛վ Տէր , քու ողորմութիւնդ թող
դայ իմ վրաս . — քու փրկութիւնդ՝ քու
խօսքիդ պէս :

42 Աւ ես խօսքով պատասխան պիտի
տամ անոնց , որ իս կը նախատեն . ինչու որ
քու խօսքիդ յուսացած եմ :

43 Աւ ճշմարտութեան խօսքը բնաւ մի՛
հեռացուներ իմ բերնէս , ինչու որ քու
իրաւունքներուդ յուսացած եմ :

44 Աւ քու օրէնքդ միշտ պիտի պահեմ
յաւիտեանս յաւիտենից :

45 Աւ լայնարձակ պիտի քալեմ , ինչու
որ քու պատու իրանքներիդ խնդրեցի :

46 Աւ քու վկայութիւններիդ թագա-
ւորներուն առջին պիտի խօսիմ , ու չի պիտի
ամէնամ :

47 Աւ ես պիտի ուրախանամ քու պա-
տու իրանքներովդ , որ կը սիրեմ անոնք :

48 Աւ ձեռվրներս դէպի քու պատու ի-
րանքներուդ վերցունեմ , որ կը սիրեմ ա-

նոնք • ու քու օրէնքներուդ վրայ մտմը-
տամ :

Ի Օգոստոս :

49 Հիշէ քու ծառայիդ վրայ եղած խօս-
քը , որ անոր յուսալ տըւիր իս :

50 Իմ նեղութեանս մէջը մխիթարու-
թիւնս աս է , ինչու որ քու խօսքդ իս ապ-
րեցուց :

51 Ըմբարտաւանները շատ ծաղր քրին
իս • Բայց ես քու օրէնքէդ շի հեռացայ :

52 Ո՛վ Տէր , միշտ քու իրաւունքներդ
յիշեցի , ու մխիթարվեցայ :

53 Տաքութիւնը իս բռնեց ան ամբա-
րիշտներուն համար , որ քու օրէնքդ կը
թողուն :

54 Վ՛ու օրէնքներդ ինծի երգեր եղան
իմ պանդխտութեան տանս մէջ :

55 Ո՛վ Տէր , գիշերը քու անունդ յի-
շեցի , ու քու օրէնքդ պահեցի :

56 Ըս եղաւ ինծի , ինչու որ քու պա-
տուիրանքներդ կը պահեմ :

Ի Խեղ :

57 Կտուն իմ բաժինս ես՝ ո՛վ Տէր ,
ըսի թէ՛ քու խօսքերդ պահեմ :

58 Ըղաչեցի քու երեսիդ բոլոր սրտով ,
ողորմէ ինծի քու խօսքիդ պէս :

59 Իմ ճամբաներուս վրայ մտնողացի ,
ու իմ ոտվըներս քու վկայութիւններուդ
դարձուցի :

60 Վու պատուիրանքներդ պահելու
փութացի ու շուշացայ :

61 Մարտիշտներուն խումբերը իս պա-
տեցին , Բայց ես քու օրէնքդ չի մոռցայ :

62 Կէս գիշերուն կելլամ , որ գոհա-
նամ քենէ քու արդար իրաւունքներուդ
համար :

63 Ես ընկեր եմ ան ամէնուն հետ՝ որ
կրվախնան քենէ , ու քու պատուիրանք-
ներդ կրպահեն :

64 Ո՛վ Տէր , երկիրը լեցուն է քու ու
դորմութիւնովդ , քու օրէնքներդ սորվե-
ցուր ինծի :

Ե ԳԷԷ :

65 Բարի ըրիր քու ծառայիդ՝ ո՛վ Տէր ,
քու խօսքիդ պէս :

66 Բարի իմաստութիւն ու գիտութիւն
սորվեցուր ինծի , ինչու որ՝ քու պատուի-
րանքներուդ հաւատացի :

67 Գեռ որ ես վշտացած չէի , սխալե-
ցայ : բայց հիմայ քու խօսքդ կրպահեմ :

68 Բարի ես դուն , ու բարի ընող .
սորվեցուր ինծի քու օրէնքներդ :

69 Մարտիաւանները սուտ նարեցին

ինծի դէմ ; Բայց ես ընդդէմ սրտով քու պատուիրանքներդ պահեցի :

70 Անոնց սիրտը եղի պէս պարարտացաւ . բայց ես քու օրէնքովդ ուրախացայ :

71 Աղէկ եղաւ ինծի՝ որ վշտացայ , որ քու օրէնքներդ սորվիմ :

72 Քու մերնիդ օրէնքը՝ ինծի հաղարաւոր սկիհէն ու արծաթէն առաւել աղէկ է :

ԵՍՈՒ :

73 Իս քու ձեռվրներդ ստեղծեցին ու շինեցին . իմաստուն ըրէ իս , որ քու պատուիրանքներդ սորվիմ :

74 Քենէ վախցողները իս պիտի տեսնեն և ուրախանան . ինչու որ քու խօսքիդ յուսացայ :

75 Վիտեմ՝ ո՛վ Տէր , որ քու դատատաններդ արդարութիւնով են . ու իրաւունքով իս վշտացուցիր :

76 Հիմայ թող քու ողորմութիւնդ ինծի մխիթարութիւն ըլլայ՝ քու ծառայիդ Կառնի խօսքիդ պէս :

77 Թող քու գթութիւններդ իմ վրաս գան որ ապրիմ . ինչու որ՝ քու օրէնքդ իմ ուրախութիւնս է :

78 Ամբարտաւանները պիտի ամչնան , ինչու որ՝ առանց պատճառի անիրաւու-

Թիւն գործեցին ինծի դէմ . Բայց ես քու պատուիրանքներուդ վրայ կրմամբ տամ :

79 Թող ինծի դառնան քննէ վախցողները , ու վկայու թիւններդ ճանչցողները :

80 Թող իմ սիրտս կատարեալ ըլլայ քու օրէնքներուդ մէջը , որ չամչնամ :

☩ Վ.Պ.Փ :

81 Իմ անձս քու փրկու թեանդ համար կրմաշի , քու խօսքիդ համար՝ որուն կըսպասեմ :

82 Իմ աչվրներս քու խօսքիդ համար կաւրըվին , ըսելով թէ՛ Ե՛րբ պիտի մտի թարես իս :

83 Ինչու որ՝ ես ծուխի մէջ պղծած արկի պէս եղայ . Բայց քու օրէնքներդ չի մոռցայ :

84 Վ.անի՞ են քու ծառայիդ օրերը . իս հալածողներուն դատաստանը ե՛րբ պիտի ընես :

85 Վ.մարտաւանները հորեր փորեցին ինծի համար , որ քու օրէնքիդ պէս չեն :

86 Վ.ու բոլոր պատուիրանքներդ ճշմարիտ են . զուր տեղը իս կը հալածեն , օգնէ՛ ինծի :

87 Վ.իչ մնաց որ իս պիտի կորսընցունէին երկրին մէջը , Բայց ես քու պատուիրանքներդ չի թողուցի :

88 ՎՊՆ ողորմութեանդ պէս ապրեցուր իս , ու քու բերնիդ վկայութիւնը պիտի պահեմ :

3 ԼՊԷԿ :

89 ՈՎ Տէր , քու խօսքդ յաւիտեան հաստատ է երկինքը :

90 ՎՊՆ հաւատարմութիւնդ ազգէ մինչև ազգ կայ . դուն հաստատեցիր երկիրը ու կրկենայ :

91 ՎՊՆ իրաւունքներուդ պէս կրկենան անոնք մինչև այսօր . ինչու որ՝ բոլորը քու ծառաներդ են :

92 Թէ որ քու օրէնքդ իմ ուրախութիւնս չըլլար , անատենը կորսըված պիտի ըլլայի իմ տրտմութեանս մէջ :

93 Հաւիտեան չի պիտի մոռնամ քու պատուիրանքներդ , ինչու որ անոնցմով ապրեցուցիր իս :

94 Ես քուկդ եմ , իս փրկէ . ինչու որ քու պատուիրանքներդ փնտռեցի :

95 Լճաբախչոնները ինձի սպասեցին , որ իս կորսընցունեն . Բայց ես քու վկայութիւններդ միտքս պիտի բերեմ :

96 Լճէն կատարեալ բանին վերջը տեսայ , Բայց քու պատուիրանքդ շատ ընդարձակ է :

Ե ՍԷՄ :

97 Որքան կըսիրեմ քու օրէնքդ . ան է
ամէն օր իմ մտածութիւնս :

98 Քու պատուիրանքներովդ իս . իմ
թշնամիներէս իմաստուն ըրիր . ինչու որ
անոնք միշտ իմ քովս են :

99 Իմ բոլոր վարժապետներէս էվէլ ի-
մաստուն եղայ . ինչու որ քու վկայու-
թիւններդ իմ մտածութիւնս են :

100 Երբերէն էվէլ խելացի եղայ , ին-
չու որ քու պատուիրանքներդ պահեցի :

101 Եւմէն գէշ ճամբէն իմ ոտվըներս
եա քաշեցի , որ քու խօսքդ պահեմ :

102 Քու իրաւունքներէդ չի մոլորեցայ .
ինչու որ դուն սորվեցուցիր ինձի :

103 Ինտո՞ր անուշ է քու խօսքդ իմ
քմացրս . մեղքէն էվէլ իմ բերնիս :

104 Քու պատուիրանքներովդ իմաս-
տուն եղայ . անոր համար ամէն ստութեան
ճամբան ատեցի :

Զ ԿՈՒՆ :

105 Քու խօսքդ իմ ոտվըներուս ճրագն
է , ու իմ շաւիղիս լոյսն է :

106 Երդում ըրի՞ ու պիտի կատարեմ ,
թէ քու արդարութեանդ իրաւունքը պա-
հեմ :

107 Շատ նեղացայ՝ ո՛վ Տէր , ապրեցուր իս քու խօսքիդ պէս :

108 Հիմայ իմ բերնիս կամաւոր մատաղները ընդունէ ո՛վ Տէր , ու քու իրաւունքներիդ սորվեցուր ինձի :

109 Իմ անձս ամէն ժամանակ իմ ձեռքս է . բայց քու օրէնքդ չեմ մոռնար :

110 Բ՛արարիչաները որոգայթ լարեցին ինձի համար , բայց ես քու պատու իրանքներիդ չի մոլորեցայ :

111 Վու վկայութիւններիդ յաւիտեան ժառանգեցի . ինչու որ՝ անոնք իմ սրտիս ցնծութիւն են :

112 Խոնարհեցուցի իմ սիրտս , որ քու օրէնքներիդ կատարեմ յաւիտեան մինչև վերջը :

Յ Ամէն :

113 Երկբայամիտ մարդիկները ատեցի , բայց քու օրէնքդ սիրեցի :

114 Իմ ապաւէնս ու վաճանս դուն ես , քու խօսքիդ յուսացայ :

115 Հեռու կեցէք ինձմէ՝ ո՛վ չարագործներ , ինչու որ՝ ես իմ Աստուծուս պատու իրանքները պիտի պահեմ :

116 Պաճպանէ իս քու խօսքիդ պէս , որ ապրիմ . ու իս իմ յոյսէս մի ամէցուներ :

117 ()գնէ ինձի որ ապրիմ , ու ամէն ժամանակ քու օրէնքներուդ մտիկ ընեմ :

118 Լ'նարդեցիր ան ամէնքը , որ քու օրէնքներէդ հեռացան . ինչու որ՝ անոնց նենգութիւնը սուտ է :

119 Գուն կղկղանք կըհամարիս երկրի ամէն ամբարիշտները . անոր համար ես քու վկայութիւններդ կըսիրեմ :

120 Իմ մարմինս քու ահէդ դողաց , ու քու դատաստաններէդ վախցայ :

» Լ'նէն :

121 Իրաւունք ու արդարութիւն ըրի . իս իմ նեղիչներուս մի՛ մատներ :

122 Վ'ու ծառայիդ բարութեան համար երաշխաւոր եղիր . «Է ամբարտաւանները չի նեղացունեն իս :

123 Իմ աչվըներս քու փրկութեանդ ու քու արդարութեանդ խօսքին համար աւրըվեցան :

124 Բ'րէ քու ծառայիդ քու ողորմութեանդ պէս . ու քու օրէնքներդ սորվեցուր ինձի :

125 Ես քու ծառայ եմ , իմաստուն ըրէ իս , որ քու վկայութիւններդ ճանչնամ :

126 Տէրոջը բան տեսնալու ժամանակն է , ինչո՞ւ «Է՛ քու օրէնքդ խափանեցին :

127 Լ'նոր համար քու պատուիրանքներդ ոսկիէն՝ ու աղնիւ ոսկիէն էվէլ սիրցեցի :

128 Լ'նոր համար բոլոր «ու պատուի-

բանքներդ՝ բողոքը ուղիղ կը համարիմ . —
ստուծեան ամէն ճամբան կատեմ :

Ծ Փէ :

129 Վրու վկայութիւններդ զարմանալի
են . անոր համար իմ անձս անոնք կը պա-
հէ :

130 Վրու խօսքերուդ յայտնըվիլը լոյս
կուտայ . — միամիտները իմաստուն կընէ :

131 Իմ բերանս բացի ու հեացի . ինչու
որ՝ քու պատուիրանքներուդ ցանկացի :

132 Ինծի նայէ՛ ու քու անունդ սիրող-
ներուն եղած սովորութեանդ պէս ողորմէ
ինծի :

133 Իմ գնացքներս հաստատէ քու խօս-
քիդ մէջը , ու բնաւ անօրէնութիւն չի տի-
րէ ինծի :

134 Փրկէ իս մարդոց բռնութենէն , ու
քու պատուիրանքներդ պիտի պահեմ :

135 Եւսաւորէ՛ քու երեսդ քու ծառա-
յիդ վրայ , ու սորվեցուր ինծի քու օրէնք-
ներդ :

136 Չ՞ուրերու առուններ կիջնան իմ
աչվըներէս , ինչու որ քու օրէնքդ չի պա-
հեցին :

չ Յարէ :

137 Արդար ես դուն՝ ո՛վ Տէր , ու քու
դատաստաններդ ուղիղ են :

138 Վրու պատուիրած վկայութիւններդ
արդար ու շատ ճշմարիտ են :

139 Իմ նախանձս իս մաշեցուց , ինչու
որ՝ իմ թշնամիներս քու խօսքերդ մոռցան :

140 Վրու խօսքդ շատ մաքրրված է . ա-
նոր համար քու ծառադ անիկա կըսիրէ :

141 Ես ցած ու անարգըված եմ , Բայց
քու պատուիրանքներդ չի մոռցայ :

142 Վրու արդարութիւնդ յաւիտենա-
կան արդարութիւնն է . ու քու օրէնքդ
ճշմարիտ է :

143 Վեղութիւնը ու ցաւը իս գտան .
Բայց քու պատուիրանքներդ իմ զուար-
ճութիւնս են :

144 Վրու վկայութիւններուդ արդա-
րութիւնը յաւիտեան է . իմաստուն ըրէ
իս , ու ապրիմ :

Ծ ԳՕՓ :

145 Իողոր սրտով կանչեցի . ո՛վ Տէր՝
պատասխան տուր ինձի , — քու օրէնքներդ
պիտի պահեմ :

146 Վեզի կանչեցի , փրկէ իս , ու քու
վկայութիւններդ պիտի պահեմ :

147 Կանուխ ելայ արշալոյսին , ու աշաղակեցի . քու խօսքիդ յուսացայ :

148 Գիշերվան պահերէն կանուխ ելան իմ աչվըներս , քու խօսքերուդ վրայ մտմտալու համար :

149 Իմ ձայնս լսէ քու ողորմութեանդ պէս . ո՛վ Տէր , քու իրաւունքիդ պէս ապրեցուր իս :

150 Ընօրէնութեան հետևողները մօտեցան . անոնք քու օրէնքէդ հեռացան :

151 Ո՛վ Տէր , դուն մօտ ես . ու քու բողոր պատուիրանքներիդ ճշմարիտ են :

152 Ըռաջուց իմացած եմ քու վկայութիւններուդ վրայօք , որ անոնք յաւիտեան հաստատեցիր :

7 Բ՛էշ :

153 Տես իմ խնդճութիւնս ու իս փրկէ . ինչու որ քու օրէնքդ չի մոռցայ :

154 Գաստաստանս տես ու փրկէ իս . քու խօսքիդ պէս ապրեցուր իս :

155 Փրկութիւնը հեռու է ամբարիշտներէն . ինչու որ՝ քու օրէնքներիդ չի խնդրեցին :

156 Ո՛վ Տէր , քու գթութիւններիդ շատ են . քու իրաւունքներիդ պէս ապրեցուր իս :

157 Շատ են իմ հալածիչներս

ու թշնամիներս . Բայց քու վկայութիւններէդ դուրս չելայ :

158 Վաստամքները տեսայ ու զգուեցայ . ինչու որ անոնք քու խօսքդ չի պահեցին :

159 Վայէ որ քու պատուիրանքներդ կըսիրեմ . ո՛վ Տէր , քու ողորմութեանդ պէս ապրեցուր իս :

160 Վու խօսքիդ սկիզբը ճշմարտութիւն է , ու քու արդարութեանդ բոլոր իրաւունքները յաւիտեան կան :

Ծ Է Է :

161 Իշխանները զուր տեղը իս հալածեցին , բայց իմ սիրտս քու խօսքէդ վախցաւ :

162 Կըցնծամ քու խօսքերէդ , շատ աւար գտնողի պէս :

163 Ստութիւնը ատեցի ու անարգեցի . Բայց քու օրէնքդ սիրեցի :

164 ()րը եօթը անգամ կօրնեմ քեզ , քու արդարութեանդ իրաւունքներուն համար :

165 Վու օրէնքդ սիրողներուն շատ խաղաղութիւն կայ , ու անոնց գայթակղութիւն չըլլայ :

166 Ո՛վ Տէր , քու փրկութեանդ սպասեցի՝ ու քու պատուիրանքներդ կատարեցի :

167 Իմ անձս քու վկայութիւններդ պահեց , ու ես անոնք շատ կը սիրեմ :

168 Վու պատուիրանքներդ ու քու վկայութիւններդ պահեցի . ինչու որ բոլոր իմ ճամբաներս քու առջիդ են :

Ե ԹՎԱԷ :

169 Ո՛վ Տէր , թող իմ աղաղակս քու առջիդ մօտենայ . քու խօսքիդ պէս իմաստուն ըրէ իս :

170 Թող իմ աղաչանքս քու առջիդ ելլէ . քու խօսքիդ պէս փրկէ իս :

171 Իմ շրթունքներս օրհնութիւն պիտի բղխեն , ինչու որ քու օրէնքներդ սորվեցուցիր ինձի :

172 Իմ լեզուս քու խօսքդ պիտի պատմէ . ինչու որ քու բոլոր պատուիրանքներդ արդար են :

173 Թող քու ձեռքդ ինձի օգնական ըլլայ . ինչու որ քու պատուիրանքներդ ընտրեցի :

174 Ո՛վ Տէր , քու փրկութեանդ ցանկացի . ու քու օրէնքդ իմ ուրախութիւնս է :

175 Թող իմ անձս ապրի ու քեզ օրհնէ . ու քու իրաւունքներդ օգնեն ինձի :

176 Կորսըված ոչխարի պէս մոլորեցայ . փնտռէ քու ծառագ , ինչու որ քու պատուիրանքներդ չի մոռցայ :

ՍԱԳ ՄՈՍ ԸՒՒ :

Ըստիճաններուն երգը :

Իմ ներդու թեանս մէջը Տէրոջը կանչեցի .
ու ան ինձի պատասխան տրւաւ :

2 **Վ**՛՛՛՛՛ Տէր , փրկէ իմ անձս սուտ շք-
թուէնքներէն , — նենգաւոր լեզուէն :

3 **Ն**ենգաւոր լեզուն քեզի ի՞նչ կու-
տայ ու քեզի ի՞նչ կընէ .

4 **Օ**րաւոր մարդուն սուր նետերը , ու
գիհին վառած ածուխները :

5 **Վ** ա՛յ ինձի՛ որ **Ս**օսոքի մէջ պան-
դուխտ նղայ , — կեդարին վրաններուն
հետը բնակեցայ :

6 **Շ**ատ ժամանակ իմ անձս խաղաղու-
թիւնը ատողներուն հետ բնակեցաւ :

7 **Ե**ս խաղաղասէր էի . բայց երբոր կը
խօսէի , անոնք կուիւ ինձէն :

ՍԱԳ ՄՈՍ ԸՒՒ՛ :

Ըստիճաններուն երգը :

Մչ վրներս գէպի լեռները պիտի վերցու-
նեմ՝ , ուսկից իմ օգնութիւնս պիտի
գայ :

2 **Ի**մ օգնութիւնս երկինքը ու երկիրը
ստեղծող Տէրոջմէն է :

3 Լ'ն քու ոտքդ չի դողացուներ , — քու պահապանդ չի քնանար :

4 Լ'նա՛ Իսրայէլի պահապանը չի պիտի մրափէ ու չի պիտի քնանայ :

5 Տէրը քու պահապանդ է . Տէրը քու աջ ձեռքիդ քովը քու հովանիդ է :

6 Զորեկը արեգակը քեզ չի պիտի զարնէ . ու ոչ ալ գիշերը լուսինը :

7 Տէրը քեզ ամէն շարէն պիտի պահպանէ . քու անձդ պիտի պահպանէ :

8 Տէրը քու ելլելդ ու մտնելդ պիտի պահպանէ , ասկէ ետև մինչև յաւիտեան :

ՍԸՂ ՍՈՍ ԾԻԻ :

Դաւիթի Լ'սաբիճաններուն երգը :

Սուրախանայի երբոր ինծի կըսէին՝ Տէրոջը տունը երթանք :

2 Մ'եր ոտվըները քու դուռներուդ մէջը պիտի կայնին՝ ո՛վ Երուսաղէմ :

3 Երուսաղէմը քաղաքի մը պէս չի նուաճ է , ինքիրենը միաւորված է .

4 Որ ցեղերը՝ Տէրոջը ցեղերը հոն կելլին Իսրայէլին պատուիրանքին պէս , Տէրոջը անունէն գոհանալու համար :

5 Ինչու որ՝ հոն դրուած են դատաստանին աթոռները . Դաւիթին տանը աթոռները :

6 Երուսաղէմի խաղաղութիւնը խնդրեցէք . թող յաջողվին անոնք որ քեզ կըսիրեն :

7 Խաղաղութիւն թող ըլլայ քու պարիսպներուդ մէջը , — յաջողութիւն՝ քու պալատներուդ մէջը :

8 Իմ եղբայրներուս ու իմ ընկերներուս համար հիմայ պիտի ըսեմ , Խաղաղութիւն ըլլայ քեզի :

9 Ս'եր Տէր Աստուծոյ տանը համար քեզի բարութիւն պիտի ուղեմ :

ԱՆՂՍՈՍ . ՆՒԳ :

Աստուծանէրուն էրգը :

1 Եւպի քեզի կըբարձրացունեմ իմ աչվըներս , ո՛վ երկինքին մէջը բնակողը :

2 Ահա ինտոր որ ծառաներուն աչվըները իրենց Տէրոջը ձեռքին կընային , — ինտոր որ աղախինին աչվըները իր տիկինին ձեռքին , անանկ ալ մեր աչվըները Տէրոջը մեր Աստուծուն պէտէ նային , մինչև որ մեզի ողորմի :

3 Ողորմէ մեզի ո՛վ Տէր՝ ողորմէ , ինչու որ էվելոք լեցվեցանք անարգանքով :

4 Եվելոք լցված է մեր անձը դողողներուն նախատինքէն , — ամբարտաւաններուն անարգանքէն :

ՍԵՂՍՈՍ ԾՆԴ:

Գաւլէ Եսայիճամնէրուն երգը :

1) Թէ որ Տէրը մեր հետը չըլլար , հիմայ
Իտրայէլը թող ըսէ ,

2) Թէ որ Տէրը մեր հետը չըլլար մար-
դիկ մեր վրայ ելած ժամանակը ,

3) Են ատենը կենդանի կուլ կուտային
մեզ , երբոր անոնց բարկութիւնը մեր
վրայ բորբոքված էր .

4) Են ատենը ջուրերը մեզ կնկղմեցու-
նէին , հեղեղը մեր անձերուն վրայէն
կանցնէր .

5) Են ատենը կատղած ջուրերը մեր ան-
ձերուն վրայէն կանցնէին :

6) Օրհնեալ ըլլայ Տէրը , որ մեզ անոնց
ակռաներուն որս չի տըւաւ :

7) Մեր անձերը ճնճղուկի պէս որսողնե-
րուն որոգայթէն ազատեցան . որոգայթը
կտորտեցաւ , ու մենք ազատեցանք :

8) Մեր օգնութիւնը երկինքը ու երկի-
րը ստեղծող Տէրոջը անունովն է :

ՍԵՂ ՄՈՍ ՆՒԵ :

Լսալիճաննէրոսն երգը :

Տէրոջը յուսացողները Սիօն լեռանը պէս են , որ տեղէն չի շարժիր՝ հասարակ տեան կրմնայ :

2 Ինքոր որ Երուսաղէմը լեռներով պատած է , անսնկ ալ Տէրը իր ժողովուրդին չորս կողմն է ասկէ ետե մինչև յաւիտեան :

3 Ինչու որ՝ ամբարիշտներուն գաւազանը արդարներուն վիճակին վրայ չի պիտի մնայ , որ արդարները ձեռվընին անօրէնութեան չի ձգեն :

4 Այլ Տէր՝ աղէկութիւն ըրէ անոնց , որ բարի՝ ու սրտով ուղիղ են :

5 Իայց դէպի ծուռ ճամբան մոլորողները Տէրը անօրէնութիւն գործողներուն հետ պիտի կորսընցունէ . խաղաղութիւն ուսա՛լ : արայելին վրայ :

ՍԵՂ ՄՈՍ ՆՒԹ :

Լսալիճաննէրոսն երգը :

Երբոր Տէրը Սիօնին գերութիւնը դարձուց , երազ տեսնողներուն պէս եղանք :

2 Ըն ժամանակը մեր բերանը խնդու-
մով լեցվեցաւ՝ ու մեր լեզուն ցնծութիւ-
նով . ան ժամանակը հեթանոսներուն մէջը
ըսին , թէ՛ Տէրը ասոնց համար մեծ բաներ
ըրաւ :

3 Տէրը մեզի համար մեծ բաներ ըրաւ ,
« մենք ուրախացանք :

4 Այլ Տէր , դարձուր մեր գերութիւ-
նը՝ Հարաւին առուններուն պէս :

5 Ընոնք որ արցունքով կըրցանեն , ցըն-
ծութիւնով կըրնան :

6 Հանելու սերմը տանելով լալով ել-
լող երթողը անշուշտ ցնծութիւնով ետ
պիտի դառնայ իր ցորենի խուրցերը բերե-
լով :

ՍԵՂՍՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՒՄ :

Սուրբնիւն Ըստի՛ծաննէրուսն էրԷր :

Թէ որ Տէրը չի շինէ տունը , զուր տե-
ղը կաշխատին անոր շինողները . թէ
որ Տէրը չի պահպանէ քաղաքը , զուր տե-
ղը արթուն կըմնան պահպանները :

2 Օձուր է ձեզի կանուխ ելելը , « ուշ
հանգչելը , « ցաւով հաց ուտելը . ինչու
որ ան իր սիրելիին քուն կուտայ :

3 Ըհա տղաքը Տէրոջը ժառանգութիւնն
են . որովայնի պտուղը անոր պարգևն է :

4 Օօրաւորին ձեռքի նեաերը ինտոր են նէ , երիտասարդներուն զաւկըները անանկ են :

5 Երանի՛ ան մարդուն , որ իր նեաին ամանները անոնցմով լեցուց . երբոր դուռը թըշնամիներուն հեա խօսելու ըլլան , չի պիտի ամչնան :

ՍԵՂՄՈՍ ՆՒԲ :

Լսողի՛ ճաննէրուն երգը :

Երանի՛ ան ամէնուն՝ որ Տէրօջմէն կը վախնան , ու անոր ճամբաներուն մէջէն կը քայլեն :

2 Ասան զի դուն քու ձեռքիդ աշխատանքը պիտի ուտես , երանի՛ քեզի , ու քեզի բարի պիտի ըլլայ :

3 Քու կնիկդ պտղաբեր որթի մը պէս պիտի ըլլայ քու տանդ ներսիդիերը , ու քու զաւկըներդ ձիթենիի տունկերու պէս քու սեղանիդ չորս կողմը :

4 Ըհա Տէրօջմէն վախցող մարդը ասանկ կօրնըվի :

5 Տէրը քեզ Սիօնէն պիտի օրնէ . ու Երուսաղէմին բարութիւնը քու կենացդ բոլոր օրերուն մէջը պիտի տեսնաս :

6 Աւքու զաւկըներուդ զաւկըները պիտի տեսնաս . խաղաղութիւն ըլլայ Իսրայէլին վրայ :

ՍԵՂ ՄՈՍ ՆՆԻԹ :

Եւստիճաննէրուն երգը :

1 Իմայ Իսրայէլը թող ըսէ , թէ՛ Իմ
մանկութենէս հետէ շատ անգամ իս
նեղացուցին :

2 Իմ մանկութենէս հետէ շատ անգամ
իս նեղացուցին , բայց ինձի չի յաղթե-
ցին :

3 Հերկողները իմ կոնակիս վրայ հեր-
կեցին , — իրենց աղօսները երկնցուցին :

4 Տէրը արգար է . ինքը ամբարիշտնե-
րուն չուանները կտրտեց :

5 Միօնը ատողներուն ամէնը պիտի ամբը-
նան ու ետ դաննան :

6 Տանը վրայի խոտին պէս պիտի ըլլան ,
որ չի փրցըվելէն առաջ կըչորնայ .

7 Ար անով Դձողը իր ձեռքը չի կրնար
լեցունել , ու ոչ խուրձ կապողը իր գոգը .

8 Աւ անցնողները չեն ըսեր՝ թէ Տէրօջը
օրհնութիւնը ձեր վրայ ըլլայ . — ձեզ Տէ-
րօջը անունովը կօրհնենք :

ՍԵՂՄՈՍ · ԾՂ :

Աստիճաններու երգը :

**Խորունկ տեղերէն քեզի կանչեցի՝ ո՛վ
Տէր :**

2 **Ո՛վ Տէր**, իմ ձայնս լսէ . քու ա-
կանջներդ թող մտիկ ընեն իմ աղօթքիս
ձայնին :

3 **Ո՛վ Տէր**, թէ որ անօրէնութիւններ
ըը յիշելու ըլլաս՝ **Տէր** ո՛վ կրնայ կենալ :

4 Իայց քու քովդ է թողութիւնը, որ
քննէ վախնան :

5 **Ես Տէրոջը** կսպասեմ . իմ անձս
կսպասէ . ու անոր խօսքին կը յուսամ :

6 Առաւօտը սպասողներէն՝ առաւօտը
սպասողներէն էվէլ իմ անձս **Տէրոջը**
կսպասէ :

7 Իսրայէլը **Տէրոջը** թող յուսայ, ին-
չու որ **Տէրոջը** քովը ողորմութիւն կայ . ու
անոր քովը շատ փրկութիւն կայ :

8 Աւ ան պիտի փրկէ Իսրայէլը իր բո-
լոր անօրէնութիւններէն :

ՄԱՂՍՏՈՍ ԸՆԴՈՒՄ :

Գառնի Եսթրիճաններուն երգը :

Ո՛վ Տէր, իմ սիրտս չի գոռոզացաւ՝ ու իմ աչվըներս չի բարձրացան . ու ես մեծամեծ բաներու մէջ , և ինծմէ բարձր բաներու մէջ չի քալեցի :

2 Իրաւի որ իմ անձս իր մօրը քովը կաթէն կտրած տղին պէս հանդարտեցուցի ու հանգստացուցի . իմ անձս կաթէն կտրած տղին պէս է :

3 Իսրայէլը թող Տէրոջը յուսայ ասկէ ետեւ մինչև յաւիտեան :

ՄԱՂՍՏՈՍ ԸՆԴՈՒՄ :

Եսթրիճաններուն երգը :

Ո՛վ Տէր, յիշէ Գաւիթը ու անոր բոլոր նեղութիւնները .

2 Որ ան երգում ըրաւ Տէրոջը , և ուխտ դրաւ Հակոբին . Օջորաւորին ընկալ .

3 Թէ իմ տանս բնակարանին մէջը չի մտնամ , ու իմ փռած անկողինիս մէջը չելեմ ,

4 Թէ իմ աչվըներուս քունն ու թարթիչներուս մրափ չի տամ :

5 Սինչև որ Տէրոջը համար տեղ մը

գտնամ , «- Նակորին Օջորաւորին համար բնակարաններ :

6 Լճա անիկա լսեցինք Եփրաթային մէջը , «- ան գտանք անտառի դաշտերուն մէջը :

7 Մտնանք անոր բնակարանները , «- երկրպագութիւն ընենք անոր պատուանդանին վրայ :

8 Քու հանգստութեանդ ել՝ ո՛վ Տէր , դուն՝ ու քու զօրութեանդ տապանակը :

9 Քահանաներդ թող արգարութիւն հագնին , ու քու սուրբերդ ցնծան :

10 Գաւիթ ծառայիդ համար անդին մի դարձուններ քու օծեալիդ երեսը :

11 Տէրը երդում ըրաւ Գաւիթին ճշմարտութիւնով՝ «- ետ չի դառնար անկից թէ Քու որովայնիդ պտուղէն քու աթոռիդ վրայ պիտի նստեցունեմ :

12 Թէ որ քու զակերներդ իմ ուխտս ու իմ վկայութիւնս պահելու ըլլան որ անոնց պիտի սորվեցունեմ , ան ատենը անոնց զակերները յաւիտեանս յաւիտենից քու աթոռիդ վրայ պիտի նստին :

13 Ինչու որ Տէրը Սիօնը ընտրեց , ու ան իր բնակութեանը համար ուզեց , լճ-
լճ ,

14 Լս է յաւիտեանս յաւիտենից իմ հանգստութիւնս . ասոր մէջը պիտի բնակիմ , ինչու որ ասիկա ուզեցի :

15 Լ՛նոր կերակուրը առատաբար պիտի օրհնեմ , — անոր աղքատները հացով պիտի կշտացունենմ :

16 Ու անոր քահանաներուն փրկութիւն պիտի հագցունեմ , ու անոր սուրբերը ուրախութեան ձայնով պիտի ցնծան :

17 Լ՛ն տեղ Գաւիթին եղջիւրը պիտի բուսցունեմ , — ճրագ պիտի պատրաստեմ իմ օծեալիս համար :

18 Լ՛նոր թշնամիներուն ամօթ պիտի հագցունեմ , բայց անոր վրայ իր պսակը պիտի ծաղկի :

ՍՇԳ ՍՒՈՍ · ՆՂԳ :

Գաւթի Լ՛ն սիւնն էրուն էրգը :

Լ՛ն հա ո՛րքան բարի ու ո՛րքան ցանկալի է որ եղբայրները իրարու քով մէկ տեղ բնակին :

2 Լ՛ն ազնիւ իւղին պէս է որ գլխուն վրայէն մօրուքին վրայ՝ Լ՛ն հարօնին մօրուքին վրայ վազեց , — մինչև անոր լաթերուն ծարը իջաւ :

3 Միօնին լեռներուն վրայ իջած շերմօնին շաղին պէս է . ինչու որ՝ Տէրը հոն հաստատեց օրհնութիւնը — կեանքը մինչև յաւիտեան :

ԱՆՂ ՄՈՍ ՆՂԴ:

Աստիճաններուն երէւ :

1 Հա օրնեցեք Տէրը՝ ո՛վ Տէրօջը բոլոր ծառաները, որ Տէրօջը տունը կրկենաք գիշերները :

2 Սուրբ տեղը ձեռնդնիդ բարձրացուցեք, ու օրնեցեք Տէրը :

3 Երկինքը ու երկիրը ստեղծող Տէրը թող օրնէ քեզ Սիօնէն :

ԱՆՂ ՄՈՍ ՆՂԵ:

1 Լէլուիա, Օրնեցեք Տէրօջը անունը, օրնեցեք ո՛վ Տէրօջը ծառաները,

2 Ար Տէրօջը տունը կրկենաք, մեր Աստուծոյ տանը սրաններուն մէջը :

3 Գովեցեք Տէրը՝ ինչու որ Տէրը բարի է, սաղմոս ըսեք անոր անունին, ինչու որ քաղցր է :

4 Այսան զի Տէրը իրեն համար ընտրեց Յակոբը, ու Իսրայէլը իր ծառանգութեանը համար :

5 Ինչու որ ես իմացայ, թէ Տէրը մեծ է, ու մեր Տէրը բոլոր աստուածներէն :

6 Ամէն ինչ որ ուղեց Տէրը՝ ըրաւ, երկինքին ու երկրին մէջը, ծովուն ու բոլոր խորունկ տեղերուն մէջը :

7 Երկրին ծարէն ամպեր կը հանէ ,
անձրեւին կայծակներ կը շինէ , — հով կը
հանէ իր ամբարներէն :

8 Եգիպտոսին առջինեկները սպաննեց ,
մարդէն մինչև անասունները :

9 Նշաններ ու հրաշքներ խրկեց քու
մէջդ՝ ո՛վ Եգիպտոս , Փարաւօնին ու անոր
բոլոր ծառաներուն վրայ :

10 Հատ ազգեր զարկաւ , ու զօրեղ
թագաւորներ սպաննեց .

11 Մտորհացւոց Սէհօն թագաւորը՝
Նասանի () գ թագաւորը՝ ու Վանանացւոց
բոլոր թագաւորութիւնները .

12 Ու անոնց երկիրը ժառանգութեան
տրւաւ , իր Իսրայէլ ժողովուրդին ժա-
ռանգութեան համար :

13 Ո՛վ Տէր , քու անունդ մինչև յաւի-
տեան կայ . ո՛վ Տէր , քու յիշատակդ ազ-
դէ մինչև ազգ :

14 Ինչու որ՝ Տէրը իր ժողովուրդը կը
դատէ , ու իր ծառաներուն կողորմի :

15 Հեթանոսներուն կուռքերը արծաթ
ու ոսկի են , մարդու ձեռքի գործքեր են :

16 Ինքան ունին՝ ու չեն խօսիր . աչք
ունին՝ ու չեն տեսնար .

17 Մկանջ ունին՝ ու չեն լսեր , ու բնաւ
չունչ չի կայ անոնց բերնին մէջը :

18 Ընոնք շինողները — բոլոր անոնց
յուսացողները անոնց պիտի նմանին :

19 Ո՛վ Իսրայէլի տունը , օրհնեցէք Տէրը . ո՛վ Մահարօնի տունը , օրհնեցէք Տէրը :

20 Ո՛վ Ղաիի տունը , օրհնեցէք Տէրը . ո՛վ Տերօջմէն վախցողներ , օրհնեցէք Տէրը :

21 Օրհնեալ ըլլայ Տէրը Սիօնէն , որ Երուսաղէմին մէջը բնակած է : Ալէլուիա :

ՍԵՂՍՈՍ . ՆԴ . Գ . :

Գոհացէք Տերօջմէն , ինչու որ՝ բարի է . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

2 Գոհացէք աստուածներուն Մատուածէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

3 Գոհացէք տէրերուն Տէրէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

4 Մինակ մեծ հրաշքներ ընողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

5 Երկինքը իմաստութիւնով ստեղծողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

6 Երկիրը ջուրերուն վրայ տարածողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

7 Սեծամեծ լուսեր ստեղծողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

8 Արեգակը , որ ցորեկվան վրայ իշխանութիւն ունենայ . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

9 Առսինը ու աստղերը , որ գիշերվան վրայ իշխանութիւն ունենան . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

10 Եգիպտոսը իր առջինեկներովը զարնողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

11 Աւ Իսրայէլը անոնց մէջէն հանողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է .

12 Օջորեղ ձեռքով ու տարածված բազուկով . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է .

13 Աարմիր ծովը երկուք բաժնողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է .

14 Աւ Իսրայէլը անոր մէջէն անցունողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է .

15 Աւ Փարաւօնը և իր զօրքը Աարմիր ծովին մէջը թափողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

16 Իբ ժողովուրդը անապատին մէջը պրտըտցունողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

17 Ա՛նժ թագաւորներ զարնողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է :

18 Ու զօրեղ թագաւորներ սպաննողէն . ինչու որ՝ անոր ողորմու թիւնը յաւիտեան է .

19 Ամորհացուոց Աէհօն թագաւորը . ինչու որ՝ անոր ողորմու թիւնը յաւիտեան է .

20 Ու Նասանի ()գ թագաւորը . ինչու որ՝ անոր ողորմու թիւնը յաւիտեան է .

21 Ու անոնց երկիրը ժառանգութիւն տրւողէն . ինչու որ՝ անոր ողորմու թիւնը յաւիտեան է .

22 Իր Իսրայէլ ծառային ժառանգութեան համար . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է .

23 Մեր խոնարհու թեան մէջը մեզ յիշողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է .

24 Ու մեր թշնամիներէն մեզ փրկողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է .

25 Նողոր մարմինի հաց տրւողէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է .

26 Գոհացէք երկինքին Աստուծմէն . ինչու որ՝ անոր ողորմութիւնը յաւիտեան է .

ՍՇՂՄՈՍ ԸՆԴՆԱԿ :

Բարիլօնին գետերուն քովը՝ հոն կընքուտէինք , ու Սիօնը միաքերնիս բերելով կուլայինք :

2 Ընտր մէջը ուռի ծառերուն վրայ կախեցինք մեր քնարները :

3 Ինչու որ մեզ գերի ընողները հոն մեզմէ երգ մը խնդրեցին , ու մեզի նեղութիւն տըւողները ուրախութիւն , ընէլով թէ՛ Երգեցէք մեզի Սիօնին երգերէն :

4 Տէրոջը օրհնութիւնը ի՛նչպէս երգենք օտար երկրի մէջ :

5 Ո՛վ Երուսաղէմ , թէ որ քեզ մոռնամ՝ թող իմ աջ ձեռքս ի՛ր պաշտօնը մոռնայ ,

6 թող իմ լեզուս իմ քմացս փակչի , թէ որ քեզ չի յիշեմ . թէ որ Երուսաղէմը իմ գլխաւոր ուրախութենէս էլել մեծ չի համարիմ :

7 Յիշէ՛ ո՛վ Տէր , Եդօմին զաւկրները Երուսաղէմի օրվանը մէջ , որ կըսէին՝ Փլցուցէ՛ք փլցուցէ՛ք մինչև անոր հիմը :

8 Ո՛վ Բարիլօնի աւերող աղջիկը , երանի՛ անոր , որ մեզի ըրած գործքերուդ փոխարէնը քեզի կըհատուցանէ .

9 Երանի՛ անոր , որ քու զաւկրներդ կըբռնէ՛ ու քարին կըղարնէ :

ՍԵՂՍՈՍ ՆՂԼ :

(Սուգնս) Գուլի :

Քենէ պիտի գոհանամ իմ բոլոր սրտովս . աստուածներուն առջին քեզի սաղմոս պիտի երգեմ :

2 Երկրպագութիւն պիտի ընեմ քու սուրբ տաճարիդ մէջը , ու քու անունէդ պիտի գոհանամ քու ողորմութեանդ համար . ու քու ճշմարտութեանդ համար . ինչու որ՝ քու բոլոր անունիդ վրայ մեծցուցիր քու խօսքդ :

3 Անչաժ օրս պատասխան տրւիր ինձի , իմ անձիս մէջը զօրութիւնով իս ուժովցուցիր :

4 Այլ Տէր , երկրին բոլոր թագաւորները պիտի գոհանան քենէ , երբոր քու բերնիդ խօսքերը լսեն :

5 Ու Տէրոջը ճամբաներուն մէջը պիտի երգեն , ինչու որ՝ Տէրոջը փառքը մեծ է :

6 Թէպէտ Տէրը բարձր է , բայց ցածը ըլլողը կը տեսնէ . ու բարձրամիտը հեռվանց կը ճանչնայ :

7 Թէ որ նեղութեան մէջ ալ քալեմ նէ , դուն իս պիտի ապրեցունես . իմ թրշնամիներուս բարկութեանը դէմ քու ձեռքդ պիտի երկնցունես , ու քու աջ ձեռքդ իս պիտի փրկէ :

8 Տէրը պիտի կատարէ իմ տեղս . ո՛վ Տէր , քու ողորմութիւնդ յաւիտեան է . քու ձեռքիդ գործքերը երեսէ մի թողուր :

ՍՄՂՄՈՍ • ՆՂԺ :

Գլխաւոր երգեցողէն , Սողմսս Գաւլի :

Ո՛վ Տէր , իս քննեցիր ու ճանչցար :

2 Գու՛ն գիտես իմ նստիլս ու ելլելս . իմ խորհուրդս հեռւմանց կը հասկընաս :

3 Իմ ելլելս ու պառկիլս կը քննես . ու իմ բոլոր ճամբաներս գիտես :

4 Ինչու որ՝ բնաւ խօսք չի կայ իմ լեզուիս վրայ , ահա՛ ո՛վ Տէր , դուն ամէնը գիտես :

5 Իմ ետևովս ու առջևովս իս պաշարեցիր , ու քու ձեռքդ իմ վրաս դրիր :

6 Ըս գիտութիւնը ինձի շատ զարմանալի է . բարձր է որ չեմ կրնար հասկընալ անիկա :

7 Ո՛ր երթամ քու հոգիէդ . ու քու երեսէդ ո՛ր փախչիմ :

8 Ժէ որ երկինքը ելլեմ , դուն հոն ես . թէ որ դժոխքը անկողինս ընեմ , ահա՛ դուն հոն ես .

9 Ժէ որ արշալուսին թւերը առնեմ , ծովին ծարերուն մէջը բնակիմ ,

10 Զոն ալ քու ձեռքդ ինձի պիտի ա-

ուաջնորդէ , ու քու աջ ձեռքդ իս պիտի բռնէ :

11 Ու թէ որ ըսեմ . Իրաւցունէ թող խաւարը իս ծածկէ , անատենը գեշերն ալ լոյս կըլլայ իմ շորս կողմս :

12 Մուժն ալ քեզի խաւար չէ . հասցա գիշերը ցորեկի պէս լոյս կըլլայ , խաւարը լուսի պէս է :

13 Պատճառն որ դուն ստեղծեցիր իմ երիկամունքներս , ու իմ մօրս որովայնին մէջը իս դուն ծածկեցիր :

14 Կըգոհանամ քենէ , որ ահաւոր ու զարմանալի կերպով ստեղծվեցայ . քու գործքերդ զարմանալի են , ու իմ անձս աղէկ գիտէ :

15 Իմ կազմութիւնս չի ծածկրվեցաւ քենէ , երբոր ծածուկ տեղը ստեղծվեցայ՝ երկրի գաղտնի տեղերը ճարտարութիւնով կազմրվեցայ :

16 Վու աչքներդ իմ անկատար կերպարանքս տեսան . ու անոնց բոլորը քու գրքիդ մէջը գրված էին՝ ոչ ժամանակին պիտի կազմրվէին , որ անոնցմէ դեռ մէկը չի կար :

17 Որչափ պատուական են ինձի քու խորհուրդներդ՝ ո՛վ լստուած , որչափ մեծ է անոնց թիւր :

18 Թէ որ համբեմ անոնք , աւազէն շատ են . երբոր արթննամ , դեռ քեզի հետ եմ :

19 Իրաւցունէ ամբարիշտը կըսպաննես՝
 ո՛վ Աստուած , ուրեմն ո՛վ արիւնահեղ
 մարդիկ՝ հեռացէք ինծմէ :

20 Անոնք քեզի դէմ նենգութիւնով
 կըխօսին . ուր քաղաքներդ անօրէնու-
 թիւնով կառնեն :

21 Քեզ ատողները չեմ մի ատեր՝ ո՛վ
 Տէր , ու քեզի դէմ ելլողներէն չեմ մի
 զգուիր :

22 Անոնք կատարեալ ատելութիւնով
 կատեմ , ու թշնամի կըհամարիմ ինծի :

23 Փորձէ իս՝ ո՛վ Աստուած , ու գիտ-
 ցիր իմ սիրտս . իս քննէ ու գիտցիր իմ
 խորհուրդներս ,

24 Ու նայէ թէ որ չար ճամբուն մէջն
 եմ նէ , ալ իս դէպի յաւիտենական ճամ-
 բան առաջնորդէ :

ՍՇՂՄՈՍ . ՆՆՈՒՆ :

Գլխաւոր երգեցողէն , Սողոմ Գաւթի :

Ո՛վ Տէր , չար մարդէն իս փրկէ . ու-
 բրոնաւոր մարդէն իս պահէ :

2 Որ անոնք սրտերնուն մէջը չար բաներ
 կըմտմըտան . ու ամէն օր կռիւներու հա-
 մար կըժողվըվին :

3 Իրենց լեզուները օձի պէս սրեցին .
 իժի թոյն կայ անոնց շրթունքներուն տա-
 կը : Սէլայ :

4 ՍՎ Տէր , իս ամբարիշտին ձեռքէն պահէ . իս բռնաւոր մարդէն պահէ , որոնք ոտվըներս գայթակղեցունելու խորհեցան :

5 Ամբարտաւանները՝ ինծի համար գաղտնի որոգայթ ու չուաններ դրին , որոգայթ մը փռեցին իմ ճամբուս վրայ . թողեր դրին ինծի համար : Աւելայ :

6 ԲՍԻ Տէրօջը , Գուն ես իմ Աստուածս . ՈՎ Տէր , լսէ իմ աղաչանքիս ձայնը :

7 Տէ՛ր՝ ո՛վ Տէր , իմ փրկութեանս զօրութիւնը . դուն ծածկեցիր իմ գլուխս պատերազմի օրը :

8 ՍՎ Տէր , ամբարշտին ցանկութիւնները մի՛ տար . անոր չար խորհուրդը մի՛ յաջողեր , «Է չի բարձրանան : Աւելայ :

9 Իս պաշարողներուն գլուխը՝ իրենց շրթունքներուն վաստակը պիտի ծածկէ :

10 Այրող ածուխներ պիտի իյնան անոնց վրայ , կրակին մէջը պիտի ձգէ անոնք . խորունկ ջուրերու մէջ , «Է բնավեր չելեն :

11 Չարախօս մարդը երկրի վրայ չի պիտի հաստատվի . նեղութիւնը բռնաւոր մարդը պիտի որսայ , որ ան կործանէ :

12 Գիտեմ՝ որ Տէրը դատաստան պիտի քնէ խեղճին համար , ու իրաւունք՝ աղքատին համար :

13 Իրաւցունէ արդարները քու անու-

նէդ պիտի գոհանան . և ուղիղները քու
առջիդ պիտի բնակին :

ՍՇՂ ՄՈՍ . ՆՊԵՆ :

Սաղմոս Գաւլի :

Ո՛վ Տէր , քեզի կրկանչեմ , շուտ հասիր
ինձի . ականջ դիր իմ ձայնիս , երբոր
կրկանչեմ քեզի :

2 Թող իմ աղօթքս խուսկի պէս քեզի
շտկրվի . և իմ ձեռքներուս վեր վերցու-
նելը իրիկվան պատարագին պէս :

3 **Ո՛վ Տէր** , պահապան դիր իմ բեր-
նիս . և իմ շրթունքներուս դուռը պահ-
պանէ :

4 Իմ սիրտս չար բանի մի առաջնոր-
դեր , որ անօրէնութիւն գործողներուն
հետ գէշ գործքեր չընեմ . ու անոնց ա-
նուշ կերակուրներէն չուտեմ :

5 Երգարը թող իս խրատէ՛ ան ողորմու-
թիւն է . ու իս յանդիմանէ , ան գլխու իւղ
է , իմ գլխուս չի պիտի վնասէ . ինչու որ
անոնց նեղութիւններուն մէջը ևս պիտի
աղօթեմ :

6 Երբոր անոնց դատաւորները քարե-
րու մէջը ձգվին , ան ատենը իմ խօսքերս
պիտի լսեն ինչու որ քաղցր են :

7 Աւ ինտոր որ հերկողը ու ճեղքողը

իւցրուէ հողին վրայ, անուն! ալ մեր ոսկորները գերեզմանին բերանը ցիրուցան եղան :

8 Իայց Տէր՝ ո՛վ Տէր, իմ աչվըներս դէպի բեզի են . բեզի յուսացի, իմ հոգիս մի՛ մերկացուներ :

9 Ինծի համար լարված որոգայթէն, ու անօրէնութիւն գործողներուն թռուրէն իս պահէ :

10 Լ՛մբարիշտները իրենց թռուրուն մէջը պիտի իյնան, մինչև որ ես բոլորովին անցնիմ :

ՍԱՂՄՈՍ ԴՆԻԹ :

Վառելի այրին Տէրը եղած Ժամանակէ երգին
աղօլբը :

Լիմ ձայնովս Տէրօջը կաղաղակեմ, իմ ձայնովս Տէրօջը կաղաչեմ :

2 Իմ գանգատս անոր առջին կրթափեմ, իմ նեղութիւնս անոր առջին կը պատմեմ :

3 Երբոր հոգիս իմ մէջս կրմարէր, դուն իմ շաւիղս գիտցար . ան քալած ճամբուս մէջը ինծի համար որոգայթ լարեցին :

4 Եւայէ՛ աջ կողմը ու տես որ բնաւ իս ճանչցող մը չի կայ . ապաւէներ ինծմէ կորսրվեցաւ . բնաւ մէկը չի կայ, որ իմ անծիս համար հոգ ընէ :

5 Ա՛վ Տէր , քեզի աղաղակեցի ու ըսի .
 Դուն ես իմ ապաւէնս — վիճակս կենդա-
 նեաց երկրին մէջ :

6 Այայէ՛ իմ աղաղակիս , ինչու որ շատ
 տկարացայ . ապրեցուր իս իմ հալածողնե-
 րէս , ինչու որ ինծմէ զօրաւոր են :

7 Ի՛մ անձս բանտէն հանէ , որ քու ա-
 նունէդ գոհանամ . արդարները իմ չորս
 կողմն պիտի պատեն երբոր ինծի բարու-
 թիւն ընես :

ՍՇՂ ՄՈՍ ԾՆՈՒԹՅՈՒՆ

Սողոմոն Գաւթի :

Ա՛վ Տէր , լսէ իմ աղօթքիս . ահանջ դիր
 իմ աղաչանքիս . քու ճշմարտութիւ-
 նովդ պատասխան տուր ինծի քու արդա-
 րութիւնովդ :

2 Աւ քու ծառայիդ հետ դատաստանի
 մի մտներ . ինչու որ՝ բնաւ կենդանի մը
 չարդարանար քու առջիդ :

3 Ա՛յ ասն զի՛ թշնամին իմ անձս հալա-
 ծեց , իմ կեանքս գետինը զարկաւ , իս շա-
 տոնցվընէ մեռածներուն պէս մութը նստե-
 ցուց :

4 Աւ իմ հոգիս ներսիդիս մարեցաւ , իմ
 սիրտս ներսիդիս մաշեցաւ :

5 Լ՛ռջի օրերը կը յիշեմ , քու բոլոր

գործ քերուդ վրայ կրմամտամ . քու ձեռքիդ ստեղծածները միտքս բերեմ :

6 Չեռվըներս գէպի քեզի կերկնցունեմ .
 իմ անձս չոր երկրի պէս քեզի իջարուի :
 Սէլայ :

7 Շուտով պատասխան տուր ինձի՝
 ո՛վ Տէր , իմ հոգիս մարեցաւ . քու երեսդ
 մի ծածկեր ինձմէ , որ գերեզմանը իջնող-
 ներուն պէս չըլլամ :

8 Առըվանց քու ողորմութիւնդ ինձի
 լսել տուր , ինչու որ՝ քեզի յուսացայ . ան
 երթալու ճամբաս ինձի ցուցուր , ինչու որ՝
 իմ անձս քեզի բարձրացուցի :

9 Ո՛վ Տէր , փրկէ իս իմ թշնամիներէս .
 Կնչո՞ւ որ՝ քեզմով կըծածկըվիմ :

10 Սորվեցուր ինձի որ քու կամքդ ը-
 նեմ . ինչու որ՝ դուն ես իմ Աստուածս .
 Թող քու բարի հոգիդ իս ուղիղ երկիրը
 առաջնորդէ :

11 Ո՛վ Տէր , քու անունիդ համար իս
 ապրեցուր . քու արդարութեանդ համար
 իմ անձս նեղութենէն հանէ :

12 Աւ քու ողորմութիւնովդ սատկեցուր
 իմ թշնամիներս , ու կորսնցուր բոլոր իմ
 անձս նեղացունողները . ինչու որ ես քու
 ծառագ եմ :

ՄԱՐԿՈՍ ԸՆԹԱՍՏԱՆ

(Մարկոս) Գլուխ 1 :

(Քրիստոսը ընկալեց Սեբեդի իմ վեհաբանի, որ իմ ձեռնադրանքիս կողմից ընկալու, ու իմ մատուցանելուս պատերազմելու կրտսերվեցուն է :

2 Այն իմ ողորմութիւնս՝ ու իմ պարիսպս՝ ապաւենս՝ ու իմ փրկիչս է. իմ յուսացած վաճանս է, որ իմ ժողովուրդս ինձի կընկալանդեցուն է :

3 Այլ Սեբ, մարդը ի՞նչ է որ դուն կըձանչնաս. ու մարդուն զաւակը՝ որ աւնիկա կը յարգես :

4 Մարդը ունայնութեան պէս է, անոր օրերը անցնող շուքին պէս են :

5 Այլ Սեբ՝ խոնարհեցուր քու երկինքի, ու վար իջիր. լեռներուն դպչէ ու կըմխան :

6 Փայլատակը նետէ ու ցրուէ անոնք. քու նետերդ խրկէ ու շփոթցուր անոնք :

7 Վ՛ու ձեռքդ վերէն խրկէ ու ազատէ իս. փրկէ իս մեծ ջուրերէն, ու օտար զաւակըներուն ձեռքէն :

8 Արոնց բերանը ունայնութիւն կըխօսի. ու անոնց աջ ձեռքը ստութեան աջ ձեռք է :

9 Այլ Աստուած՝ քեզի նոր երգ պիտի

երգեմ . տասը թելէ սաղմոսարանով սաղմոս պիտի ըսեմ քեզի :

10 Թագաւորներուն փրկու թիւն տըւողը , ու իր Դաւիթ ծառան շար սուրէն փրկողը ան է :

11 Իս ազատէ ու օտար զաւկրներուն ձեռքէն փրկէ . որոնց բերանը ունայնութիւն կըխօսի , ու անոնց աջ ձեռքը ստութեան աջ ձեռք է :

12 Որ մեր որդիքը իրենց երիտասարդութեան մէջը տունկերու պէս մեծնան , — մեր աղջիկները պալատներու գեղեցիկ փորված անկիւնի պէս ըլլան :

13 Որ մեր ամբարները լցվին՝ — ամէն տեսակ կերակուրները բղխեն . — մեր ոչխարները հազար՝ տասը հազար ըլլան մեր արտերուն մէջը :

14 Որ մեր կովերը յղի ըլլան , ու ամենեին բռնութիւնով մտնել ու ելլել և աղաղակ չըլլայ մեր հրապարակներուն մէջը :

15 Երանի՛ աս վիճակին մէջը եղող ժողովուրդին . երանի՛ ան ժողովուրդին , որուն Ըստուածը Տէրն է :

ՍԵՂՍՈՍ • ՆՆԵ :

Գաւ-լի գովա-լեան Սողոմոն :

Քեզ պիտի բարձրացունեմ ո՛վ իմ
Լստուածս , որ թագաւոր ես . ու քու
անունդ յաւիտեանս յաւիտենից պիտի
օրհնեմ :

2 Լմէն օր քեզ պիտի օրհնեմ , ու քու
անունդ յաւիտեանս յաւիտենից պիտի
գովեմ :

3 Սեժ ու շատ օրհնեալ է Տէրը . ու
անոր մեծու թիւնը անքննելի է :

4 Լզգ ազգի պիտի գովէ քու գործքերդ .
ու քու զօրութիւններդ պիտի պատմէ :

5 Քու փառքիդ ու մեծութեանդ վայել-
չութիւնը , ու քու հրաշալի գործքերդ
պիտի զրուցեմ :

6 Ու քու ահաւոր գործքերդ պիտի խօ-
սին , ու ես քու մեծութիւնդ պիտի պատ-
մեմ :

7 Քու մեծ բարերարութեանդ յիշա-
տակը պիտի պատմեն , ու քու արդարու-
թիւնովդ պիտի ցնծան :

8 Ողորմած ու գթած է Տէրը . երկայ-
նամիտ ու բազումօղորմ է :

9 Տէրը ամէնուն բարի է . ու անոր ու-
ղորմութիւնները բոլոր իր գործքերուն
չոայ է :

10 Այլ Տէր , քու բոլոր գործքերդ քե-
նէ պիտի գոհանան . ու քու սուրբերդ քեզ
պիտի օրհնեն :

11 Վու թագաւորութեանդ փառքը
պիտի խօսին , ու քու զօրութիւններդ պի-
տի պատմեն ,

12 Ար անոր զօրութիւնը ու անոր թա-
գաւորութեանը փառաւոր մեծութիւնը
մարդոց զաւկրներուն իմացունեն :

13 Վու թագաւորութիւնդ յաւիտե-
նական թագաւորութիւն է . ու քու իշխա-
նութիւնդ ազգէ մինչև ազգ :

14 Տէրը կը հաստատէ բոլոր վար ինկած-
ները , ու բոլոր վար ծռածները կը կանգ-
նեցունէ :

15 Ամենուն աչիւնները քեզի կսպասեն ,
ու ժամանակին անոնց կերակուրը իրենց
կուտաս :

16 Վու ձեռքդ կը բանաս , ու ամէն
կենդանին բարութիւնով կը կշտացունես :

17 Արդար է Տէրը բոլոր իր ճամբանե-
րուն մէջը , ու ողորմած է բոլոր իր գործ-
քերուն մէջը :

18 Տէրը բոլոր ինքը կանչողներուն՝ բո-
լոր ինքը ճշմարտութիւնով կանչողներուն
մօտ է :

19 Ան իրմէն վախցողներուն կամքը կը-
նէ , ու անոնց աղաղակը կը լսէ ու կը փրկէ
անոնք :

20 Տէրը բոլոր ինքը սիրողները կը պա-
հէ , թէպէտ բոլոր ամբարիշտները կը կոր-
սընցունէ :

21 Իմ բերանս Տէրոջը գովութիւնը
պիտի խօսի , ու ամէն մարմին անոր սուրբ
անունը յաւիտեանս յաւիտենից պիտի
օրհնէ :

ՍԱՂՄՈՍ • ՉԴԵՂ :

Մէլուիա • Օրհնէ՛ Տէրը . ո՛վ իմ ան-
ձրս :

2 Տէրը պիտի օրհնեմ իմ կեանքիս մէջը .
քանի որ ողջ եմ իմ Մատուծուս սաղմոս
պիտի ըսեմ :

3 Մի յուսաք իշխաններուն՝ մարդոց
զաւկրներուն , ինչու որ անոնց քով
փրկութիւն չի կայ :

4 Մնոր հոգին կելէ . ան իր հողը կը
գառնայ . ան օրվանը մէջ անոր խորհուրդ-
ները կը կորսըլին :

5 Երանի՛ անոր , որուն օգնականը Իս-
րայէլին Մատուածն է . որուն յոյսը իր
Տէր Մատուծուն վրայ է .

6 Ար ան երկինքը ու երկիրը , ծովը ու
բոլոր անոնց մէջը եղածը ստեղծեց . ճըշ-
մարտութիւն կը պահէ յաւիտեան .

7 Իրաւունք կընէ զրկըվածներուն , ու
հաց կուտայ անօթիներուն . Տէրը կար-
ձրկէ կապվածները .

8 Տէրը կը բանայ կուրերուն աչքները .
 Տէրը կը կանգնեցունէ վար ծռածները .
 Տէրը կը սիրէ արգարները .

9 Տէրը կը պահէ պանդուխտները . կը
 հաստատէ որբերը ու որբեւարիները . բայց
 ամբարիշտներուն ճամբան կը մոլորեցունէ :

10 Տէրը պիտի թագաւորէ յաւիտեան՝
 քու Աստուածդ՝ ո՛վ Սիօն , ազգէ մինչև
 ազգ : Ալէլուիա :

ԱՆՊ ՍՊՍ . ՆԻՍ :

Գովեցէք Տէրը . ինչու որ՝ բարի է մեր
 Աստուծուն սաղմոս ըսելը . ինչու որ՝
 քաղցր ու վայելուչ է օրհնութիւնը :

2 Տէրը կը շինէ Երուսաղէմը . Իսրայէլին
 ցրուածները կը ժողովէ :

3 Սրտով կոտորածները կը բժշկէ ու ա-
 նոնց խոցերը կը կապէ :

4 Աստղերուն թիւը կը համրէ . անոնց
 բոլորը անունովն ին կը կանչէ :

5 Ս՛եծ է մեր Տէրը ու զօրութիւնը
 չատ է . անոր իմաստութեանը չափ չի
 կայ :

6 Տէրը կը հաստատէ խեղճերը . ու ամ-
 բարիշտները մինչև հողը կը խոնարհեցու-
 նէ :

7 Երգեցէք Տէրոջը գոհութիւնով ,
 մեր Աստուծուն սաղմոս ըսէք քնարով :

8 Որ ան երկինքը ամպերով կըծածկէ ,
անձրև կըպատրաստէ երկրիս համար . խոտ
կըբուսցունէ լեռներուն վրայ .

9 Որ անասուններուն իրենց կերակուրը
կուտայ . « ագռաւին ձագերուն , որ կը
կանչեն :

10 Ան՝ ձիուն զօրութիւնը չուզեր . զօ-
րեղ մարդուն սրունքներուն չի հաւնիր :

11 Տէրը իրմէն վախցողներուն ու իր ո-
ղորմութեանը յուսացողներուն կըհաւնի :

12 Ո՛վ Երուսաղէմ , գովէ Տէրը . օրհ-
նէ քու Աստուածդ՝ ո՛վ Սիօն :

13 Ինչու որ ան քու դռներուդ նիգերը
ամուրցուց . « քու զակրներդ քու մէջդ
օրհնեց :

14 Ան քու սահմաններուդ խաղաղու-
թիւն կուտայ , « քեզ պարարտ ցորենով
կըկշտացունէ :

15 Ան իր խօսքը երկրին մէջը կըխրկէ ,
իր խօսքը շատ շուտով կըվազէ :

16 Ան բուրդի պէս ձուն կուտայ , « Ե-
ղեամբը մոխիրի պէս կըցանէ :

17 Ի՛ր սառը կտորվանքներու պէս կը
նետէ . ու անոր ցուրտին դէմ ո՛վ կընայ
կենալ :

18 Ան իր խօսքը կըխրկէ ու կըհալեցու-
նէ անոնք . իր հովը փչել կուտայ՝ ու ջու-
րեր կըվազեն :

19 Ան իր խօսքը Յակոբին կըպատմէ ,

— իր օրէնքները ու իրաւունքները՝ Իսրայէլին :

20 Ինչաւ աղգի մըն ալ ասանկ չըրաւ , ու անոնք անոր դատաստանները չի՛ճանչցան : Ըլէլուիա :

ՍՇՂ ՄՈՍ . ՆԻՍԷ :

Ըլէլուիա . Օրհնեցէք Տէրը երկինքէն .
 1 օրհնեցէք ան բարձրը տեղերուն մէջը :

2 () օրհնեցէք անիկա՝ ո՛վ բոլոր հրեշտակներ . օրհնեցէք անիկա՝ ո՛վ անոր բոլոր զօրքերը :

3 () օրհնեցէք անիկա՝ ո՛վ արեգակ ու լուսին , օրհնեցէք անիկա՝ ո՛վ բոլոր փայլուն աստղեր :

4 () օրհնեցէք անիկա՝ ո՛վ երկինքի երկինք . ու երկինքէն վեր եղող ջուրեր :

5 Թող Տէրօջը անունը օրհնեն . ինչու որ ան հրամայեց՝ ու անոնք ստեղծվեցան :

6 Ու անոնք յաւիտեանս յաւիտենից հաստատեց . օրէնք տրւաւ որ չանցնիր :

7 () օրհնեցէք Տէրը երկիրէն՝ ո՛վ վիշապներ , ու բոլոր անդունդներ ,

3 Արակ ու կարկուտ՝ ձիւն ու մուխ , — անոր խօսքը կատարող մրրկալից հով :

9 Ի եռներ՝ ու բոլոր բլուրներ , պտղատու ծառեր ու բոլոր մայրի ծառեր ,

10 Վազաններ՝ ու բոլոր անասուններ , սողացողներ՝ ու թռչաւոր թռչուններ ,

11 Երկրի թագաւորներ՝ ու բոլոր ազգեր . իշխաններ՝ ու երկրի բոլոր դատաւորներ ,

12 Երիտասարդներ՝ ու աղջիկներ , ծերեր տղաքներուն հետ ,

13 Թող Տէրոջը անունը օրհնեն . ինչու որ՝ մինակ անոր անունը բարձր է . անոր փառքը երկինքին ու երկրին վրան է :

14 Ու ան իր ժողովուրդին եղջիւրը բարձրացուց , « Ե ան իր բոլոր սուրբերուն իրեն մօտ եղող ժողովուրդին՝ Իսրայէլին զաւկըններուն օրհնութիւնն է : Ալէլուիա :

ՍԵՂՄՈՍ ԾՆՈՒԹՅԱՆ

Ալէլուիա . Տէրոջը նոր երգ երգեցէք . « անոր օրհնութիւնը սուրբերուն ժողովքին մէջը :

2 Իսրայէլը թող ուրախ ըլլայ իր Ստեղծողէն . Սիօնին զաւկընները թող ցնծան իրենց թագաւորէն :

3 Թող անոր անունը պարով օրհնեն . դափով ու քնարով սաղմոս թող ըսեն անոր :

4 Ինչու որ Տէրը իր ժողովուրդին կը հաւնի . խեղճերը փրկութիւնով պիտի փառաւորէ :

5 Թող սուրբերը ուրախանան փառ-

քով , — իրենց անկողիններուն մէջը ցըն-
ծան :

6 Աստուծոյ գովութիւնները անոնց
բերնին մէջը թող ըլլայ . — երկու բերա-
նով սուր՝ անոնց ձեռքին մէջը ,

7 Որ հեթանոսներէն վրէժխնդրութիւն
առնեն , ու ժողովուրդները պատժեն .

8 Որ անոնց թագաւորները շղթանե-
րով կապեն , ու անոնց աղնուականները
երկաթէ ոտնակապերով .

9 Որ անոնց վրայ գրուած դատաստանը
ընեն . աս անոր բոյր սուրբերուն փառքն
է : Ալէլուիա :

ՍՆՂ ՄՈՍ ՆՕ :

Ալէլուիա . ()ր՛նեցէք Աստուած իր
սրբութեան տեղին մէջը . օր՛նեցէք ան-
սիկա իր զօրութեանը հաստատութեանը
մէջը :

2 ()ր՛նեցէք անսիկա իր մեծ գործքերուն
համար . օր՛նեցէք անսիկա իր մեծ փառա-
ւորութեանը շափ :

3 ()ր՛նեցէք անսիկա փողի ձայնով .
օր՛նեցէք անսիկա սաղմոսարանով ու քնա-
րով :

4 ()ր՛նեցէք անսիկա դափով ու պարով .
օր՛նեցէք անսիկա թելէ նուագարաններով
ու սրինգով :

5 Օրհնեցէք անիկա մեծաձայն ծնծղաներով , օրհնեցէք անիկա մեծ ցնծութեան ծնծղաներով :

6 Ամէն շունչ ունեցող թող Տէրը օրհնէ : Աւելուիա :

ԱՆԻՍ





